

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ՆԱՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԸ
(ՓԻԼԻՍՈՓԱՅԱՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՆՈՒԹՅՈՒՆ)**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Թ.00.01- «Փիլիսոփայություն» մասնագիտություն
փիլիսոփայական գիտություններին էթիկանաժողով
գիտական աստիճանի հայցման**

Գիտ.դեկ.՝ փ.գ.դ., պրոֆ. Ս.Ա.Զաքարյան

ԵՐԵՎԱՆ-2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ2

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ

1.1 Ի՞նչ է ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .
 ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ22

1.2 ՀԱՅՈՑԻՆՔՆՈՒԹՅԱՆ (ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՔԵՐՆՈՒՏԵՍԼԱԿԱՆՆԵՐԸ38

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳՇՈՒՄ

2.1 «ՈՎՔԵ՞Ր ԵՆՔ ՄԵՆՔ». ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ42

2.2 ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ73

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ **ԿՐՈՆԻԵՎԼԵԶԻ**

ՏԵՍԼԱԿԱՆԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳՇՈՒՄ

3.1 ԿՐՈՆԻԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ 100

3.2 ԼԵԶԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ167

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ190

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ197

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Հարափոփոխ աշխարհի զարգացմանը համահունչ ազգային ինքնուրույն հարցը շարունակում է մնալ արդիական, քանզի համաշխարհայնացման

համատեքստում տեղի ունեցող փոփոխություններն անընդհատ վերածնակերպում են **«համաշխարհային»** և **«ազգային»** իրականությունը, փոխում աշխարհի պատկերը՝ առաջադրելով անհատական և ազգային նույնականություն, ազգային կյանքի կազմակերպման նոր չափորոշիչներ: Եթե նախորդ դարաշրջաններում հարացույցները փոփոխվել են դանդաղ, ապա արդի ժամանակներում դրանք փոխվում են արագորեն՝ աշխարհին տալով փոխակերպվող (տրանսֆորմացվող) բնույթ: Տարածության ու ժամանակի, անհատի ու հասարակության ընկալումներն անընդհատ փոխվում են՝ ճյուղավորելով սոցիալական իրականությունը և այն դարձնելով մասնիկային, խճանկարային: Փոփոխվող սոցիալական իրականությունն առաջ է քաշում մարդու տեղի և դերի սահմանման, ինքնանույնականության, «Ես»-ը «Ուրիշ»-ից տարբերակելու հարցեր, որոնք ազդում են անհատական նույնականության, ապա՝ ազգային ինքնության¹ ճգնաժամի վրա: Իր տեղն ու դերը

¹ Գոյություն ունեն «ինքնություն» եզրույթի տարբեր սահմանումներ: Ինքնությունը լայն իմաստով սահմանվում է «...իբր հակաբեռնալուծեան: Այն տուեալը, որով որևէ էակի նկատմամբ են այլ՝ բոլոր միևս էակները, եւ ինքը այլ՝ բոլոր միևսների նկատմամբ» (տե՛ս **2Էքիեան Լ.**, Հայի ինքնություն, «Ինքնության հարցեր. Տարեգիրք», Չանգակ-97 Եր., 2002, էջ 33), Ինքնություն, նույնականացում, նույնականություն հասկացությունները, թեև երբեմն համարվում են հոմանիշներ, սակայն դրանք հասկացության իրենց ծավալով տարբեր են (տե՛ս **Պետրոսյան Ս.**, Ինքնության հիմնահարցի փիլիսոփայական վերլուծության որոշ խնդիրներ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 136.4, Եր., 2012, էջ 3-15): Ինքնությունը նաև սահմանվում է որպես «յուրահատուկ սոցիալական հայելի, որի շնորհիվ մարդը տեսնում է ոչ միայն ինքն իրեն, այլև իր Երևությունը կազմավորող այն հանրային անդրանցական արժեքները, որոնք ներկայացնում են նույնականացման կոլեկտիվ Երևությունների ողջ համակարգը» (տե՛ս **Սողոմոնյան Գ.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 141.4, Եր., 2013, էջ 14): Թեև հայոց ինքնության պահպանման համատեքստում որպես ազգային հատկություն նշվում է **առարկայնացված աշխարհին սեփական կերպարի հաղորդումը**, այլ կերպ՝ կերպանավորումը (տե՛ս **Էդ. Ա. Հարությունյան**, Ազգային ինքնություն և կյանքի

փնտրող անհատն առաջադրում է այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ **ն՞վ է ինքը, ի՞նչ մշակույթի է պատկանում, ազգային ի՞նչ հոգեկերտվածքի, լեզվի, պատմական անցյալի և կրոնի կրող է, որքանն՞վ են արդեն իսկ տրված ինքնանույնականության այդ կաղապարները կազմավորում այնպիսի խմբային «Մենք», որը տարբերվում է «Նրանք»-ից՝ «Ուրիշ»-ից: Զամաշխարհային իրականությունը, իր հերթին, անհատական նույնականության այս ընթացքը դարձնում է խրթին ու անորոշ, քանզի փորձում է ստեղծել «Մենք» առանց հակադրության, առանց «Ուրիշ»-ի՝ որպես գործիք օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը, միջազգային բաց փոխհարաբերությունները, կյանքի կազմակերպման հարմարավետ միջավայրը, մշակութային համահարթեցումը: Ինչպես նկատում է Է. Ա. Զարոնյանը՝ «Նույնականություն» հասկացությունը արտահայտում է մարդու ինքնագիտակցության պրոբլեմային իրավիճակը: Բանն այն է, որ մարդիկ նույնականության մասին հիշում են այն ժամանակ, երբ նվազում է սեփական պատկանելիության մասին վստահությունը, երբ չգիտեն կամ չեն կարողանում շրջապատին համոզել, որ հասարակության մեջ իրենց տեղն ու դիրքը**

մշակույթ, «Մակմիլան Արմենիա» հրատ., Եր., 2004, էջ 21), սակայն հիշյալ բնորոշումը նաև դիպուկ է արտահայտում հատկապես ազգային ինքնություն բուռն էությունը: Ավելորդ չէ նշել նաև, որ ամբողջ աշխարհում ազգային ինքնության հիմնահարցը՝ հասկացության սահմանումից մինչև ազգային ինքնության կառուցվածքի վերլուծություն, գտնվում է հոլմանիտար տարբեր գիտակարգերի ու շաղկապության կենտրոնում (տե՛ս Smith A. D., National identity (Ethnonationalism in Comparative Perspective). – University of Nevada Press, 1993.), «Ո՞վ ենք մենք» հիմնահարցի ձևակերպում (տե՛ս Huntington S. P. Who Are We: The Challenges to America's National Identity. – Simon & Schuster, 2004) և ազգային ֆիլմերում ու կյանքի այլ ոլորտներում ինքնության փնտրում (Տե՛ս David Martin-Jones, Deleuze, Cinema and National Identity: Narrative Time in National Contexts, Edinburgh University Press, 2006):

օրինական են»²: Ինքնուրույն «օրինականության» հարցը ինքնանույնականության կռվաններ փնտրող անհատի համար վեր է հառնում որպես **ազգային մարդու և համամարդու, համաշխարհային քաղաքացու** կերպարների միջև ընտրության երկընտրանք: Նույնականության հիմք ընդունելով համաշխարհային քաղաքացու և ոչ ազգային մարդու մոդելները, ազգային ինքնությունը ապրող, շարժուն մեծությունից վերածվում է անշարժ, չզարգացող մեծության, որն անցյալի **վկան** է, բայց ոչ ներկան **վերապրողը**, իսկ ազգային մարդը՝ որպես ինքնանույնականության մոդել, սպառնում է իրեն, երբ անհատը առերեսվում է մյուս խնդրին՝ համաշխարհային և լոկալ աշխարհների հակադրմանը: **Վերոնշյալ**

գործոններն էլ **արդիական են** դարձնում ազգային ինքնությունը վերարժևորելու և փոփոխվող իրականության լուսածիրում այն ուսումնասիրելու հարցերը: Մաշկի գույնը, մարմնի գեներտիկ կառուցվածքը այն չափորոշիչները չեն, որոնցով կարելի է որոշել անհատի ինքնությունը: Անհատն ինքն է ընտրում սոցիոմշակութային այն դիմակը, որն առավել է արտահայտում իր գոյության կերպը: Եթե նախկինում էթնիկ ինքնությունը որոշակիորեն սահմանում էր մարդու տեղն ու դերը համաշխարհային իրականության մեջ, ապա ներկայիս հասարակության համար անհատի գոյության վավերագրողը քաղաքացիությունն է, անձնագիրը: Բացի դրանից՝ անհատի սոցիալական ինքնությունը կառուցվում է նաև վիրտուալ փոխհարաբերությունների՝ համացանցի դաշտում և ձևավորում այնպիսի ինքնություն, որը կարելի է

² **Չարությունը** **Էդ. Ա.**, Մարդկային կեցության այլ կերպարներ, ԵՊՅ հրատ., Եր., 2018, էջ 118:

անվանել **«վիրտուալ ինքնուրույն»**: Այս իմաստով ազգային ինքնուրույն հիմքերը դառնում են էլավելի երերուն՝ անհրաժեշտություն առաջացնելով պատշաճ ուշադրություն դարձնել ազգային ինքնուրույն տարրերին՝ հոգեկերտվածքին, կրոնին, լեզվին, մշակույթին և պատմական անցյալին, դրանք վերաիմաստավորել և դարձնել գրավիչ ե, որպեսզի դրանց հիմքով մշակվեն ազգային նույնականությունն ապահովող այնպիսի մեխանիզմներ, որոնք ունեն ներքին շարժ և քարացած չեն: Ազգային ինքնուրույն արդիականացման հարցը ենթադրում է ոչ միայն անցյալի մշակույթի պահպանում, այլև ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան արդիականացում: Բնականաբար, հնարավոր չէ ներկայումս ապրել անցյալով, սակայն կարևոր է անցյալը մեկնաբանել և վերաիմաստավորել ներկայի լույսի ներքո: Ազգային մարդու նկարագրից չօտարանալով, այլ ազգերին չձուլվելով պատճառներից զատ՝ կարևոր է նաև հաշվի առնել ինքնուրույն արդիականացման **ներքին հիմքերը**, որոնք սերտորեն առնչվում են և՛ նույնականության մեխանիզմների մշակմանը, և՛ նոր ու հին արժեքների համապատասխանեցմանը, և՛ ազգային այնպիսի կյանքի կառուցմանը, որը հիմնվում է անցյալի թերությունների և առավելությունների ճանաչողություն վրա:

Արդիականացման այս համատեքստում արժեքավոր է հայի ինքնուրույն պատմությունը՝ յուրաքանչյուր փուլի, հատկապես հայոց համար բեկումնային ու պատմական իրադարձություններով հարուստ Լուսավորականության դարաշրջանի ուսումնասիրությունը: Կրելով եվրոպական Լուսավորականության ազդեցությունը՝ հայ

լուսավորական շարժումը հանդես եկավ հայոց իրականությունը և լուսավորական գաղափարներով վերափոխելու և ազգային կյանքը կազմակերպելու մշակութային նոր սկզբունքներով: Ազգային մարդու նոր նկարագիրը, նույնականության լուսավորական մեխանիզմները, լուսավորական գաղափարախոսությունը ամբողջ ազգային ինքնության հիմնական տարրերի արդիականացումը դարձան հիմք հայոց ինքնության լուսավորական նախագծի համար: **«Ինքնության Լուսավորական նախագիծ»** ասելով՝ նկատի ունենք ազգային ինքնության մասին հայ լուսավորականների պատկերացումների ու հայացքների ամբողջությունը, հին ինքնության վերականգնումը, նոր գաղափարների տեսանկյունից ինքնության բաղադրատարրերի վերաիմաստավորմանն ուղղված տեսական մշակումների համախմբությունը: Անշուշտ, վերջինս կարող ենք անվանել նաև **ինքնության լուսավորական հարացույց**, սակայն տվյալ դեպքում նախընտրել ենք **«նախագիծ»** եզրույթը հետևյալ նկատառումներով՝ ա/ փիլիսոփայական գրականության մեջ ընդունված է «մոդեռնի լուսավորական նախագիծ» արտահայտությունը, որը մասնավորապես գործածել է Յ. Չաբերմասը «Մոդեռնիստական ավարտ նախագիծ» աշխատությունում³: բ/ Չարացույցը հիմնվում է արդեն իսկ գոյություն ունեցող որոշակի գործունեների վրա, իսկ նախագիծը մշակվում է հընթացս՝ որպես նախապես որդեգրված սկզբունքների և տեսլականների իրականացման

³ Չաբերմասը մոդեռնիստական նախագծի էությունը համարում է օբյեկտիվացող գիտությունը, իրենց բազմաձևության մեջ բարոյականության, իրավունքի, արվեստի համընդհանուր հիմքի պահովումը, ճանաչողական հնարավորությունների «ազատագրումը»: Այս ամենի նպատակը առօրյա կյանքը բանականության հիմքով կառուցելն է (տե՛ս **Хабермас Ю.,** Модерн-незавершенный проект, էջ 17 <http://www.kph.npu.edu.ua/!e> հասանելի է՝ 04.01.2019):

ծրագիր 4:

Նշենք, որ

Լուսավորականության դարաշրջան ասելով նկատի ունենք հայոց պատմության XVIII երկրորդ կեսից սկսած մինչև XIX դարավերջը ընդգրկող ժամանակահատվածը, որը բաժանվում է երեք՝

Լուսավորականության գաղափարախոսության

ձևավորման փուլի (XVIII երկրորդ կես), զարգացման ու

ծաղկման փուլի դարի (XIX 50-70-ական թվականներ) և

ավարտի կամ կերպափոխության փուլի (XIX 80-90-ական

թվականներ)⁴: Լուսավորականությունը հայոց

պատմության այն ժամանակաշրջանն է, որը

բնութագրվում է մշակութային զարթոնքով,

ռազմաքաղաքական, սոցիալական բախտորոշ

իրադարձություններով, ազգային ազատագրական

պայքարով, ինչը նշանակում է, որ այդ դարաշրջանի

վերաբերյալ ցանկացած ընդհանրացնող

ուսումնասիրությունն չի կարող լինել

ամբողջական ու ավարտուն: Այս դրոյթը

մասնավորապես վերաբերում է մեզ հետաքրքրող

հիմնահարցի հետազոտությանը, որովհետև այս

ժամանակահատվածում հանդես են եկել հայ

տեսական-փիլիսոփայական մտքի բազում երևելի

մտածողներ ու գործիչներ, որոնցից

յուրաքանչյուրի հայացքների վերլուծությանը

կարելի է նվիրել առանձին մենագրություն:

Չասկանալով, որ գրեթե անհնար է մեկաշխատանքում

անդրադառնալ այդ ժամանակահատվածում ապրած ու

ստեղծագործած մտածողներին, գաղափարական-

փիլիսոփայական բոլոր ուղղություններին և

⁴ Գիտության փիլիսոփայության մեջ հարացույցը օգտագործվում է որպես նախադրյալների այնպիսի ամբողջություն, որով հնարավոր է սահմանել տեսությունը: Այս եզրույթի փիլիսոփայական բովանդակությունը հատկապես հարստացել է Բերգմանի և Կոլնի շնորհիվ: Չարացույցը հաճախ փոխարինվում է «աշխարհի պատկեր» հասկացության (տե՛ս «Философский энциклопедический словарь», ИНФРА-М., М., 2009, էջ 333):

⁵ Տե՛ս Սարգսյան Ա., Ուրվագիծ XIX դարի հայի մաստասիրության, «Վանեվան» հրատ., Եր., 2001, էջ 24:

հավուր պատշաճի ներկայացնել խնդրո առարկա
հարցի վերաբերյալ նրանց տեսակետները,
ինքնուրույն վերաբերող հիմնահարցերի
քննարկման ընթացքում փորձել ենք անդրադառնալ
այն մտածողներին, որոնք այդ հարցերի
վերաբերյալ ունեն նախագծային-կառուցիկ
տեսակետներ: Քննարկվող ժամանակահատվածում
ինքնուրույն վերաբերյալ ծավալված խոսույթը
(դիսկուրսը) ամբողջական ներկայացնելու համար
սույն աշխատանքում անդրադարձել ենք նաև
այնպիսի մտածողներին, որոնք «խիստ իմաստով»
լուսավորականներ չեն, սակայն ազգային
ինքնուրույն վերաբերյալ ունեն ուրույն
պատկերացումներ. նրանց տեսակետները մրցակցում
էին Լուսավորականների առաջադրած դրույթների
հետևոչ պակաս կարևոր էին:

Բնական է, որ
իրադարձություններով ու գաղափարներով
հարուստ այս ժամանակաշրջանը չէր կարող չդառնալ
հետազոտողների ու շահիրույթյան առարկա:
Չհետազոտողները տարբեր գիտակարգերի
տեսանկյունից կարևոր աշխատանք են կատարել
ժամանակաշրջանի իրողությունները
լուսաբանելու ու արժևորելու համար: Գնահատելով
բազում հետազոտողների գիտական
ձեռքբերումները՝ անդրադառնալով, սակայն,
հատկապես փիլիսոփայական
ուսումնասիրություններին, որոնք կարևոր
նշանակություն ունեն քննարկվող հիմնահարցի
տեսանկյունից: Պետք է նշենք, որ հայոց
ինքնուրույն վերաբերյալ
ուսումնասիրությունները կարելի է բաժանել
երկու մասի: Ուսումնասիրություններ, որոնք
առջնվում են հայ Լուսավորականությանը և
ուսումնասիրություններ, որոնք քննում են

ազգային ինքնուրույն տեսական հարցադրումները, հետազոտում ինքնուրույն հիմնահարցը հայ փիլիսոփայության լուսածիրում:

Անդրադառնալով XIX

դարի հայ լուսավորականության ուսումնասիրություններին՝ պետք է նշել, որ դրանք արժեքավոր են և բազմակողմանի: **Ա. Սարգսյանը** վերլուծել և ներկայացրել է դարաշրջանի փիլիսոփայական միտքը, շեշտադրել առանձին հիմնահարցեր, ինչպես օրինակ, կրոնի հիմնահարցը: Պարզորոշ դարձնելով **«կրոն»** եզրույթը՝ Ա. Սարգսյանն այն դիտարկել է նոր տեսանկյունով, այն է՝ վերարժևորել կրոնի դերը հայ ժողովրդի կյանքում, և պատմական փաստերն ու իրադարձությունները քննարկել հնարավորինս օբյեկտիվ⁶: Ա. Սարգսյանը վեր է հանել նաև XIX դարի հայ փիլիսոփայության հիմնական առանձնահատկությունները, վերլուծել ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը, նշել եվրոպական և հայ լուսավորական մտքի ընդհանրություններն ու տարբերությունները, փիլիսոփայական հիմնահարցերը քննարկել համակողմանիորեն՝ ստեղծելով ժամանակաշրջանի փիլիսոփայական մտքի ամբողջական պատկերը: Ա. Սարգսյանը որոշակիորեն անդրադարձ է կատարել նաև լուսավորական շրջանում ազգային նկարագրի ճանաչողության հարցին, կատարել կարևոր եզրահանգումներ: **Էդ. Շ. Ջարոնթյունյանն** անդրադարձել է լուսավորականության հիմնախնդիրներին հատկապես մատերիալիզմի և իդեալիզմի տեսանկյունից: Վեր հանել այդ երկուսի պայքարի առանձնահատկությունները հայ իրականության հոլովունում, վերլուծել հայ

⁶ Տե՛ս **Սարգսյան Ա.**, ժամանակակից հայ եկեղեցին (կրոնագիտական-ազգագիտական վերլուծություն), Եր., 1999:

փիլիսոփաների հայացքները ոչ միայն բուհ
 Յայաստանում, այլև՝ գաղթավայրերում⁷: Եդ. Շ.
 Յարոթյունյանը անդրադարձ է կատարել հատկապես
 XIX դարի առաջին կեսին: Վերլուծել է այնպիսի
 իմաստասերների, որոնք քիչ են ուսումնասիրվել:
 Ինչպես օրինակ՝ Գրիգոր Փեշտիմալճյան, Պողոս
 Մելիքշահյան, Անդրեաս Փափովիչ և այլք: **Ս.
 Սարգսյանը** XIX դարն ուսումնասիրել է հատկապես
մարդու հիմնահարցի տեսանկյունից: Ակնհայտ
 դարձնելով մարդու «փիլիսոփայական բնութագիրը»
 իր իսկ երկրյան մեջ՝ Ս. Սարգսյանը «ազգային
 մարդու» նկարագիրը դիտարկել է հայի միջոցով, վեր
 հանել կամքի, խղճի ազատության հարցերը և դրանք
 քննարկել փիլիսոփայական մարդաբանության
 համատեքստում⁸: Ս. Սարգսյանը մարդու հիմնահարցն
 ուսումնասիրել է համակողմանիորեն և կատարել
 այնպիսի արժեքավոր եզրահանգումներ, որոնք
 թույլ են տալիս ստանալ լուսավորականության
 շրջանում մարդու հիմնախնդրի սաղմնավորման ու
 զարգացման ամբողջական պատկերը: **Յր. Շաքարյանը**
 քննության առարկա է դարձրել Ա. Գարագաշյանի
 աշխարհայացքի հիմնական
 առանձնահատկությունները և ցույց տվել տվյալ
 դարաշրջանի գաղափարական հոսանքների միջև
 պայքարը⁹: Ա. Գարագաշյանի հայացքների
 համատեքստում Յր. Շաքարյանը
 ուսումնասիրության առարկա է դարձրել նաև
 աստվածաբանության դեմ պայքարը, արձանագրել այդ
 պայքարում մետաֆիզիկայի դերը, քննել ազգի ու
 պետության, սոցիալական հարցերի վերաբերյալ Ա.

⁷ Տե՛ս **Յարոթյունյան Ե. Շ.**, Յայ փիլիսոփայական միտքը XIX
 դարի առաջին կեսին, «Վանեվան» հրատ., Եր., 1965:

⁸ Տե՛ս **Սարգսյան Ս.**, Մարդու հիմնախնդիրը XIX դարի հայ
 փիլիսոփայական և հասարակական մտքում, «Վանեվան» հրատ., Եր.,
 2001:

⁹ Տե՛ս **Շաքարյան Յր.**, Ա.Մ. Գարագաշյանի աշխարհայացքը, ԵՊՅ
 հրատ., Եր., 1962:

Գարագաշյանի հայեցակետը: **Ա. Թևոսյանը** հետազոտել է Ա. Գարագաշյանի փիլիսոփայական հայացքները՝ ուշադրություն դարձնելով հատկապես տրամաբանության հարցերին¹⁰: **Ռ. Միրոնմյանը** հետազոտել է XIX դարը ինչպես առանձին հեղինակների, այնպես էլ պատմափիլիսոփայության տեսանկյունից՝ շեշտադրելով պատմության ճանաչողության և ուսավորական փիլիսոփայության առանձնահատկությունները¹¹: Ուսումնասիրության առարկա դարձնելով Ստ. Պալասանյանի հատկապես պատմափիլիսոփայական հայացքները՝ Ռ. Միրոնմյանը կարևոր եզրահանգումներ է կատարել պատմության, պետության, ազգի, եկեղեցու և մի շարք այլ հիմնահարցերի վերաբերյալ: Վերլուծվել են նաև ազգ-պետություն, ազգ-լեզու, ազգ-կրոն փոխհարաբերությունները՝ պալասանյանական ըմբռնումները¹²: **Լ. Սարվազյանն** ազգային ինքնության հարցը դիտարկել է ազգային-քաղաքակրթական ինքնության տեսանկյունից, նաև այս համատեքստում ուսումնասիրել Մ. Օրմանյանի հայացքները, դրանք դիտարկել փիլիսոփայական աշխարհայացքի տեսանկյունից¹³: Անցում կատարելով ազգային ինքնության հիմնահարցի փիլիսոփայական վերլուծությանը՝ պետք է նշել, որ վերոնշյալ հիմնահարցը և՛ տեսական, և՛ հայոց փիլիսոփայության տեսանկյունից իմաստասերների ուշադրության կենտրոնում է: Այս իմաստով կատարվել և կատարվում են փիլիսոփայական արժեքավոր հետազոտություններ:

¹⁰ Տե՛ս **Թևոսյան Ա.**, Ա.Մ. Գարագաշյանի փիլիսոփայական և տրամաբանական հայացքները, ԳԱԱ հրատ., Եր., 1962:
¹¹ Տե՛ս **Միրոնմյան Ռ.**, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդական վերլուծություն, Նոյյան տապան հրատ., Եր., 2003:
¹² Տե՛ս **Միրոնմյան Ռ.**, Ստեփանոս Պալասանյան, (Պատմափիլիսոփայական հայացքները), «Լուսաբաց» հրատ., Եր., 2009:
¹³ Տե՛ս **Սարվազյան Լ.**, Մաղաքիա Օրմանյան, Վերոպրիևտ, Եր., 2013:

Է դ. Ա. Յարո լ թ յ ո լ ն յ ան ը ու ս ու լ մ ն աս ի ր ու մ Է ազգային ինքնու լ թ յ ո լ ն ը հատկապես իր ներքին շարժով, պատմափիլիսոփայական և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում, վերհանում հայոց ինքնու լ թ յ ան ը նթացքի խնդրահարույց կողմերը, մատնանշում ազգային ինքնու լ թ յ ան մեջ պատճառի և հետևանքի Էական, ինքնաճանաչողական կապը¹⁴: Վերլուծելով հայոց ինքնու լ թ յ ան հիմնահարցերը ազգային ինքնու լ թ յ ան տեսական-փիլիսոփայական համատեքստում՝

Է դ. Ա. Յարո լ թ յ ո լ ն յ ան ը առաջադրում և հիմնավորում Է ազգային կեցութայնն ու ազգային նկարագրին առնչվող տարաբնույթ հարցադրումների լուծումները: Յայ փիլիսոփայութայնն համատեքստում հայոց ինքնու լ թ յ ան հարցը ևս արդիական Է և պատշաճ ու շարժարութայնն Է արժանանում: **Ս. Չաքարյան ը** հայոց ինքնու լ թ յ ո լ ն ն ու ս ու լ մ ն աս ի ր ու մ Է հատկապես հայ փիլիսոփայութայնն պատմութայնն հոլովոյթում, հայ փիլիսոփայութայնն պատմութայնն ամբողջական ընթացքի մեջ՝ հետազոտման առարկա դարձնելով ինչպես առանձին հիմնահարցերը, այնպես Էլ հայկական ինքնու լ թ յ ան վերաբերյալ հայ իմաստասերների տեսակետները¹⁵: Ս. Չաքարյան ը հայոց ինքնու լ թ յ ան հարցը դիտարկում Է և՛ հայկական Էպոսի, և՛ բարոյագիտական ու կրոնական հարցադրումների համատեքստում, նոր տեսանկյունով վերհանում հատկապես միջնադարյան հայ իմաստասերների փիլիսոփայական հայացքները: Իսկ հայ փիլիսոփայական մտքի աննկատ կամ թերի

¹⁴Տե՛ս **Յարո լ թ յ ո լ ն յ ան Է դ. Ա.**, «Ազգային ինքնու լ թ յ ո լ ն ն կյանքի մշակույթ», «Մակմիլան-Արմենիա» հրատ., Եր., 2004:

¹⁵Տե՛ս **Չաքարյան Ս.**, Տաթևի համալսարանի իմաստասերները. Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Առաքել Սյունեցի, Մաթեոս Ջուղայեցի, «Լիմոնշ» հրատ., Եր., 2018:

ուսումնասիրված կողմերը հատկապես
 ներկայացված են **Յ. Միրզոյանի**
 ուսումնասիրություններում¹⁶: Միրզոյանը վեր է
 հանում հայ փիլիսոփայության նոր
 տեսանկյուններ, վերլուծում հնատիպ
 սկզբնաղբյուրներ, ազգային ինքնության
 պահպանման տեսանկյունից քննական
 վերլուծության ենթարկում, օրինակ, ազգային
 գրականության պատմության ադրբեջանական
 տեսանկյունները և այլն: Սփյուռքահայի
 ինքնությանը ևս հետազոտողների ուշադրության
 առանցքում է: Այն դիտարկվում է և՛ առանձին
 հիմնախնդիրների, և՛ հայ գրականության ու
 փիլիսոփայության տեսանկյունից:

Վերոնշյալ

հետազոտություններն անմիջականորեն կամ
 միջնորդավորված ձևով առնչվում են հայոց
 ինքնությանը, տեսական, մեթոդաբանական ու
 փաստական հիմք ստեղծում հայոց ինքնության
 լուսավորական նախագծի ուսումնասիրության
 համար: Ըստ արժանվոյն գնահատելով
 հետազոտողների կատարած աշխատանքը՝ հարկ է
 նշել, որ դրանք նպատակ չունեն համբողջական ձևով
 լուսաբանել և գնահատել ազգային ինքնության
 մասին հայ լուսավորականների հայացքները, ցույց
 տալ հայոց ինքնության կրոնական ու
 լուսավորական հարացույցների
 ընդհանրություններն ու տարբերությունները,
 ինքնության տեսանկյունից դիտարկել
 ժամանակաշրջանի պատմամշակութային և ազգային
 իրողությունները: Սույն
 աշխատանքի հետազոտության **օբյեկտը** հայոց
 ինքնությունն է: Հետազոտության **առարկան**՝ հայոց

¹⁶ Տե՛ս **Միրզոյան Յ.**, Հոսիաններս Մրքուզ Ձուղայեցի, ԵՊՀ հրատ.,
 Եր., 2001:

ի ն ք ն ու թ յ ա ն ւ ու ս ա վ ո թ յ ա ն ն ախազ ծ ի
վ ե թ լ ու ծ ու թ յ ու ն ն ու առանձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե թ ի
վ ե թ հ ա ն ու մ ը : Յ ա յ ո ց ի ն ք ն ու թ յ ա ն
ւ ու ս ա վ ո թ յ ա ն ն ախազ ծ ի ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ա ն
ն ա պ ա տ ա կ ն է հ ե տ ա զ ո տ ե լ ա զ գ ա յ ի ն ի ն ք ն ու թ յ ա ն հ ա թ ց ը
հ ա յ ւ ու ս ա վ ո թ յ ա ն մ տ ք ի հ ա մ ա տ ե ք ս տ ու մ , ց ու յ ց
տ ա լ ն ախ ո թ դ դ ա թ ե թ ու մ և ւ ու ս ա վ ո թ յ ա ն
դ ա թ ա շ ը ջ ա ն ու մ կ առ ու ց ա թ կ վ ա ծ հ ա յ ո ց ի ն ք ն ու թ յ ա ն
հ ա թ ա ց ու յ ց ն ե թ ի ը ն դ հ ա ն թ ու թ յ ու ն ն ե թ ն ու
տ ա թ ե թ ու թ յ ու ն ն ե թ ը , վ ե թ հ ա ն ե լ XIX դ ա թ ու մ հ ա յ ո ց
ի ն ք ն ու թ յ ա ն ա թ դ ի ա կ ա ն ա ց մ ա ն հ ի մ ն ա կ ա ն
պ ա տ ճ առ ն ե թ ն ու մ ի տ ու մ ն ե թ ը : Ա յ դ ն ա պ ա տ ա կ ի ն
հ ա ս ն ե լ ու հ ա մ ա թ ա ն հ թ ա ժ ե շ տ ե ւ ու ծ ե լ հ ե տ ն յ ա լ
խ ն դ ի թ ն ե թ ը`

- վ ե թ հ ա ն ե լ պ ա տ մ ա կ ա ն ու ս ո ց ի ո մ շ ա կ ու թ ա յ ի ն
այ ն պ ա յ մ ա ն ն ե թ ը , ո թ ո ն ք ն ա պ ա ս տ ե լ ե ն հ ա յ ո ց
ի ն ք ն ու թ յ ա ն հ ի մ ն ա հ ա թ ց ի ք ն ն ա թ կ մ ա ն ը ,
- ց ու յ ց տ ա լ ժ ա մ ա ն ա կ ա շ ը ջ ա ն ի հ ա յ
փ ի լ ի ս ո փ ա յ ա կ ա ն մ տ ք ի առ ն չ ու թ յ ու ն ն ե թ ը
ե վ թ ո պ ա կ ա ն ւ ու ս ա վ ո թ յ ա ն ու թ յ ա ն հ ե տ ,
- հ ե տ ա զ ո տ ե լ ժ ա մ ա ն ա կ ա շ ը ջ ա ն ի փ ի լ ի ս ո փ ա յ ա կ ա ն
մ ի տ ք ն ա զ գ ա յ ի ն ի ն ք ն ու թ յ ա ն տ ե ս ա ն կ յ ու ն ի ց ,
պ ա թ զ ե լ ի ն ք ն ու թ յ ա ն կ թ ո ն ա կ ա ն և
ւ ու ս ա վ ո թ յ ա ն հ ա թ ա ց ու յ ց ն ե թ ի
տ ա թ ե թ ու թ յ ու ն ն ե թ ը ,
- ն ե թ կ ա յ ա ց ն ե լ հ ա յ ւ ու ս ա վ ո թ յ ա ն ն ե թ ի
տ ե ս ա կ ե տ ն ե թ ը հ ա յ ո ց ն կ ա թ ա գ թ ի ու
հ ո գ ե կ ե թ տ վ ա ծ ք ի առ ա վ ե լ ու թ յ ու ն ն ե թ ի ու
թ ե թ ու թ յ ու ն ն ե թ ի պ ա տ ճ առ ն ե թ ի ,
ի ն ք ն ա ճ ա ն ա չ ո ղ ու թ յ ա ն ձ ն ե թ ի մ ա ս ի ն ,
- ց ու յ ց տ ա լ պ ա տ մ ա կ ա ն ա ն ց յ ա լ ի
վ ե թ ա ի մ ա ս տ ա վ ո թ մ ա ն ւ ու ս ա վ ո թ յ ա ն
մ տ ա ծ ո ղ ն ե թ ի մ ո տ ե ց ու մ ն ե թ ի
յ ու թ ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե թ ը ,

- վեր հանել կրոնի, դավանանքի և էզզվի վերաբերյալ ժամանակաշրջանի մտածողների հայացքները:

Յետադոտական այս խնդիրները լուծելու համար կիրառվել է **տեսական մեթոդներ**ի հետևյալ համախուլմբը՝ վերլուծոթյուն, համանմանոթյուն, համակարգում, տարբերոթյուններ և նմանոթյուններ զուգորդում, պատմահամեմատական, ինքնոթյան ուսումնասիրոթյան պրիմորդիալիստական և կոնստրուկտիվիստական մեթոդները:

Մասնագիտական գրականոթյան մեջ առաջին անգամ համակարգված ձևով վերլուծելով և գնահատելով Լուսավորականոթյան դարաշրջանի հայ մտածողների հայացքները հայոց ինքնոթյան վերաբերյալ, շրջանառելով նոր նյութեր և մեթոդաբանական նոր տեսանկյունից վերիմաստավորելով հայտնի աղբյուրները՝ սույն աշխատանքում առաջադրվում և հիմնավորում են գիտական նորոթյալ պարունակող հետևյալ դրոթյաները՝

- հենվելով մասնագիտական գրականոթյան մեջ առկա հայ Լուսավորականոթյան փիլիսոփայական ուղղոթյուններ ղասակարգման վրա և այն մասամբ ձևափոխելով ու հիմքընդունելով ազգային ինքնոթյան նկատմամբ դրանց վերաբերմունքը՝ պայմանականորեն առանձնացվում է երեք ուղղոթյուն՝ **բուլ լուսավորական, կրոնական (պահպանողական) և Լուսավորական-պահպանողական**,
- ի տարբերոթյուն ազգային ինքնոթյան կրոնական հարացույցի, Լուսավորական նախագծում առաջնային են **դառնում ազգի, հայրենիքի, քաղաքացու, աշխարհիկ**

կառույցներին, կյանքի տարբեր
ունորտներում աշխարհիկ ոգու հաստատման,
պատմական անցյալի, լեզվի ու գրի
փոփոխություն, կրոնական համայնքից
քաղաքական ազգի վերածվելու և ազգային
արժեքները վերաիմաստավորելու ու
վերագնահատելու գաղափարները,

➤ հայոց ինքնուրույն լուսավորական
նախագծում առանձնացվում է
ինքնաճանաչողություն երկու
տեսանկյուն՝ **ա/ սեփական հոգեկերտվածքի,
վարքածներին ու արժեքներին նկատմամբ
վերաբերմունքի ձևերի վերլուծություն և
բ/ դրկից ազգերի ինքնուրույնական գծերի
համեմատություն,**

➤ պատմական անցյալի վերակազմության
լուսավորական մոտեցման մեջ
տարբերակվում է երկու մակարդակ՝ **ա/
պատմագիտական,** որի խնդիրը հայոց
պատմության համակարգված շարադրանքն է և
քաղաքակրթության պատմության մեջ հայոց
տեղի ու դերի պարզումը, **բ/ փիլիսոփայական
(հրապարակախոսական-գեղարվեստական),** որի
նպատակն էր գեղարվեստական պատկերների,
ավանդազրույցներին, պատմական դեպքերի
ընտրության ու պատմական միջերի արարման
ճանապարհով հավաքական հիշողություն մեջ
վերակենդանացնել անցյալի փառավոր
էջերը, ազգակիցներին ծանոթացնել
անցյալում ստեղծված քաղաքակրթական
արժեքներին, ստեղծել ազգային հերոսներ
ու հակահերոսներ՝ դրանով իսկ լուծելով
նաև ազգային իդեալի հարցը,

➤ **ի տարբերությունն է վրոպական
լուսավորականության, հայ լուսավորական**

մտք ու մ կրոն, եկեղեցի, հավատ
հասկացողություններին հավասար և, որոշ
առումով, առավել դիտարկվում է «դավանանք»
հասկացողությունը: Կրոնի, դավանանքի ու
հոգևորականության դերի հարցում
հակադրվելով կրոնական ինքնության
կողմնակիցներին, լուսավորականները
կարծում են, որ ա/կրթությունը պետք է ինի
աշխարհիկ, բ/կրոնը և դավանանքը չպետք է
նույնացվեն ազգության հետ, գ/
միաժամանակ, հաշվի առնելով կրոնի ու
եկեղեցու դերը հայոց մեջ, դրանք չպետք է
առհասարակ դուրս թողնել ինքնության
կառուցվածքից,

- Լեզվի հարցում, եթե հայոց ինքնության
կրոնական հարացույցի կողմնակիցները
միանշանակ նախապատվություն տալիս էին
գրաբարին, ապա լուսավորականների
բանակում առանձնանում է երկու թև՝
արմատական, որի կողմնակիցները
պահանջում էին գրաբարը հանել
գործածությունից և համապատասխանեցնել
գրավոր ու բանավոր լեզուները, և **չափավոր**,
որի կողմնակիցները հանդես էին գալիս այդ
երկուսը համադրելու և միասնական լեզու
ստեղծելու պահանջով: Այս երկու
մոտեցումներից **արմատական** մոտեցումը
դառնում է գերակա և լուծում գրաբարից
աշխարհաբարին անցնելու խնդիրը:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ
դրույթները.**

- Յայ լուսավորականությունը, հարազատմնալով
եվրոպական լուսավորականության հիմնական
սկզբունքներին, էական դեր ունշանակություն

Ե տալիս հայրենիքին ու ազգին վերաբերող հարցերին, փիլիսոփայական հիմնական ներուժը ծառայեց նույն հայոց ինքնուրույն հիմնահարցերի արդիականացմանը, ազգային ինքնագիտակցության վերափոխմանն ու ազգային առաջընթացին: Թեև փիլիսոփայական հիմնահարցերի առաջադրման ու դրանց տեսական զարգացման առումով Լուսավորականության շրջանում կատարվում է հսկայական աշխատանք, սակայն դրանց ծիրում ազգն ու հայրենիքն է:

➤ Յայնուհետև ինքնուրույն Լուսավորական նախագծում էական ու կարևոր դեր ունի ազգային նկարագրի ճանաչողությունը: Այն մի կողմից հենվում է «Ես»-«Ես» ճանաչողական սկզբունքին, մյուս կողմից ինքնաճանաչողություն մեջ էական է համարում այլ ճանաչողությունը, երբ «Ես»-ը սահմանվում է «Ոչ Ես»-ի միջոցով: Ներհայեցողության նման ընթացքը թույլ է տալիս ստեղծել ազգային նկարագրի Լուսավորական ամբողջական պատկեր, որում արտացոլված են և՛ ազգային վարքաձևերի բացասական, և՛ ազգային հոգեկերտվածքի դրական գծերն ու հատկությունները: Ինքնաճանաչողություն նման մոտեցումը նոր, Լուսավորական երևույթ է և ամուր հենք «վերագրվող» ու «ապրվող» ինքնությունները միմյանցից տարբերակելու, «վերագրվող» ինքնությունից «ապրվող» ինքնությունը գտելու համար:

➤ Եթե ինքնաճանաչողություն առաջին փուլում հայ Լուսավորականների խնդիրն է ազգային նկարագրի ճանաչել, որոշակիացնել դրական ու բացասական գծերը, վեր հանել դրանք դետերմինացնող կապերն ու հարաբերությունները, ապա

ի ն ք ն ա ճ ա ն ա չ ո ղ ու թ յ ա ն Ե ր կ ր ո թ փ ու լ լ ը
պատմական անցյալի վերաիմաստավորումն ու
լուսավորական աշխարհաճանաչողության
միջոցով վերագնահատումն Է: Պատմական
անցյալի նման վերաիմաստավորումն ընթանում
է Երկու փուլով՝

փիլիսոփայական **պատմագիտական** ու
(հրապարակախոսական -
գեղարվեստական): **Պատմագիտական** փուլը

հաստատում է այն, որ հայի հոգեկերտվածքը իր
սաղմնավորման ու զարգացման ընթացքով չնչին
փոփոխություններ ենթարկվել, իսկ

փիլիսոփայական **(հրապարակախոսական -**
գեղարվեստական) մոտեցումը ձգտում է

որոշակիացնել հայոց տեղն ու դերը
համամարդկային մշակույթի մեջ, հայի
գիտակցության մեջ վերաիմաստավորել
սեփական պատմությունը գոյություն կերպը:

➤ Ի տարբերություն նախորդ դարաշրջաններում
հայոց ինքնության գոյակերպի՝

լուսավորականության ժամանակաշրջանում
այդ գոյակերպը փոխվում է, քանի
վերաիմաստավորվում ու վերափոխվում են
ազգային ինքնության կառուցման Երկու

գործիք՝ **կրոնը** և **լեզուն**: Եթե եվրոպական
լուսավորականության մեջ դավանանքը էական
դեր չունենե, ապա հայ լուսավորականության
մեջ **կրոն,** **հավատ,** **եկեղեցի**

հասկացություններին հավասար և նույնիսկ
առավել Էր ,դավանաբանություններ
հասկացությունները: Եվրոպական

լուսավորականության օրինակով լուծելով
կրոնի, հավատի ու եկեղեցու հարցը՝
դավանաբանության առումով հայ

լուսավորականները հայտնվում են փակուղում:
Մի կողմից մերժելի է ազգությունը որոշել

դավանանքով, մյուս կողմից պետականության
բացակայության պայմաններում դավանանքն
ունի ինքնուրույն ապահովան
դեր:
Դավանաբանության փակուղուց ազատվելու
ուղիներն է բացակայության պատճառով կարելի է
պնդել, որ հայոց ինքնուրույն լուսավորական
նախագծում ապակրոնացվող հասարակության
լուսավորական իդեալը չընդունվեց այնպես,
ինչպես եվրոպայում և իրենք՝
լուսավորականներն էլ այդ հարցում
չդրսևորեցին հստակ մոտեցում:

➤ Լեզվի հիմնահարցը, որպես գրավոր ու բանավոր
լեզունների համապատասխանեցման խնդիր,
լուսավորական նախագծում ունի հստակ
ձևակերպում ու լուծման որոշակի ուղիներ:
Այն դիտվում է որպես ազգային իդեալների
ստեղծման, ազգային ոգու ու ազգային
գիտակցության վերափոխման հիմնական գործիք:
Ի տարբերություն եվրոպական
լուսավորականության՝ հայ
լուսավորականության մեջ լեզվի դերը
վճռորոշ է, իսկ լեզվական փոխակերպումները՝
արդարացված: Այդ իսկ պատճառով հայոց
ինքնուրույն լուսավորական նախագծում
լեզվական փոփոխությունները դատապարտված
են կեսագործման:

Սույն աշխատանքը կառուցված է
ներածությունից, երեք գլխից, որոնցից
յուրաքանչյուրը բաղկացած է երկու
ենթագլխից, եզրակացությունից և
օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑԻՆՔԵՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐՇ

1.1 Ի՞նչ Է ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լուսավորականությունը որպես գաղափարական շարժում և որպես փիլիսոփայական ուղղություն եվրոպական և հայ փիլիսոփայության մեջ սկզբնավորվել է տարբեր ժամանակահատվածներում: Լուսավորականությունը եվրոպական փիլիսոփայական մտքում մեկնարկել է դեռևս տասնյոթերորդ դարում՝ երբ Դեկարտը սահմանեց գոյություն հիմնական չափանիշը՝ «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ» դրոյթը, դրանով իսկ սկիզբ դնելով բանականության հաղթարշավին: Լուսավորականությունը, ի տարբերություն Վերածննդի դարաշրջանի առավելապես հուզական, զգայական, տառապող և ինքն իրեն փնտրող մարդու իդեալի, առաջադրեց անհատի ինքնաճանաչողության նոր աստիճան, որի առանցքում բանականությունն էր՝ **գործող** բանականությունը¹⁷: Եվրոպական լուսավորականությունը, հիմնվելով այս բանապաշտության վրա և շարունակելով նախկին ավանդույթները, ծագեց իբրև սոցիալական, գաղափարական շարժում, որը պայքարում էր

¹⁷ Բանականության շարժումն ինքնին ոչինչ էր և անարգասաբեր, եթե չէր արտահայտվում այնպիսի ընթացքով, որը սերտորեն առնչակից էր կեցության գոյությանը: Բանական մտքի նման շարժը հաստատում էր մարդու գերիշխանությունը բնության և հասարակական կյանքի նկատմամբ՝ բնական գիտություններին զարգացման շնորհիվ (տե՛ս **Хайдегер М.**, Что зовется мышлением? Академический проект, М., 2010, էջ 292):

Ֆեոդալիզմի, կաթոլիկական եկեղեցու դեմ՝ որպես սուղեկներ շարունակելով գիտություն և գիտելիքի դերի հաստատումը հասարակության մեջ: «Լուսավորականությանը, - գրում է Ի. Կանտը, - մարդու ելքն է անչափահասության վիճակից, որի մեղավորը մարդն ինքն է: Անչափահասությանը սեփական բանականությանը նախահանգ ուրիշի ղեկավարության օգտագործելու անկարողությանը է: Անչափահասության մեղքը մարդունն է, քանի որ դրա պատճառը ոչ թե բանականության պակասն է, այլ բացության և սեփական բանականությանը նախահանգ ուրիշի ղեկավարության օգտվելու համարձակության պակասը: Sapere aude՝ համարձակություն ունեցիր սեփական բանականությանը օգտվելու. ահա սա է լուսավորականության բնաբանը»¹⁸: Լուսավորականությանը մի կողմից հաստատում է սուբյեկտի գերիշխանությանը, իսկ մյուս կողմից «ձգտում էր կործանել առասպելները և երևակայությանը գիտելիքի միջոցով»¹⁹: Չաբերմասի դիտարկմամբ՝ լուսավորական շարժումը կարելի է համարել հաջողված, եթե արմատներին հեռանալը դառնար ազատում առասպելներից և չստեղծեր նոր առասպելներ²⁰: Իսկ Գադամերը Լուսավորականությանը դիտում է որպես նախապաշարմունք՝ համարելով, որ այն հետազոտության ամարկադարձնելը նույն է, թե գիտակցել, որ ոչ միայն մարդկային կեցությանը, այլև՝ գիտակցությանը է վերջավոր²¹: Այնինչ, Լուսավորականությանը հավակնում է անվերջ ճանաչողության, իսկ բանականությանը դառնում է

¹⁸ Կանտ Ի., Պատասխան հարցին՝ ի՞նչ է լուսավորականությունը, «Ջայաստանը Եվրոպայի ճանապարհին» գրքում, Ինքնություն 2, «Անտարես» հրատ., 2005, էջ 141:

¹⁹ Хорхаймер М., Адорно Т. В., Диалектика просвещения. Философские фрагменты, Медиум Ювента, М., 1997, с. 17.

²⁰ Хабермас Ю., Философский дискурс о модерне, М., Весь Мир, 2003, с. 119.

²¹ Стерн Гадамер Х.-Г., Истина и метод: Основы филос. герменевтики: Прогресс, М., 1988, էջ 328:

այն միակ «գործիքը», որի միջոցով հնարավոր է հաղորդակցվել անսահմանությամբ, հավերժությունը²²: Լայն հմաստով Լուսավորականությունը կամք է կուռքերին հաղթահարելու և բանականության հնարավորությունները օգտագործելու համար: Այդ կամքն արտահայտվում է «Ես»-ի և «Ես»-ի, «Ես»-ի և «Մենք»-ի, «Ես»-ի և աշխարհի միջև նոր հարաբերություններ ստեղծելով, քննադատական մտածողություն ունեցող անհատին պատմության սուբյեկտ հռչակելով: Լուսավորականությունը, ըստ Մ. Ֆուկոյի, կամքի, հեղինակության և բանականության կիրառման միջև եղած նախկին հարաբերությունների կատարելագործումն է: Նրա կարծիքով՝ Լուսավորական շարժումը կամ պատմական այնպիսի փոփոխություն է, որին հաղորդակից է ամբողջ մարդկությունը և որը փոխում է երկիր մոլորակի վրա ապրող բոլոր մարդկանց քաղաքական հասարակական գոյության եղանակը, կամ էլ Լուսավորականության այնպիսի փոփոխության ազդակ է, որը «շոշափում» է մարդու մեջ մարդկայինը»²³: Թեև

Լուսավորականությունն իբրև սոցիալ-քաղաքական շարժում և իբրև գաղափարախոսություն ու նոր աշխարհայացք արժանացել է տարբեր, նույնիսկ իրարամերձ գնահատականների, այնուհանդերձ ակնհայտ է, որ եվրոպական քաղաքակրթության պատմության մեջ Լուսավորականությունը հանդես է գալիս որպես նոր աշխարհաճանաչողություն, որը հենվում է գիտության ու գիտելիքի, Լուսավորության, «անչափահասությունից» դուրս եկած ինքնաբավ անհատի վրա: Եվրոպական Լուսավորականությունը մարդկային մտքի

²² Տե՛ս **Кассирер Э.**, Философия просвещения, (РОССПЭН) М., 2004, էջ 54:

²³ Տե՛ս **Фуко М.**, Что такое просвещение? Интеллектуалы и власть, Праксис, М., 2002, էջ 338-339:

«Երկաթյա վարագույրը» գիտելիքի միջոցով հետզհետե դարձրեց թափանցիկ, այն դուրս բերեց պլատոնյան քարանձավից. փիլիսոփայության նպատակը դարձրեց կենսական իրողությունների մաստավորումը: Կյանքի բոլոր ոլորտներ թափանցող և դրանք փոխակերպող գիտելիքը հատկապես ազդում էր մարդու գիտակցության փոփոխման վրա՝ նպաստելով անհատականացման գործընթացի արդյունավետ ավարտին: Շնորհիվ հասարակության և մարդու կյանքում տեղի ունեցած փոփոխությունների՝ XIX դարի մարդու նկարելի է ներկայացնել միանգամից մի քանի՝ **homo economicus** (տնտեսական մարդ), **homo politicus** (քաղաքական մարդ) և **homo ludens** (խաղացող մարդ) կերպարներով: Ընդ որում, վերջինը՝ **homo ludens**-ն է որոշում և ստեղծում մշակույթի, ինքնուրույն կերպը, քանզի նրա առանձնահատկությունը **գործելու ազատությունն** է²⁴:

Եվրոպական փիլիսոփայության մեջ գրեթե վիճահարույց չէ Լուսավորականության սկզբնավորման հարցը, ապահայ փիլիսոփայության մեջ այս առումով կան տարբեր մոտեցումներ՝ պայմանավորված XVII-XIX դարերում հայ տնտեսական մտքում տեղի ունեցած բեկումնային փոփոխություններով: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ մասնագիտական գրականության մեջ «**Լուսավորություն**», «**Լուսավորականություն**» և նույնիսկ «**Լուսավորչականություն**» եզրույթները հաճախ կիրառվում են նույնական իմաստով, ինչը ոչ միայն դժվարացնում է գնահատել մշակութային տարբեր երևույթներ, այլև հստակ պատկերացում կազմել Լուսավորականության դարաշրջանի սկզբնավորման մասին:

²⁴Տե՛ս **Хейзинга И.**, Homo Ludens. Опыт определения игрового элемента культуры, Издв. Ивана Лимбаха, Санкт-Петербург, 2015, էջ 31:

Լ ու ս ա վ ո թ յ ու ն ը կ ա ր ո ղ Է ք ն ո թ ո շ Լ ի ն Ե Լ ք ո ւ ը թ ժ ա մ ա ն ա կ ա շ ը ջ ա ն ն Ե թ ի ն , ի ս կ Լ ու ս ա վ ո թ ջ ա կ ա ն ու թ յ ու ն ը հ ա ճ ա խ կ ա պ վ ու մ Է Գ թ ի գ ո թ Ա Լ ու ս ա վ ո թ ջ ի ա ն վ ա ն հ Ե տ (տ Ե ղ ի ն կ ա մ ո չ տ Ե ղ ի ն)՝ հ ա յ Ե կ Ե ղ Ե ց ի ն ա ն վ ա ն Ե Լ ո վ Լ ու ս ա վ ո թ ջ ա կ ա ն Ե կ Ե ղ Ե ց ի : Ս ու յ ն ա շ խ ա տ ա ն ք ու մ չ Ե ն օ գ տ ա գ ո թ ծ վ Ե Լ ու «Լ ու ս ա վ ո թ յ ու ն» կ ա մ «Լ ու ս ա վ ո թ ջ ա կ ա ն ու թ յ ու ն» Ե գ թ ու յ թ ն Ե թ ը , ք ա ն գ ի դ թ ա ն ք չ Ե ն դ ի տ ա թ կ վ ու մ ո թ պ Ե ս «Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ու ն» Ե գ թ ու յ թ ի հ ո մ ա ն ի շ : Տ վ յ ա Լ դ Ե պ ք ու մ «Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ու ն» Ե գ թ ու յ թ ո վ ն շ ա ն ա կ վ ու մ Է Ե վ թ ո պ ա կ ա ն և հ ա յ փ ի Լ ի ս ո փ ա յ ու թ յ ա ն պ ա տ մ ու թ յ ա ն հ Ե թ թ ա կ ա ն շ ը ջ ա ն ը :

Ը ն դ ու ն վ ա ծ Է հ ա յ

Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ա ն ս կ ի գ ք ը հ ա մ ա թ Ե Լ XVIII դ ա թ ի Ե թ կ թ ո թ դ կ Ե ս ը , թ Ե և ն ա խ ա Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն Ե թ ն ու յ թ ն Ե թ ն շ մ ա թ վ ու մ Ե ն ա թ դ Ե ն XVII դ ա թ ու մ , ք ա ն ի ո թ «առ ա ն ց հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն տ Ե ս ա կ ա ն ու գ ա ղ ա փ ա թ ա կ ա ն ն ա խ ա պ ա տ թ ա ս տ ու թ յ ա ն հ ա գ ի վ թ Ե հ ն ա թ ա վ ո թ Լ ի ն Ե թ հ ա յ փ ի Լ ի ս ո փ ա յ ա կ ա ն ու հ ա ս ա թ ա կ ա կ ա ն -ք ա ղ ա ք ա կ ա ն մ տ ք ի վ Ե թ ա ս Լ ա ց թ ռ ի չ ք ը՝ հ ա ն ձ ի ն հ ն դ կ ա հ ա յ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ա ն»²⁵: Ո թ ո շ հ Ե տ ա գ ո տ ո ղ ն Ե թ ի կ ա թ ծ ի ք ո վ՝ XVIII դ ա թ ի առ ա ջ ի ն կ Ե ս ի ն ա թ դ Ե ն հ ա յ «Լ ու ս ա վ ո թ ի չ ն Ե թ ը հ ի մ ն ա կ ա ն ու մ հ ա մ ա թ վ ու մ Ե ն կ թ ո ն ա կ ա ն Լ ու ս ա վ ո թ ի չ ն Ե թ»²⁶: Ի ս կ **Յ . Մ ի թ գ ո յ ա ն ը** ս Ե թ տ կ ա պ Է տ Ե ս ն ու մ հ ն դ կ ա հ ա յ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ա ն և ջ ու ղ ա հ ա յ տ Ե ս ա կ ա ն մ տ ք ի մ ի ջ և՝ հ ի մ ն ա վ ո թ Ե Լ ո վ , ո թ հ ն դ կ ա հ ա յ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ու ն ը ջ ու ղ ա հ ա յ տ Ե ս ա կ ա ն մ տ ք ի օ թ գ ա ն ա կ ա ն շ ա թ ու ն ա կ ու թ յ ու ն և Է ²⁷: **Է . Ը .**

Յ ա թ ու թ յ ու ն յ ա ն ը կ ա թ ծ ու մ Է , ո թ XIX դ ա թ ի առ ա ջ ի ն

²⁵ «Յ ա յ ո ց պ ա տ մ ու թ յ ու ն», հ . III. Ն ո թ ժ ա մ ա ն ա կ ա շ ը ջ ա ն (XVIII դ . Ե թ կ թ ո թ դ կ Ե ս -XIX դ . վ Ե թ ջ), գ ի թ ք Ե թ կ թ ո թ դ (XVII դ . Ե թ կ թ ո թ դ կ Ե ս -1918թ .), Ե թ ., 2010, Է ջ 121:

²⁶ Տ Ե՛ ս ն ու յ ն տ Ե ղ ը :

²⁷ **Մ ի թ գ ո յ ա ն Յ .**, Յ ն դ կ ա հ ա յ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ա ն ա կ ու ն ք ն Ե թ ը , «Է ջ մ ի ա ծ ի ն» պ ա շ տ օ ն ա կ ա ն ա մ ս ա գ ի թ ա մ Ե ն ա յ ն հ ա յ ո ց կ ա թ ո ղ ի կ ու ս ու թ Ե ա ն Մ ա յ թ Ա թ ո ռ ո յ Ս թ թ ո յ Է ջ մ ի ա ծ ն ի , Տ ա թ ի ծ Դ , (1998) № ժ Բ , 57-63:

կ Ե ս ն ար դ Ե ն «գ ար թ ո ն ք ի և ա գ գ ա յ ի ն ի ն ք ն ա գ ի տ ա կ ց ու թ յ ա ն գ ար գ ա ց մ ա ն ժ ա մ ա ն ա կ ա շ ր ջ ա ն Է , Լ ու ս ա վ ո թ յ ա ն , մ շ ա կ ու յ թ ի ու գ ի տ ու թ յ ա ն հ Ե տ ա գ ա վ Ե ռ Ե Լ ք ի դ ար ա շ ր ջ ա ն »²⁸: Ա ն դ Ր ա դ ա ռ ն ա Լ ո վ ա յ ս հ ար ց ի ն` Ա . Ս ար գ ս յ ա ն ն ի Ր ա վ ա ց ի ո Ր Ե ն ն կ ա տ ու մ Է` «Ճ ի շ տ Է , Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն գ ա դ ա փ ա Ր ն Ե Ր ի ք ա Ր ո գ չ ու թ յ ու ն հ ա յ կ ա կ ա ն գ ա դ թ օ ջ ա Խ ն Ե Ր ու մ դ ի տ վ ու մ Է XVIII դ ար ու մ , ա յ ն ն ո Ր ո Ր ա կ Է ձ Ե ռ ք Բ Ե Ր ու մ ա յ դ դ ար ի Ե Ր կ Ր ո Ր դ կ Ե ս ու մ , ա յ ն ու ա մ Ե ն ա յ ն ի վ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ու ն ը ո Ր ա Ե ս ա մ Բ ո դ ջ ա կ ա ն Ե Ր ն ու յ թ , ո Ր ա Ե ս Ֆ Ե ո դ ա Լ ա կ ա ն հ ար ա Բ Ե Ր ու թ յ ու ն ն Ե Ր ի դ Ե մ մ ար տ ն չ ո դ գ ա դ ա փ ա Ր ա Խ ո ս ու թ յ ու ն , ո Ր ա Ե ս հ ա ս ար ա կ ա կ ա ն մ տ ք ի Բ ո Լ ո Ր ո վ ի ն ն ո Ր ո Ր ա կ , ո Ր ը հ Ե դ ա փ ո Խ ա կ ա ն դ Ե Ր Ե Ր կ ա տ ար ու մ մ ար դ կ ա ն ց մ տ ա ծ ո դ ու թ յ ա ն և ա շ Խ ա Ր հ ա յ ա ց ք ի մ Ե ջ , վ ար ք ա գ ծ ու մ և Բ ա Ր ո յ ա կ ա ն պ ա տ կ Ե Ր ա ց ու մ ն Ե Ր ու մ , հ ա յ ի Ր ա կ ա ն ու թ յ ա ն մ Ե ջ հ ա ն դ Ե ս Է գ ա Լ ի ս XIX դ ար ի 50-ա կ ա ն թ վ ա կ ա ն ն Ե Ր ի և 60-ա կ ա ն թ վ ա կ ա ն ն Ե Ր ի ս կ գ Բ ի ն »²⁹: Ս ու յ ն ա շ Խ ա տ ա ն ք ու մ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ու ն ը դ ի տ ար կ վ ու մ Է ա գ գ ա յ ի ն ի ն ք ն ու թ յ ա ն հ ա մ ա տ Ե ք ս տ ու մ և ա յ դ ի ս կ պ ա տ ճ ա ռ ո վ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ու թ յ ա ն ս կ ի գ Բ Է դ ի տ վ ու մ XVIII դ ար ի վ Ե Ր ջ ը , ո Ր ը ն շ ա ն ա վ ո Ր վ ու մ Է Մ ա դ Ր ա ս ի Խ մ Բ ա կ ի գ ո Ր ծ ու ն Ե ու թ յ ա մ Բ , ս ա կ ա յ ն մ ի ա ժ ա մ ա ն ա կ չ ի ա ն տ Ե ս վ ու մ ն ա Խ ա Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն գ ա դ ա փ ա Ր ն Ե Ր ի ա ռ կ ա յ ու թ յ ու ն ը և դ Ր ա ն ց կ ա պ ն ու ա գ դ Ե ց ու թ յ ու ն ը Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն գ ա դ ա փ ա Ր ա Խ ո ս ու թ յ ա ն ձ և ա վ ո Ր մ ա ն վ Ր ա : Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գ Ր ա կ ա ն ու թ յ ա ն մ Ե ջ ա ռ ա ն ձ ն ա ց վ ու մ Է հ ա յ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն փ ի Լ ի ս ո փ ա յ ու թ յ ա ն հ Ե տ ն յ ա Լ ու դ ո դ ու թ յ ու ն ն Ե Ր ը` **Թ Ե ի գ մ , ի դ Ե ա Լ ի գ մ , դ Ե ի գ մ , մ ա տ Ե Ր ի ա Լ ի գ մ և պ ո գ ի տ ի վ ի գ մ .** «Բ ա ց ի ա յ ս հ ի մ ն ա կ ա ն

²⁸ **Յ ար ու թ յ ու ն յ ա ն Է . Շ . ,** Յ ա յ փ ի Լ ի ս ո փ ա յ ա կ ա ն մ ի տ ք ը XIX դ ար ի ա ռ ա շ ի ն կ Ե ս ի ն , «Մ ի տ ք » հ Ր ա տ . , Ե Ր . , 1965, Է ջ 3:
²⁹ Տ Ե ` ս **Ս ար գ ս յ ա ն Ա . ,** Ու Ր վ ա գ ի ծ XIX դ ար ի հ ա յ ի մ ա ս տ ա ս ի Ր ու թ յ ա ն , «Վ ա ն Ե վ ա ն » հ Ր ա տ . , Ե Ր . , 2001, Է ջ 24:

ուղղութիւնները, հայ տեսական մտքում իրենց կողմնակիցներն են ունեցել աշխարհագրական պատճառականութեան դպրոցը, սոցիալ-դարվիսիզմը, իսկ դարի վերջին նաև կյանքի փիլիսոփայութեանը³⁰: Քանի որ սույն աշխատանքը նվիրված է հայոց ինքնութեան վերաբերյալ հայ լուսավորականներին հայացքներին վերլուծութեանը, ուստի Լուսավորականութեան գաղափարների զարգացման պատմութեանը դիտարկելու է ազգային ինքնութեան լուսածիրում և ժամանակաշրջանի տեսական-փիլիսոփայական մտքի ուղղութիւնները դասակարգելիս՝ հիմք է ընդունել դրանց վերաբերմունքը ազգային ինքնութեան նկատմամբ: Այդ պատճառով էլ, թեև չենք անտեսում մասնագիտական գրականութեան մեջ առանձնացված ուղղութիւնները, սակայն քննարկվող ժամանակաշրջանի տեսական-փիլիսոփայական մտքի մեջ առանձնացնում ենք երեք ուղղութիւններ՝ **Բ ու ն լ ու ս ա վ ո Ր ա կ ան**, **Լ ու ս ա վ ո Ր ա կ ան-պահպանողական** և **Կ Ր ո ն ակ ան**: Բ ու ն լ ու ս ա վ ո Ր ա կ ան ուղղութիւնը որոշ վերապահումներով կարելի է համարել Լուսավորականութեան հիմնական սկզբունքները և գաղափարներն արտահայտող ուղղութիւն: Այս ուղղութեան ներկայացուցիչներից են՝ **Մ. Նալբանդյանը**, **Բաֆֆին**, **Մ. Մամուրյանը** և այլք: Լուսավորականներ, ովքեր հանդես են գալիս որպես նոր մտածողութեան ու աշխարհայացքի և ազգային ինքնութեան տարրերի նորացման ջատագով: Մյուսը լուսավորական-պահպանողական ուղղութիւնն է, որի ներկայացուցիչներից էին **Խ. Աբովյանը**, **Ստ. Նազարյանը**, **Ղ.Ալիշանը**, **Սրբուհի Տյունաբը** և այլք, որոնք թեև լուսավորական գաղափարների պաշտպան էին, սակայն որոշ հարցերում պաշտպանում էին

³⁰Տե՛ս նույն տեղը, էջ 35:

ավանդական -պահպանողական տեսակետներ: Կրոնական
ուղղություններ կայացուցիչներին **Յ.**
Չամուռ ճյանը, որոշ վերապահումով նաև՝ **Գ.**
Այվազովսկին և այլք, որոնք հին ինքնուրույն
կրոն ու ջատագովներն և հանդես են գալիս
հասարակական և ազգային կյանքը կազմակերպելու
ավանդական եղանակներին դիրքերին:

Լուսավորականությունը նոր փուլ է
եվրոպական քաղաքակրթության պատմության մեջ:
Եվրոպական Լուսավորականության մեջ, ի
տարբերություն ճշմարտության, ազատության,
ընտրության վերաբերյալ միջնադարյան
մոնիստական ըմբռնումներին, գերիշխող է
իմացաբանական պլյուրալիզմը, իսկ ազատությանը
բանական մարդու գործելու միակ գոյաեղանակն է:
Փիլիսոփայական սկեպտիցիզմը օգտագործելով
իբրև իմացաբանական մեթոդ՝ Լուսավորականները
իրար հակադրեցին բանականություն և հավատը (**Պ.**
Բեյլ)՝ նպաստելով մատերիալիզմի տարածմանը:
Աստված, Վոլտերի իսկ բնորոշմամբ, վերածվեց
երկնքի գահին նստած փիլիսոփայի՝ դրանով իսկ
ամրապնդելով փիլիսոփայական դեիզմի դիրքերը:
Քննարկելով հասարակական զարգացման
օրենքները՝ Լուսավորականները տարանջատեցին
մարդկային օրենքները աստվածային օրենքներից,
իսկ բնականը՝ մարդկայինից (**Մոնտեսպյոն**):
Արդիական դարձան սոցիալական և հավասարության,
ազատության և օտարման, բանական էգոիզմի և
ալտրոնիզմի փոխհարաբերության, բարոյագիտական
և մանկավարժական մի շարք հարցեր, որոնք
հատկապես մշակվեցին **Ռուսոյի** կողմից:
Ֆրանսիական մատերիալիզմը՝ հիմնվելով
գիտելիքի և փորձի վրա, յուրօրինակ Լուծումներ
տվեց փիլիսոփայական ավանդական՝ կեցության և
գոյության, շարժման և զարգացման, հավատի և

բանականության, գնոստիցիզմի ու ագնոստիցիզմի, ճակատագրի և ազատության և այլ հիմնահարցերի: Լուսավորականության նորարական գաղափարները իրենց արտահայտությունը գտան «Յանրագիտարան գիտությունների, արվեստների և արհեստների մասին» մեծածավալ գործի հատորյակներում: Ֆրանսիական մատերիալիզմը հստակ սահման գծեց հավատի և բանականության միջև: **Դիդրոյի** պատկերավոր արտահայտությամբ՝ եթե դեիստները կտրել էին բազմազվխանի հրեշի միայն տասներկու գլուխը, բացի մեկից, որից աճում էին մնացյալները, ապա իրենց խնդիրը դարձավ ազատվել հենց այդ գլխից և թողնելով կրոնական ճանապարհը՝ վերադառնալ դեպի բնություն և ապրել բնություն օրենքներով: Սրանով իսկ աշխարհականացման գործընթացը եվրոպական Լուսավորականության մեջ ունեցավ իր տրամաբանական ավարտը, քանզի կրոնը տարանջատվեց պետությունից և հանդուրժողականությունը դարձավ գոյություն սկզբունք՝ օրենքով ամրագրելով խղճի ազատությունը: **Յայկական** Լուսավորականությունը ձևավորվել է եվրոպական Լուսավորական գաղափարների ազդեցությամբ և, բնական է, որ դրանց միջև պետք է լինեին ընդհանրություններ և տարբերություններ: Ընդհանրությունների հիմքում ընկած է միևնույն գաղափարական արժեհամակարգը, իսկ տարբերությունների հիմքում՝ դրանց բաղկացուցիչների կարևորման ու գործադրման եղանակները: Ըստ էության հայ և եվրոպական Լուսավորականության հիմնական տարբերությունն այն է, որ, չնայած միջոցների նույնությունը, դրանք ուղղված էին տարբեր նպատակների իրագործմանը՝ եվրոպական Լուսավորականությունը՝ ինքնիշխան

անհատականության և քաղաքացու ձևավորմանը, հայ
 Լուսավորականությանը՝ ազգային ինքնության
 պահպանման և արդիականացմանը և քաղաքական
 անազատության հաղթահարմանը: Ինչպես
 իրավագիտորեն նկատում է Ա. Սարգսյանը՝ «Թեև
 Լուսավորական գաղափարախոսությանը հայ
 իրականության մեջ արտահայտվում էր
 Լուսավորչալ եվրոպայի իդեալի ձևով,
 այնուամենայնիվ այդ իդեալը կոլյր
 ջատագովության և ընդօրինակում չէր... հայ
 իրականության մեջ Լուսավորականությանը
 ազգային երանգավորում է ստանում...»³¹: Պետք է
 նկատել, որ եվրոպական փիլիսոփայությանը հայ
 Լուսավորականության համար գրեթե բոլոր
 հարցերում ուղենիշային էր, ինչը ակնառու երևաց
 աշխարհագրական դետերմինիզմի հարցում. «19-րդ
 դարի հայ սոցիալ փիլիսոփայական ուղղության
 տեսական աղբյուրներ են եղել ինչպես
 Մոնտեսքյոյի աշխարհագրական դետերմինիզմը,
 այնպես էլ 19-րդ դարի եվրոպական, մասնավորապես
 ռուսական և գերմանական աշխարհագրական
 դպրոցների գաղափարները»³²: Ստ.Նազարյանցը, Ա.
 Գարագաշյանը, Ն. Ռուսինյան, Մ. Նալբանդյանը և
 այլք, որոնք քաջածանոթ էին եվրոպական
 Լուսավորական փիլիսոփայության
 ներկայացուցիչներին հիմնարար
 աշխատությանն են, փորձում էին
 փիլիսոփայական հիմնական հարցերի իրենց
 ինքնուրույն մշակումներով ու Լուսավորական
 գաղափարների տեղայնացումներով, հանրամատչելի
 ձևով դրանք տարածել հայ հասարակության մեջ:
 Միևնույն ժամանակ հայ մտածողները ցանկանում

³¹ Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 29-30:
³² Բաղդասարյան Ա., Հայ-Ֆրանսիական փիլիսոփայական
 ամենաթյուններին պատմությունն է, ՀՀԳԱԱ «Գիտություն»
 հրատ., Եր., 1998, էջ 8:

Է ի ն փիլիսոփայական գաղափարները բխեցնել հայ իրականությունից և փիլիսոփայական գիտելիքը ծառայեցնել հանրային ու ազգային հարցերի լուծմանը: Այս իմաստով բնորոշ է Նալբանդյանի այն միտքը, որ փիլիսոփայի փիլիսոփայական համակարգը պետք է գոյանա այն ազգի կյանքից և պատմությունից, որին նա պատկանում է³³:

 տարբերվում է մյուս ազգերից: Յետաքրքիր է, որ
 արդեն XX դարում երաժշտությունը որպես հայոց
 ինքնության յուրակերպության հիմք համարող
 Օջակյանը գրեթե նույնությամբ կրկնում է
 Աբովյանին՝ նշելով. «Յեւէն քաղաքակրթութիւնը,
 Նիցշէին կարծիքով, ծնունդ է կրօնական երգերու ...,-
 ապա շարունակում,- Անշուշտ, թուրքերուն դեռ կը
 պակսի արուեստագետը, որ քանի մը կարկառուն
 քանդակներով սելեռէր մէկ-երկու երեսները իրենց
 հոգիին, ինչպէս մերը ըրած են մեր շարականները ու
 նոր օրերու մեր գեղջուկ երգերը»¹³⁸: Այսպիսով,
 Աբովյանը և, ապա, Օջակյանը առաջադրում են նոր
 տեսանկյուն՝ համաձայն որի և էզզիս և կրոնին
 ավելանում է նաև երաժշտությունը՝ որպես
 ինքնության հիմնական տարր: Ընդ որում, եթե
 Պալասանյանը համարում էր հայ երաժշտությունը
 կրոնական կապանքներով շղթայված, ապա Աբովյանը
 հենց նման երաժշտությամբ է հայ ինքնությունը
 տարբերում այլոց ինքնությունից: Ըստ Աբովյանի՝
 ահա այս երեքն են կազմում հայ ինքնության
 հիմնասյունները և դրանց շնորհիվ է հայն ապրել
 ու գոյատևել դարեդար: Չնայած ազգային
 ինքնությունը ժամանակի ընթացքում
 որոշակիորեն փոխվում է, սակայն պահպանում են
 անփոփոխ այն տարրերը, որոնք ապահովում են հայի

¹³⁷ **Աբովյան Խ.**, Յայոց եկեղեցական եւ ժողովրդական
 երաժշտությունը, ԵԼԺ ութ հատորով, Յատոր Sասնէրորդ (Լր.
 հատոր), Յայկական ՍՍՌԳԱ հրատ., Եր., 1961, էջ 105:

¹³⁸ **Օջակյան Յ.**, Մնացորդաց, Յտր. Գ, Տպ. Կիլիկիոյ
 Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1988, էջ 84:

ի ն ք ն ու թ յ ա ն ան ը ն դ հ ա տ ու թ յ ու ն ը : Ք ա ն զ ի ա յ ն ա զ գ եր ը , ու մ ի ն ք ն ու թ յ ա ն պ ա տ մ ու թ յ ու ն ը ը ն դ հ ա տ վ ե լ է , ձ ու լ լ վ ե լ ե ն և վ եր ա գ ե լ պ ա տ մ ու թ յ ա ն թ ա տ եր ա ք ե մ ի ց : Ա բ ո վ յ ա ն ի ա յ ս մ ո տ ե ց ու մ ը ն որ եր ա ն գ ն եր ս տ ա ց ա վ ա ր դ ե ն XIX դ ա ր ի եր կ ր ո ր դ կ ե ս ի ն : **Ն ա լ ք ա ն դ յ ա ն ը** , ի ն չ պ ե ս և Ա բ ո վ յ ա ն ը , պ ա տ մ ա կ ա ն ա ն ց յ ա լ ի մ ե ջ գ եր ա կ ա դ եր է վ եր ա պ ա հ ու մ լ է զ վ ի ն` հ ա մ ա ր ե լ ո վ , ո ր «ժ ո ղ ո վ ր դ ի լ է զ վ ի մ ի ջ ո ց ո վ կ ա ր ո ղ ե ն ք ա վ ե լ ի հ ա վ ա ս տ ո ր ե ն ճ ա ն ա չ ե լ մ ի ժ ո ղ ո վ ու ր դ , ք ա ն թ ե ն ր ա պ ա տ մ ա կ ա ն հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ն եր ո վ »¹³⁹ : Լ է զ ու ն դ ա ռ ն ու մ է պ ա տ մ ա կ ա ն ա ն ց յ ա լ ի կ ա ր ն ո ր տ ա ր ր եր ի ց մ ե կ ը : Ն ա լ ք ա ն դ յ ա ն ը կ ա ր ծ ու մ է , ո ր հ ե ն ց լ է զ վ ի մ ի ջ ո ց ո վ հ ն ա ր ա վ ո ր է ճ շ տ ե լ` **ա ր դ յ ո ք հ ա յ ժ ո ղ ո վ ու ր դ ը պ ա տ կ ա ն ու մ է ա շ խ ա ր հ ի հ ն ա գ ու յ ն ա զ գ եր ի թ վ ի ն , թ ե` ո չ** : Ի ս կ ի ն չ պ ե ° ս ճ շ տ ե լ , ե թ ե մ եր ու ն ե ց ա ծ տ ե ղ ե կ ու թ յ ու ն ն եր ն ա յ դ ա ռ ու մ ո վ խ ի ս ս ս ա կ ա վ ե ն և տ ա ր ը մ ք ու մ ն եր ի տ ե ղ ի ք կ ա ր ո ղ ե ն տ ա լ : Ա յ ս հ ա ր ց ի պ ա տ ա ս խ ա ն ը , ը ս տ Ն ա լ ք ա ն դ յ ա ն ի , կ ա ր ե լ ի է գ տ ն ե լ` հ ղ ու մ կ ա տ ա ր ե լ ո վ ե վ ր ո պ ա ց ի ա յ ն հ ե տ ա գ ո տ ո ղ ն եր ի ն , ո վ ք եր ա հ ո ե լ ի ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ե ն տ վ ե լ հ ա յ ո ց լ է զ վ ի ու ս ու մ ն ա ս ի ր մ ա ն ը : Ե թ ե հ ա յ ո ց ա զ գ ը , հ ե տ ն ա պ ե ս ն ա ն լ է զ ու ն հ ն ա գ ու յ ն ն եր ի թ վ ի ն չ ե ն պ ա տ կ ա ն ու մ , ա պ ա ո ° ր ն է ա յ դ ու շ ա դ ր ու թ յ ա ն ի մ ա ս տ ը : Ու ր ե մ ն , հ ա յ ո ց լ է զ ու ն` ո ր պ ե ս հ ն ա գ ու յ ն ն եր ի ց մ ե կ ը , ա պ ա ց ու յ ց է ա յ ն ք ա ն ի , ո ր հ ա յ եր ը ե ղ ե լ ե ն **ք ա ղ ա ք ա կ ր թ ու թ յ ա ն ա կ ու ն ք ու մ** : Բ ա ց ի ա յ դ , Ն ա լ ք ա ն դ յ ա ն ը , ի ն չ պ ե ս և Ա բ ո վ յ ա ն ը , կ ր կ ի ն մ ե ջ ք եր ու մ է տ ա ր ա ծ ու մ գ տ ա ծ ա յ ն դ ր ու յ թ ը , ո ր Ն ո յ ը հ ա ն գ ր վ ա ն ե լ է Ն ա խ ի ջ և ա ն ու մ (ք ա ռ ա ց ի ո ր ե ն ա ռ ա ջ ի ն ի ջ և ա ն) և դ ր ա ն ո վ ի ս կ և ս մ ե կ փ ա ս տ ա ր կ ա վ ե լ ա ց ն ու մ հ ն ա գ ու յ ն ա զ գ եր ի թ վ ի ն պ ա տ կ ա ն ե լ ու դ ր ու յ թ ի ն . «Ա յ ս պ ի ս ո վ` հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ի ս կ զ ք ն ա վ ո ր ու թ յ ու ն ը մ ա ր դ կ ու թ յ ա ն ս կ զ ք ն ա վ ո ր ու թ յ ու ն ն ե , ի ս կ հ ե տ ա գ ա

¹³⁹ **Ն ա լ ք ա ն դ յ ա ն Մ.**, Հ ա յ ո ց լ է զ վ ի ու ս ու մ ն ա ս ի ր ու թ յ ու ն ը Յ ե վ ր ո պ ա յ ու մ է և հ ա յ գ ր ա կ ա ն ու թ յ ա ն գ ի տ ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ը , Ա ն տ ի պ յ եր կ եր , Պ ե տ ի ր ա տ , Եր ., 1935, է ջ 37:

պատմութեան ընդ ձևով մեծ հիմնադրամի համարյա
 բոլոր ժողովրդների պատմության հետ»¹⁴⁰: Արդյոք
 հիշյալը բավարար է նման եզրակացություն
 կատարելու համար: Նախքան դրանք սաբավարար չի
 համարում և այդ իսկ պատճառով մեջբերում է
 Կլավդիոս Բուկանանիսիսի և Լակրոզիս, ովքեր
 ուսումնասիրելով անտիկ շրջանի՝ Պլատոնի և
 Արիստոտելի երկերի թարգմանությունները, դրանք
 համարում էին հաջողված, ինչը Լեզվական
 տեսակետից փաստում է՝ հայոց Լեզուն այնքան
 հղկված, զարգացած է եղել, որ կարողացել է դրան
 ներկայացնել անտիկ փիլիսոփայական երկերը:
 Անշուշտ, միայն Լեզվական վերլուծությանը
 հիմնվելով՝ պնդել, որ մարդկության
 սկզբնավորման պատմությունը սերտորեն կապված է
 հայոց պատմությանը, ճիշտ չէ: Նախքան դրանք,
 սակայն, պատմական անցյալը կենդանացնում է այն
 կերպ, որ այն դառնան ուղիղ նկատմամբ համար
 հիմք: Յնագույն աշխարհի հիմքում լինելն էլ ավելի է
 ամրապնդում հզորության և ուժեղի կերպարը՝
 դրանով իսկ սիրելի ու ընդունելի դարձնելով
 ազգային ինքնությունը: Հայ ժողովրդի
 պատմության մեկնաբանումն ազգային ինքնության
 համատեքստում չի սահմանափակվում միայն
 նույնականության արժանի մոդելներ փնտրելով և
 ստեղծելով, այլև այն վերածվում է **այնպիսի
 քաղաքական ծրագրի, որի էությունը հետևյալն էր՝
 գտնել առավել ծանրակշիռ փաստեր, որոնք
 կհիմնավորեն հայ ժողովրդի անմիջական
 ներառվածությունը հունական
 քաղաքակրթությանը և, ապա, անջնջելի հետքը
 եվրոպական մտքի զարգացման մեջ: Ինչու՞
 քաղաքական ծրագիր, քանի որ պատմական անցյալի
 նման հետազոտումն ու ինչ-որ չափով**

¹⁴⁰Նույն տեղում, էջ 42:

վ Ե ր ս տ Ե ղ ծ ո ւ մ ը ն պատակ ո ւ ն Ե ր ն ա ն օ տար ազ գ ի ն Ե ր ի ն ց ո ւ յ ց տալ թ Ե ո վ Է հ ա յ ը : Լ ո ւ ս ա վ ո ր ա կ ա ն ն ա խ ա գ ի ծ ը կ առ ո ւ ց ա ր կ Ե լ ի ս , ս ա կ ա յ ն , ն կ ա տ Ե լ ի Է ` հ ա յ ն ա վ Ե լ ի ն Է ր , ք ա ն մ ի հ ա յ ն ք ր ի ս տ ո ն յ ա ն և լ ո ւ ս ա վ ո ր ա կ ա ն ն Ե ր ի ն պատակ ն ո ւ խ ն դ ի ր ն Է ր մ ի ն չ լ ո ւ ս ա վ ո ր ա կ ա ն ի ն ք ն ո ւ թ յ ա ն մ Ե ջ հ ա յ ի ն ս ա հ մ ա ն ո ղ կ ր ո ն ա կ ա ն հ ա ր ա ց ո ւ յ ց ը փ ո խ ա կ Ե ր պ Ե լ ն ո ր ` լ ո ւ ս ա վ ո ր ա կ ա ն հ ա ր ա ց ո ւ յ ց ո վ : Ա յ ն Է ` ի ց ո ւ յ ց դ ն Ե լ հ ա յ ի տ Ե ղ ն ո ւ դ Ե ր ը հ ա մ ա շ խ ա ր հ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ր թ ո ւ թ յ ա ն մ Ե ջ : Ա յ ս առ ո ւ մ ո վ ի մ ա ս տ ա ս ի ր ո ւ թ յ ո ւ ն ը ` ո ր պ Ե ս գ ի տ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ա կ ո ւ ն ք , ի ր գ ա ր գ ա ց մ ա ն ա ս տ ի ճ ա ն ո վ կ ա ր ո ղ Է ր ք ա գ ո ւ մ վ կ ա յ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի հ ի մ ք դ առ ն ա լ : Թ Ե և փ ի լ ի ս ո փ ա յ ա կ ա ն մ ի տ ք ը Յ ա յ ա ս տ ա ն ո ւ մ ա յ ն ք ա ն գ ա ր գ ա ց ա ծ չ Է ր , ո ր ք ա ն Ե վ ր ո պ ա յ ո ւ մ , ս ա կ ա յ ն ո ր ո շ ա կ ի ճ ա ն ա պ ա ր հ Է ր ա ն ց Ե լ , ի ն չ ը փ ա ս տ ո ւ մ Է ն ա ն **Ս տ. Ն ա գ ա ր յ ա ն ց ը :** Յ ա յ ո ց պ ա տ մ ո ւ թ յ ա ն վ ա ղ շ ր ջ ա ն ն Ե ր ի Ն ա գ ա ր յ ա ն ց ի ո ւ ս ո ւ մ ն ա ս ի ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ը թ ո ւ յ լ Ե ն տ ա լ ի ս պ ն դ Ե լ , ո ր Վ դ ա ր ի հ ա յ ո ց գ ի տ ա կ ա ն և ի մ ա ս տ ա ս ի ր ա կ ա ն մ ի տ ք ը ք ա վ ա կ ա ն ի ն առ ա ջ ա դ Ե մ Է Ե ղ Ե լ . ը ս տ ա ր ժ ա ն վ ո ւ յ ն գ ն ա հ ա տ վ Ե լ Է հ ո ւ ն ա կ ա ն մ ա տ Ե ն ա գ ր ո ւ թ յ ո ւ ն ը , ա վ Ե լ ի ն ` կ ա տ ա ր վ Ե լ Ե ն ա ր ժ Ե ք ա վ ո ր թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր : Ա հ ա վ ա ս ի կ , Յ ո մ Ե ր ո ս ի Ի լ ի ա կ ա ն ը , ո ր ի թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը մ Ե գ չ ի հ ա ս Ե լ , ք ա յ ց դ ր ա առ կ ա յ ո ւ թ յ ո ւ ն ը փ ա ս տ ո ւ մ Է «ա յ ն Ե ր Ե ք տ ո ղ ը , ո ր ը մ ն ա ց Ե լ Է հ ա յ ո ց մ Ե ջ Յ ո մ Ե ր ո ս ի Ի լ ի ա կ ա ն ի ց . «Ի ն ձ ք ն ա Լ Ե ս ո չ դ ո ւ ի ր ի ք պ ա տ ճ առ ք , ա ր և , ա յ լ ա ս տ ո ւ ա ծ ք ն ./2 տ Ե ս տ ո ր ո չ խ ա ք Ե ա ց խ ո շ ի Լ ն թ Է պ Ե տ և յ ո ւ մ ք Է ր ./ Պ ա տ ր ո կ ղ Է ի ն ձ հ ի ք ի ս կ ա ր ի յ ո յ ժ ս ի ր Ե ց Ե ա լ ա ն ձ ի ն »¹⁴¹: Բ ն ա կ ա ն Է ` ա յ ն , ի ն չ թ ա ր գ մ ա ն վ Ե լ Է , չ ի կ ո ղ պ վ Ե լ և դ ա ր ձ Ե լ Է հ ա յ ի ս Ե փ ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը : Դ ժ վ ա ր թ Ե թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ը լ ի ն Ե ի ն ի ն ք ն ա ն պ ա տ ա կ և չ ծ առ ա յ Ե ի ն թ Ե կ ո ւ գ փ ո ք ր ա թ ի վ

¹⁴¹ **Ն ա գ ա ր յ ա ն ց Ս տ.**, Յ ա յ ո ց ա գ գ ի լ ո ւ ս ա վ ո ր ո ւ թ յ ա ն կ ա մ ս ո ւ ր ք թ ա ր գ մ ա ն ի չ ն Ե ր ի դ ա ր ը , Ե ր կ Ե ր ի ժ ո ղ ո վ ա ծ ո ւ , Յ Յ Գ Ա Ա , Ե ր ., 1996, Է ջ 307:

մարդկանց պահաջներին: Նազարյանցը ցավով է նկատում, որ չնայած այս ամենին, դրանց չնչին տոկոսն է ժառանգվել պատմության միջոցով: Կատարված աշխատանքները ոչ այնքան փոխանցվել են հայ պատմիչներին շնորհիվ, որքան հայոց ամրոցներին, դամբարաններին, եկեղեցիներին ու նույնիսկ գերեզմաններին արված վիճաբար արձանագրությունների միջոցով: Լուսավորականների խնդիրն էր վերստեղծել այնպիսի կապեր, որոնք ազգային ինքնությունը կհարստացնեն նորիդեալներով ու գաղափարներով: Չարմանալի չէ, որ պատմագրությունը հենց XIX դարում էապես փոխվեց և դրանով իսկ իրագործեց այն, ինչը հայ լուսավորականների խնդրիներին ցմեկն էր՝ պատմագիտության զարգացումը: Վերոշարադրյալից զատ՝ Նազարյանցը հղում է կատարում նաև փիլիսոփայական այն աշխատություններին, որոնք **թարգմանվել են**, որպեսզի ցույց տա փիլիսոփայական մտքի դերը հայոց մեջ: Դրանց մեջ առանձնահատուկ են հատկապես Պլատոնի և Արիստոտելի երկերի թարգմանությունները՝ «Պատասխանատու լինելն քննարկության», «Տիմեոս կամ վասն բնութեան», «Մինովս կամ վասն օրինաց», «Վասն օրինաց կամ օրենսդրութեան» (12 գիրք), «Եվթիփրոն», իսկ Արիստոտելից մեզ է հասել Դավիթ Անհաղթի փոխադրությունամբ «Ստորոգությունը Արիստոտելի», «Յաղագս մեկնութեան», «Մեկնությունը ի վերլուծականն», «Թուղթ առ Աղեքսանդրոս թագավորյաղագս աշխարհի», «Թուղթ առ Աղեքսանդրոս թագավորյաղագս առաքիկությունաց»: Վերջինները, սակայն, տպագրվել են Վենետիկյան սուրբ Ղազար վանքում. դրանց մեջ ընդգրկված է նաև Պորփյունի ներածություն թարգմանությունը՝ Դավիթ Անհաղթի

մեկնու թյան հետ միասին¹⁴²: Ինչպես նկատում է Նազարյանցը, դրանք չէին կարող չկրթել հային, չփոխել հայերի աշխարհաճանաչողությունը, սակայն հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու պատմական պայմանները թույլ չէին տալ իսստեղծել իմաստասիրական ինքնուրույն համակարգ: Պետք է նկատել, որ Նազարյանցի այս եզրակացությունը խոր արմատներ ունի, քանզի Յայաստանում իմաստասիրության համընդհանուր զարգացման համար առկա չէին անհրաժեշտ պայմաններ: Եվ միակը, ըստ Նազարյանցի, ինչի կարող էր վերածվել հայ միտքը, եկեղեցական տաղերգությունն էր, «ուրբանաստեղծը կարող էր թռիչք առնուլ և սուրբ հոգեզմայլություն մեջ զարկել սրտի քնարի լարերը մեծացնելով քրիստոսյան եկեղեցու նահատակները»¹⁴³: Նազարյանցը խորապես ափսոսում է, որ այդ ազդեցությունը չերևաց աշխարհիկ բանաստեղծության մեջ և շեշտելով եկեղեցական տաղերգությունը՝ դրա մեջ չի տեսնում հայի հոգեկերտվածքի արտահայտումը, այնինչ Աբովյանը, ապա Օշականը հենց եկեղեցական տաղերգությունն էին համարում հայի ինքնության տարբերությունը մյուս ինքնություններից: Օշականը նշում է, որ հայն ամբողջ աշխարհին հայտնի է եկեղեցական շարականներով, որոնք էլ արտացոլել են հայի հոգևոր ճանաչողությամբ տրված աշխարհի պատկերը: Յայի հոգին կենսատու է եղել արվեստի համար. «Բարություն, հեզություն, խոնարհություն, հավատալորություն, ասոնք մեր ստեղծած սրտառու չգեղեցուկություններն են, մեր գերութեան իսկ անդունդէն: Ու կուրանաք, այսքան դժնդակ պայմաններում էջ մեր մեծությունը այս գեղեցուկութեանց ծառայելու: Մենք ենք տուած Մօտ

¹⁴² Ն ու յ ն տեղում, էջ 309-312:

¹⁴³ Տ ե ' ս ն ու յ ն տեղը, էջ 313:

Արեւելքին մեր լրջութիւնը, մեր թախիժը, մեր անմեռ հաւատքը դէպի լոյսն ու դէպի արուեստը»¹⁴⁴: Զայի իդեալիզմը, հուզականությունը համահունչ են համամարդկային գեղագիտական ըմբռնումներին, որոշ իմաստով նաև ընդօրինակելի, ինչն էլ ավելի է ամրապնդում հոգևոր ինքնությամբ այլ ազգերից տարբերվելու նրա առանձնահատկությունը: Զամարելով, որ հայն աշխարհի պատկերը նախևառաջ ստեղծել է իբրև արվեստագետ, Օշականը շեշտում է հայկական երաժշտության դերը՝ որպես ազգի աշխարհայացքի, հույզերի արտահայտման եղանակ: Զարկ է նշել, որ Նազարյանցը եկեղեցական երաժշտությունը ազգային ինքնության մեջ էական չի համարում և հենց այդ պատճառով էլ հապճեպ եզրակացնում է, որ այդ կերպ արտահայտվող հայի հույզերն ու մտքերը տկար գտնվեցին, ընդհակառակը: Չուր է Նազարյանցը նահանջում իր նախածեռնությունն ից՝ ցույց տալ համամարդկային մտքի անդրադարձը նաև մեզանում ու դրա զարգացմանը նպաստելու նախադրյալներ զոյնությունը: Այսպիսով, չնայած որոշ մոտեցումների տարբերություններին, Աբովյանը, Նալբանդյանը, Նազարյանցը պատմական անցյալի վերաիմաստավորման միջոցով XIX դարի հային հաղորդակից են դարձնում այնպիսի պատմական անցյալի, որի հիմքը ոչ միայն ազգային է, այլև՝ համամարդկային: Առաջադրելով մարդկության պատմության սաղմնավորման ակունքներում գտնվելու որոշակի փաստեր՝ հայ լուսավորականները փոխում են հայի «կրոնական» ներկայությունն ու հանդերձանքը համաշխարհային պատմության մեջ՝ այն վերածելով քաղաքակրթական դերի, որն արտահայտվում էր

¹⁴⁴ **Օշական Զ.**, Մնացորդաց, Գ հատոր, Տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1988, էջ 235:

ուրույն պատմությամբ, փիլիսոփայությամբ և մշակութիւնով: Անխոս, հայլուսավորականներին ման մոտեցումն էլ կարելի է անվանել «հոգևոր ինքնապաշտպանություն», որը, ըստ է. Ա. Յարությունյանի, արտահայտվում է լեզվի, մշակութի, պատմական հիշողության ու դավանանքի պահպանմամբ, «մի կտոր Յայաստան» ստեղծելու մտայնությամբ¹⁴⁵: Բնորոշումներ, որոնց կրողն իրոք նախադաքական ազգերն են և որոնցով առաջնորդվելու դեպքում, իրավ, կասպառնալիք դառնալ պարզապես «ընկերամշակութային հոլմբ»¹⁴⁶: Սակայն հարցն իրավացի տարակուսանք է առաջանում այն առումով, թե ինչն է ենթադրուհանակում գոյություն ունենալ և ինչն է մեր կանխատեսումները չեն արդարանում: Գուցե նախադաքական ազգի կարգավիճակն է ենթնության գոյության մերկերպը և դրա շուրջ կառուցվող անցյալի, ներկայի ու, հնարավոր է, ապագայի նախագծերը ինքնութենահենք են՝ ապաքաղաքական սլանքներով և չկողմնորոշված՝ լինելու թե՛ ունենալու երկընտրանքում: Չէ՞ որ ինքնությունները խիստ իմաստով ենթակա չեն նույն օրինաչափություններին և ունեն սաղմնավորման, ընթացքի և, ի վերջո, վախճակի կամ փոխակերպման ինքնուրույն ընթացք:

Անցում կատարելով

լուսավորականներին՝ պետք է նշել, որ եթե պատմական անցյալի **փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական)** ընկալման առաջին փուլը հենվեց պատմության դրվագները նպատակային առանձնացնելու և, ըստ այդմ, նույնականության տարրեր ստեղծելու վրա, ապա

¹⁴⁵ **Յարությունյան Էդ. Ա.**, Մարդկային կեցության այլակերպումները, ԵՊՀ հրատ., Եր., 2018, էջ 83:
¹⁴⁶ Տե՛ս **Նույն տեղը**, էջ 84:

Երկրորդ փուլում պատմական անցյալը
 վերաիմաստավորվում է **գեղարվեստական**
գրականության մեջ և առաջ են քաշվում հերոսի և
հակահերոսի, հայրենասերի և ազգադավի պատմական
կերպարներ (Րաֆֆի, Մուրացան և այլք):
 Պատմությունը «բերվում է» ներկա՝ ապրումակցումը
 դարձնելով պատմական անցյալի ընկալման
 հիմնական միջոց: Անշուշտ, XIX դարն աչքի է ընկնում
 պատմավեպերի, պատմական փաստերին հիմնված
 թատերգությունների բազմազանության, որոնք
 արտացոլում են ժամանակաշրջանի հերոսի և
 դավաճանի, յուրայինի և օտարի, քաղաքացու և
 կրավորական կեցվածք ունեցող անհատի կերպարը,
 յուրովի ներկայացնում և մեկնաբանում պատմական
 փաստերը: Պատմության գեղարվեստական ընկալման
 մեջ, ի տարբերություն **պատմագիտական** ընկալման,
 գերակշռում է այլաբանականը, իռացիոնալը,
 զգացմունքայինը, որոնք դառնում են միջոց հայի
 ինքնությունը ներկայացնելու համար: Քանզի, թե
 պատմության փիլիսոփայությունը քննում է
 պատմության իմաստը, պարբերացնում
 պատմությունը, ապա գեղարվեստական
 գրականությանն ու պոեզիան շեշտադրում են
 պատմության արժեքային կողմը, որի նպատակը
 հայրենազգացության արթնացումն էր ժողովրդի
 մեջ և դրանով իսկ սեփական պատմությանը
 հաղորդակից լինելու միջոցով ազգային ոգու
 գորացումը: Եվ բնական է, որ XIX դարի պատմավեպերի
 հիմնական միտումը պետք է լիներ
 անհատականացումը: Ընտրվում էր պատմական որևէ
 իրադրություն կամ հայոց պատմության մեջ իր
 վճռորոշ դերն ունեցած որևէ անհատ՝ XIX դարի
 հիմնախնդիրներին համապատասխան և քննարկում
 ազգային ինքնության, հայրենասիրության և
 ազգասիրության տեսանկյունից: Յարկ է նկատել, որ

պատմությունն անկատարամբ հերմենևտիկական այս մոտեցումը գնահատում է պատմական իրադարձությունները սուբյեկտի և իրականություն փոխհարաբերման համատեքստում*։ Անհատականացմանն անխուսափելիորեն հաջորդում է իրականություն օբյեկտիվ արտացոլման հիմնահարցը, հատկապես այն պայմաններում, երբ դիտարկվում է այլ ժամանակաշրջանի իրականություն, և «ճանաչի՛ր ինքդ քեզ» սկզբունքը դառնում է պատմություն մեկնաբանման ելակետ։ Յրապարակի վրա գտնվող բազում պատմավեպերից (**Րաֆֆի, Մուրացան, Ճերեյց**) անդրադառնանք **Րաֆֆու** պատմավեպերին և դրանցում պատմական անցյալի անդրադարձին։ **Ի՞նչ էր պատմությունը, եթե ոչ «վարդապետարան»,** որի մեջ ապագա սերունդները կրթվում են և, բացի այդ, դրամիչոցով հաշվի առնում անցյալի սխալները¹⁴⁷։ Քննադատելով խորենացու պատմագրություն մեթոդաբանությունը՝ Րաֆֆին նշում է. «Պետությունը կազմող մարմինը -ամբոխը-չէ մտնում նրա պատմության մեջ. ժողովրդի ընտանեկան և քաղաքական կյանքից մենք ոչինչ չենք գտնում» և քանի որ հայերի սովորույթները գրեթե անփոփոխ են, անհրաժեշտ է քննել նաև ներքին կյանքը¹⁴⁸։ Այսպիսով, պատմագրություն մեջ Րաֆֆին փոխում է հարացույցը՝ **փաստագրությունն ից անցնելով ներքին կյանքի դիտարկմանը և վերլուծմանը**։ Րաֆֆու պատմավեպերում մերժվում են և՛ նախորդ, և՛ իր ժամանակի պատմագրության

* Սուբյեկտի և իրականություն հիմնահարցը ձևակերպում է Ֆուկոն՝ այն դիտելով լրիվ այլ տեսանկյունով՝ «Յոգատարությունն ինքդ քո նկատմամբ» և «ճանաչի՛ր ինքդ քեզ» սկզբունքների միջոցով։ Այսպատաշխատանքում սուբյեկտի և իրականություն հիմնահարցը դիտարկվում է վերջին սկզբունքի համատեքստում (Տե՛ս **Фуко М.**, *Герменевтика субъекта*, Наука, Санкт-Петербург, 2007, էջ 13-58)։

¹⁴⁷ Տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, Յատրո իններորդ, «Սովետական գրող» հրատ., Եր., 1987, էջ 620։

¹⁴⁸ **Րաֆֆի**, Գրականություն մասին, Յայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958, էջ 56-57։

որոշ մոտեցումներ և ձևավորվում է պատմական
անցյալի ընկալման նոր, խորհրդապաշտական մոդել,
որի նպատակը ոչ այնքան և ոչ միայն պատմությունը
հաղորդակից դառնալն է, այլև այն վերապրելը,
դրանով ոգեշնչվելը, գիտակցության մեջ և դրա
միջոցով այն շարունակելը, դրան հայրենասիրական
բնույթ տալը: Առհասարակ բարդ է Րաֆֆու
պատմավեպերում գտորոշել իրականի և
երևակայականի, հնարավորի և անհնարի սահմանը,
քանզի այն առավելապես գաղափարի (հայրենիքի,
ազգի, հերոսի) զարգացման փիլիսոփայությունն է:
Րաֆֆին այնպես է մեկնաբանում հայոց
պատմությունը, որ հաճախ ստիպված է լինում դիմել
չափազանցության, ինչը հատկապես նկատելի է
պատմավեպերից «Սամվել»-ի դեպքում: Այն հանդես է
գալիս որպես ազգային իդեալի զարգացման,
քաղաքական իրավիճակի «ախտորոշման» և լուծման
ուղիների փնտրման պատմություն: Մաշտոցի
շուրթերով քննադատելով հեթանոսությունից
անցումը քրիստոնեությանը՝ Րաֆֆին շեշտում է
քաղաքական մտածողության բացակայությունը:
Ինչպիսի՞ն էր իրերի կարգը հեթանոսական
ժամանակաշրջանում Րաֆֆուն այդքան էլ չի
հուզում, քանզի կարևոր էր այն, որ հեթանոս
Յայաստանը քաղաքական ընտրության կարիք չուներ:
Ե՛վ պարսիկների, և՛ հայերի թագավորները սերում
էին նույն պարթևական տոհմից, պաշտում էին նման
աստվածների և, ուրեմն, մինչև քրիստոնեության
սկզբնավորումը չկար կրոնական որևէ
զանազանություն: Յետագայում միայն այդ
անցումը կերպավորվեց քաղաքական
բովանդակությամբ: Չէ՞ որ քրիստոնեությունից
հետո Յայաստանը հայտնվեց Պարսկաստանի և
Բյուզանդիայի միջև՝ ստիպված լինելով ընտրել
այս կամ այն գերիշխանությունը: Եթե

Պալասանյանը սահամարում էր պատմական անցյալի անընդհատության դրսևորում, քանի որ հեթանոսության և քրիստոնեության մեջ դնում էր միագիծ և միատեսակ մեկ հոգեկերտվածք, ապա Րաֆֆին դեմ է նման դիրքորոշմանը և մեր պատմական դժբախտությանը համարում է հեթանոսության և ինքնաբերական անցումը: Դրանով իսկ կրոնական հարցերի պատճառով քաղաքական փակուղում հայտնվելը, ինչը փակուղի էր նաև կրթության, գիտության և, ի վերջո, ազգային գաղափարների կազմավորման առումով: Քրիստոնեության և իր մոտքով ջնջեց և՛ հեթանոս հայերենը, և՛ ավանդույթները, և՛ պատմամշակութային արժեքները: Անշուշտ, Րաֆֆու՝ կրոնի դերը բացարձակացնելը և դրա միջոցով պատմական անհաջողությունները բացատրելը չափազանցված մոտեցում է: Բացի այդ՝ առանց հեթանոս և քրիստոնյա հայի նկարագրերը հակադրելու կամ համադրելու անպտուղ է պատճառները փնտրել միայն կրոնական տարբերության մեջ: Այս մոտեցումը, սակայն, հարազատ էր որոշ լուսավորականների, որը և՛ աշխարհիկացման պահանջ էր, և՛ հայոց ինքնության մեջ կրոնի տեղի ու դերի նվազ կարևորության շեշտադրման անհրաժեշտություն:

Րաֆֆին հայոց ինքնության մեջ անհրաժեշտ է համարում պատմական անցյալի մեջ վերակենդանացնել նույնականության արժանի երեք կերպար՝ **Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց** և Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչը՝ **Սամվել***: **Սահակ Պարթևը** խորհրդանշում էր հայ ժողովրդի կրթության ազգայնացման սկիզբը, իսկ **Մաշտոցը** խոստանում էր՝ «վերաստեղծել մոռացված տառերը և

* Սամվելի մասին հիշատակվում է պատմության մեջ միայն այն, որ եղել է Սամվել անունով մի երիտասարդ, ով հանուն իր ազգի սպանել է հորն ու մորը:

ազատել մեր հասարակությունը մեզ համար խորթ հոլյն, ասորի և պարսիկ դպրությունից»¹⁴⁹: Տարիներ հետո այս խոստովաները կատարվում են՝ առկախ թողնելով Սամվելի դերակատարման հարցը: Եթե առաջին երկուսի պարագայում հստակ է ուղերձը, ապա **Սամվելը**, լինելով առանցքային կերպար, պետք է խորհրդանշեր ավելին, քան Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Ուրեմն, հայ ազգը կրթության ազգայնացումից, հայոց տառերը ստեղծելուց զատ՝ կարիք ունեւր ավելիի՝ **հայրենագագ ության**, այլ կերպ՝ **հայրենիքի նկատմամբ սիրո**: Բաֆֆին պատմական անցյալի միջոցով հայի ինքնության կերպավորման իր նախագծում, մատնանշելով ազգապահպան վերոնշյալ կետերը, շեշտադրում է առանձնահատուկը՝ հայրենասիրությունը: Սամվելը դառնում է անմնացորդ հայրենասիրության խորհրդանիշը, իր ժամանակի հերոսը և հայրենիքի փրկության իդեալը: Նա, ով հանուն հայրենիքի կարող է գրկել ծնողներին կյանքից, իսկ ծնողը, հայի ընկալման մեջ, համարվում էր գերակա արժեքներից մեկը, ուրեմն հայրենիքի սերը գերակա էր ծնողների հանդեպ սիրուց: Ներքին կյանքի նման ընկալումները հաճախ նաև բեմադրվում էին և մեծ պահանջարկ ունեւին այդ ժամանակաշրջանում: Դրանորհիվ **պատմական անցյալի «բեմականացումը»** նպաստում էր թատերական այնպիսի գրականության ստեղծմանը, որը, անկասկած, հայի ինքնաընկալման և ինքնաանդրադարձման փայլուն միջոց էր: Հայոց ինքնության հոլովումը չթողնում պատմական անցյալը նման համատեքստում քննարկելը նպաստում էր և՛ նոր իդեալների, և՛ նոր հոգեկերտվածքի սաղմնավորմանը, և՛ նույնականության նոր մոդելների ներդրմանը: Պետք է նկատել, որ, չնայած,

¹⁴⁹ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Հատոր ութերորդ, «Սովետական գրող» հրատ., Եր., 1986, էջ 75:

որոշ առումով հայրենասիրական գաղափաները ծայրահեղ բովանդակությամբ էին արտահայտվում, սակայն լուսավորականության շրջանում նման մոտեցումը խիստ անհրաժեշտ էր: Յայի իդեալները, ազգային ինքնության մասին պատկերացումներն այնքան անկենսունակ էին, որ «հայրենասիրական ցնցման» կարիք ունեին, իսկ այդ դերը կատարում էր գեղարվեստական գրականությունը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ հայոց ինքնության լուսավորական նախագծում պատմական անցյալը դիտարկվում է ինքնաճանաչողության ծիրում՝ շարունակելով ազգային հոգեկերտվածքի, նկարագրի ճանաչողության լուսավորական մոտեցումները: Ազգային հոգեկերտվածքի ճանաչողության արդյունքում ուրվագծվում է հայի նկարագիրը **քաղաքակրթական չափան** միջոցով դիտելով մոտեցումը, որն առավել ընդգրկուն է դառնում պատմական անցյալը դիտարկելիս: Վերջինս քննվում է երկու մոտեցմամբ՝ **պատմագիտական և փիլիսոփայական: Պատմագիտական մոտեցումն** աչքի է ընկնում պատմության իմաստավորման փաստական, գիտական, իսկ **փիլիսոփայական՝** առավել ապեստարժեքային-գնահատողական մոտեցմամբ: **Պատմագիտական մոտեցումը** լրացնում է ինքնաճանաչողության լուսավորական դրոյթները, և պատմական անցյալը դիտում է քաղաքակրթական ծիրում: Այն է՝ հայ ժողովրդի ամբողջական, փաստական պատմության կենդանացման միջոցով (**Չամչյան**) հաստատել դրագոյությունը քաղաքակրթության մեջ, սաղմնավորել պատմության անընդհատության գաղափարը՝ անդրադառնալով և՛ կրոնի, և՛ գիտության, և՛ արվեստի, և՛ փիլիսոփայության պատմությանը (**Ստ. Պալասյան**): **Փիլիսոփայական** մոտեցումը պատմական անցյալը

դիտարկում է և՛ քաղաքակրթության լույսի ներքո,
և՛ ազգային ինքնության իդեալների ստեղծման
տեսանկյունից: Քաղաքակրթական լույսի ներքո
դիտարկելիս այս մոտեցման ներկայացուցիչները
(Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան ց)
երաժշտության, լեզվի, փիլիսոփայության
պատմական ընթացքի միջոցով պատմական անցյալը
գնահատում, արժևորում են քաղաքակրթության մեջ
ունեցած տեղի և դերի տեսանկյունից: Ազգային
իդեալներ ստեղծելու առումով փիլիսոփայական
մոտեցման ներկայացուցիչները **(Րաֆֆի)** պատմական
անցյալի մեջ արժևորում և վերաիմաստավորում են
այն դրվագները, որոնք հայրենասիրության,
ազգասիրության հիմք ունեն և կարող են արդի
ժամանակներին համապատասխան իդեալներ
ստեղծելու առանցք դառնալ:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

ԿՐՈՆԻ ԵՎ ԼԵՉՎԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

3.1 ԿՐՈՆԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԸՍԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Հայոց ինքնուրույն լուսավորական նախագծի կառուցարկման կարևորագույն տարրերից մեկը կրոնն է: Վերջինիս դերը հայ ազգային ինքնուրույն մեջ պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առանցքային են սոցիալ-պատմական և հոգեկերտվածքային գործոնները: Դարեր շարունակ հայ ազգը, ապրելով քաղաքական կախյալության և պետականազուրկ կարգավիճակի պայմաններում, կրոնի՝ մասնավորապես եկեղեցու միջոցով է լուծել այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ ազգային մշակույթի և ավանդույթների, ազգային կերպարի պահպանումը և այլն: Իսկ հոգևոր հայրերը ստանձնել են սոցիալական բազում դերեր՝ այդպիսով լուծելով ինչպես ներազգային խնդիրներ, այնպես էլ ներկայանալով որպես միջնորդ օղակ **«Ուրիշ»-ների** հետ փոխհարաբերության մեջ: Իրերի նման կարգև ու տրամաբանությանը զգալի ազդեցություն են ունեցել քրիստոնեական կրոնի յուրացման

առ ու մ ո վ : Ազգային ինքնուրոյան համատեքստում քրիստոնեական կրոնի և ազգային ինքնուրոյան փոխհարաբերությունն ամրապնդվել է, ավելին՝ կրոնական գործունը դարձել է հայոց ինքնուրոյան որոշման հիմնարար չափանիշ : Ազգապահպան դեր է ունեցել հայի՝ **կրոնական, դավանաբանական պատկանելությունը**. հայ լինել նշանակում է լինել Յայաստանյայց առաքելական եկեղեցու հետևորդ :

Լուսավորականության մեջ կրոնի հարցը դիտարկվում է նախ դավանանքի, ապա նաև հոգևորականների տեղի և դերի հստակեցման, հայի հոգեկերտվածքի հետ առնչակցություն համատեքստում : Յարկ է նշել, սակայն, որ հայ Լուսավորականությունը կրոնը ոչ միայն քննում է ազգային ինքնուրոյան ծիրում, այլև՝ գուտ փիլիսոփայական և աստվածաբանական տեսանկյունից : Այս առումով Լուսավորական փիլիսոփայության մեջ աննշան ուղղությունն է նաև **աստվածամերժությունը՝ աթեիզմը***, որոշ տեղ ունի նաև դեիզմը, իսկ հոգեկերտվածքային տեսանկյունից՝ **հեթանոսական կրոնի** վերածնման վերաբերյալ սակավաթիվ տեսությունները : Յայ Լուսավորականների կողմից կրոնի հարցի քննարկման **նպատակն էր** նախապատրաստել անցումը կրոնական համայնքից աշխարհիկ, Լուսավորական

*XIX դարի կրոնական գիտակցության փոխակերպումներից էր նաև աթեիզմը, որը գաղափարական ոչ աննշան, սակայն գերիշխող հոսանք էր և ուներ իր հետևորդները, ովքեր հիմնավորում էին կրոնի և եկեղեցու ավելորդ լինելու դրույթը : «Դարի կեսերի ազատախոհական առաջադիմական միտքը գգալի դեր կատարեց գիտության, աշխարհիկ մտքի զարգացման գործում, նպաստեց կրոնից գիտակցության ազատագրմանը, հասարակական ու անհատական կյանքի, սոցիալ-քաղաքական հարաբերությունների, գաղափարախոսության ու մտածողության ապակրոնացմանը», - նշում է Ա. Սարգսյանը : Այդ ապակրոնացման արտահայտումներից մեկն էլ աթեիզմն էր (Տե՛ս **Սարգսյան Ա.**, XIX դարի կեսերի հայ Լուսավորական միտքը ընդդեմ կրոնական գաղափարախոսության և արդիականությունը, «Յայաստան» հրատ., Եր., 1990, էջ 198) :

համայնքին՝ ուղենիշ ունենալով **ազգ, հայրենիք, պետություն** գաղափարները: Վերջիններս կրոնական հարացույցում ոչ էական, երկրորդական դեր ունեն, իսկ լուսավորական հարացույցում՝ էական: Կրոնի դերի դիտարկման մյուս **նպատակն է սահմանազատել հոգևոր ոլորտն աշխարհիկից, կրթական գործառույթի իրականացումը հանձնել մասնագետ-մանկավարժներին և այլն**: Ազգային հարցերը լուծելիս էլ առաջնորդվել ազգային շահով և ոչ կրոնական գաղափարախոսությամբ: Յայնց ինքնություն լուսավորական նախագծում կրոնի հարցը դիտարկվում է **ա) դավանաբանության ծիրում, բ) աշխարհիկացման՝ կրոնի տեղը և դերը սահմանելիս, գ) հայի հոգեկերտվածքի, քրիստոնեության և, որոշ առումով, նաև հեթանոսության համատեքստում**: Յայլուսավորական փիլիսոփայության մեջ գրեթե չկան այնպիսի տեսաբաններ, ովքեր չեն անդրադարձել կրոնի հարցին: Մեծամասնությունը գրեթե պաշտպանում էր միևնույն տեսակետը: Այդ իսկ պատճառով անդրադառնանք այն մոտեցումներին, որոնք և՛ ամբողջական են, և՛ ժամանակի շունչն արտահայտող, և՛ տարբերվում են տարածված տեսակետից: Դավանաբանությանը, հոգևորականների տեղի և դերի հստակեցման հարցին, հայի հոգեկերտվածքի, քրիստոնեության և հեթանոսության առչակցությունն անդրադարձել են **Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Բաֆֆին, Գր. Արծրունին, Կ. Կոստանեանցը** և այլք:

Դավանաբանությունն էական դեր ունեցող ազգային ինքնության որոշման հարցում: **Լինել հայ նշանակում էր լինել առաքելական եկեղեցու հետևորդ**՝ չհայտնաբանելով թե ի՞նչ է ենթադրում քրիստոնյա լինել. հավատ առ Աստված, առ

քրիստոնեական վարդապետություն, թե՛ համոզմունք առ հոգևոր ինքնություն գոյություն: Բացի այդ՝ հոգևոր հայրերը և եկեղեցին զգալի ազդեցություն ունեին և՛ քաղաքական, և՛ հոգևոր, և՛ ազգապահպան պատկերացումների ու ծրագրերի ձևավորման վրա: Քրիստոնեական կրոնի և դավանաբանության վերաբերյալ ուրույն մոտեցում էր մշակվել դեռևս Մխիթարյան միաբանությունում: Այդ կապակցությամբ Ա. Չոպանյանը գրում է, որ «Մխիթարեղալեկումենիզմի (եկումենիզմը քրիստոնեական տարբեր դավանաբանությունները հաշտեցնելու ուղղություն է -Ն.Մ.) ռահվիրայ մը»¹⁵⁰: Մխիթարյանները, նպատակ չդնելով մեկնել կրոնական հարցերը, խմբագրում են **«Լինել հայ նշանակում էր լինել առաքելական եկեղեցու հետևորդ»** դրույթը: Նրանց գործունեությամբ սկիզբ էր դրվում այն գաղափարախոսությանը, որ ազգությունը կրոնից կախված չէ. **միաժամանակ կարելի է լինել ազգասեր և դավանաբանական այլ ուղղության հետևորդ**¹⁵¹: Մխիթարյանները մինչև ևս ավորական ինքնություն մեջ սրբագրեցին դավանաբանական հարցերը և առաջարկեցին ինքնություն այնպիսի հարացույց, որը հիմնված է ոչ թե դավանաբանության, այլ ազգասիրության վրա: Խմբավորելով **կրոն, հավատ, եկեղեցի*** հասկացությունները՝ նրանք սահմանազատեցին

¹⁵⁰ **2 Էքիեան Յ. Լեւոն**, Յոգիի եւ ինքնութեան հետքերով, Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., Եր., 2000, էջ 134:

¹⁵¹ Տե՛ս **Լեոն**, Երկերի ժողովածու տասը հատորով, Յատոր Երրորդ, «Յայաստան» հրատ., Եր., 1973, էջ 496:

***Կրոնն** աշխարհայացք է, աշխարհազգացողություն, նաև համապատասխան վարքածևի գաղափարական հիմք, որն արտահայտվում է Աստծո գոյության նկատմամբ հավատով: **Յավատը** այնպիսի գոյության ընդունումն է, որը չի ապացուցվում զգայական կամ քանակական ճանապարհով, հետևապես չի հավակնում նաև օբյեկտիվության: **Եկեղեցին** (հուն.՝ kyriakon-Աստծո տուն) այն վայրն է, որտեղ տեղի է ունենում Աստծո փառաբանությունը (տե՛ս «Философский энциклопедический словарь», М., 2009, էջ 392, 66, էջ 508):

ազգը կրոնից: Եվ, ինչպես նկատում է Ա. Չոպանյանը, «Պահելով հանդերձ կրօնական խորքը, որ իրենց էութեան հիմունքը կը կազմեր, այդ խորքին վրայ ասղնագործեցին հայրենասիրութեան ու գեղեցկասիրութեան ամենէն շքեղ ծաղիկները: «Աշխարհական տարրը» «մարդկային տարրը» մտցուցին հայ գրականութեան մէջ, ամէն բանէ վեր դասեցին գեղեցիկ սերը, ըմբռնեցին եւ նոյն իսկ ընդգրկեցին հեթանոսականը՝ իր գեղեցկութեանը համար»¹⁵²: Եթէ մինչ XVIII դարը ազգը սահմանվում էր «կրոնական» եզրույթով, ապա XVIII դարից սկսած օրակարգային խնդիր էր հիմնավորել այս տրկուսի միմյանցից անջատ գոյությունն ու նենալու անհրաժեշտությունը: Հայ եկեղեցու գերիշխանությունը արդեն իսկ ենթադրում էր կրոնական տարրերի գերակայությունն, ինչն ազդում էր քաղաքական ինքնուրույն գոյության պահանջի սաղմնավորման և գործադրման վրա: Գուցե դարեդար հայը կարողացել էր պահպանել իր լինելիությունը «կրոնական նման հանդերձանքով», սակայն հարց էր առաջանում՝ **ի՞նչ կարգավիճակով**: Մխիթարյանների մոտեցումը նաև ուներ կարգավիճակի հստակեցման ուղերձի նշանակություն: Ազգային ինքնության մէջ շեշտադրելով մշակութային կողմը՝ Մխիթարյանների ավանդը կրոնի և ազգության փոխհարաբերության հարցում նախ դավանաբանությանը երկրորդային նշանակություն տալն էր, ապա՝ «Ոչ ազգս կրօնքիս կը գոհեմ, ոչ կրօնքս ազգիս» դրույթի ընդունումը: Նրանք տարանջատեցին եկեղեցական (իր դեմս հոգևորականների) ու աշխարհիկ կյանքը, ճշգրտեցին հոգևորականների տեղը և դերը: Մխիթարի «...մեծ արժանիքը եղաւ վերանորոգումը եւ

¹⁵² **Չոպանյան Ա.**, Վենետիկի Մխիթարեանները, «Անահիտ», թիւ 12, Բարիզ, 1899, էջ 359:

բարեկարգումը հայ վանական ինկած կարգերուն, անոնց կրօնաւորական յօրինուածքին, ուղեւոր վերապրեցնել հայ վանականութեան նախկին կարգապահութիւնը՝ աւելացնելով միանձնական երեք Ուխտերու (հնազանդութեան, աղքատութեան եւ կուսակրօնութեան) ներքին բացայայտութիւնն ալ»¹⁵³: Իսկ կրօնը՝ որպէս հոգևոր ոլորտի ճյուղ, Մխիթարյանների կողմից զգալի ուշադրութեան էր արժանանում. մշակվում էին կրօնն ուսուցանելու խաղային եղանակներ*, կատարվում էին արժեքավոր թարգմանութեան գործեր: Մխիթարյանների գործունեությունը **ազգայինը կրօնական բնույթից մշակութայինի, գիտականի վերածելու և կրթական փիլիսոփայության առաջին փորձերից էր, քանզի Մխիթարյանների գործունեության հիմնական նպատակներն էին և զվակական բարեփոխումները, տոհմական գրականության վերակենդանացումը և կրթության ծավալումը**¹⁵⁴: Յայնոց ինքնության և կրթական նախագծի մշակման գործում Մխիթարյանների դերը թեև եական է **եկեղեցի, կրօն, դավանաբանություն, հավատ նույնությունը** խախտելու առումով, սակայն նման մոտեցումը հղի էր բազում վտանգներով, որոնք հետագայում ի հայտ եկան և քննդատվեցին և կրթականներից շատերի կողմից: Յարկ է նշել, որ դարեր շարունակ դավանանքով ազգությունն որոշելու մոտեցումը գուցե պայմանավորված էր այն բանով, որ յուրաքանչյուր շեղում կարող էր խարխլել ազգային միասնության հիմքերը: Դավանանքը

¹⁵³ **Ե արտըմեան Տ. Վարդապետ, Մխիթարեան գաղափարական և Մխիթարեան ինքնութիւն**, Ա. հ., Վեներտիկ, 1994, էջ 24:
 * Սրա վառ վկայությունն է Մխիթար Սեբաստացու՝ «Քրիստոնեական վարդապետութիւն, որի գործունի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալոյ» աշխատությունը:
¹⁵⁴ Տե՛ս **Ալան Յ.**, Մխիթարեանք գրականութեան հանդէպ, Մխիթարեան տպ., Վեներտիկ, 1902, էջ 13:

Երկրորդային դեր կարող էր ունենալ այնպիսի
 ինքնուրույն ունենրի պարագայում, որոնց պատկանող
 ազգն ուներ պետություն: Ինչևէ, դավանանք, կրոն,
 հավատ և եկեղեցի հասկացություններն էր միմյանցից
 անջատ դիտելու մոտեցումը հիմք դարձավ, որպեսզի
 դրվի **նաև հոգևորականների տեղի և դերի հարցը**: Եթե
 եկեղեցու՝ որպես սոցիալական ինստիտուտի
 «գործառույթն» էր կարգավորել հավատացյալների
 աշխարհիկ կյանքը, ապա Լուսավորականության
 ժամանակաշրջանում դրա կարիքը բնավ չկար:

Չառաջնորդվելով աստվածամերժության կամ
 հակակրոնական գաղափարներով՝ Մխիթարյանները և
 Մադրասի խմբակի ներկայացուցիչները հիմք
 նախապատրաստեցին, որպեսզի արդեն XIX դարում
 ձևակերպվի հետևյալ հարցը՝ **ո՞րն է կրոնի տեղը և
 դերը հայ հասարակության մեջ**: Մխիթարյանները
 հայ լիներու չափանիշը համարեցին
 ազգասիրությունը և շրջանցեցին կրոնական
 պատկանելությունը, իսկ Մադրասի խմբակի
 ներկայացուցիչները սահմանափակեցին եկեղեցու
 գործառույթները: Մխիթարյանների և Մադրասի
 խմբակի գործունեության մեջ դրվեց ինքնուրույն
 արդիականացման երկու կարևոր հիմք՝ **կրոնի
 իմաստավորման մշակության-ազգասիրական
 ենթացքը**՝ դավանաբանական հարցերի նկատմամբ
 նոր մոտեցումներով և **կրոնի վերաիմաստավորման
 քաղաքական հիմքը՝ հոգևոր և աշխարհիկ
 իշխանության տարանջատմամբ**, ազգային կյանքում
 հոգևորականների տեղի և դերի ճշտում: Ահա այս
 երկու հիմքը հաշվի առնելով էլ՝ Լուսավորական
 գաղափարախոսության մեջ դրվեց
 աշխարհականացման և կրոնի տեղի ու դերի
 վերաիմաստավորման սկիզբը:

Պատմության և ազգային ինքնություն.
հոգևորականների տեղն ու դերը ազգային
կյանքում: Արդեն XIX դարի առաջին կեսին **Աբովյանը**
կրոնի հարցում ուներ **լուսավորական-**
պահպանողական մոտեցում: Կարևորելով
քրիստոնեական կրոնի դերը հայ ազգի կյանքում՝
Աբովյանը քննադատեց հոգևորականների՝
դրսևորելով հոգևոր իշխանությունը աշխարհիկ
իշխանությունից տարանջատելու մոտեցում:
Ազգապահպանման մեջ առանցքային համարելով
երկու հիմնաքար՝ հավատը և լեզուն, Աբովյանը
լուսավորական բովանդակություն տվեց «կրոն»
հասկացությանը, քանզի «հավատ» հասկացության
կիրառումը հնարավորություն ընձեռեց կրոնը
դիտարկել առավել լայն համատեքստում. այն
մեկնել ինչպես հավատի*, այնպես էլ գուտ
աստվածաբանական-կրոնական վարդապետության
իմաստով: Որոշ հիմք ունեւնան այն տեսակետը, որ
դեռևս հեթանոսական ժամանակարշրջանից հայի
հոգեկերտվածքում անսյուրականի նկատմամբ
հավատն ուներ էական դեր: Եվ, առահասարակ,
լուսավորական մոտեցումը ենթադրում էր **«կրոն»,**
«հավատ», «եկեղեցի» հասկացությունները
տարանջատել միմյանցից և դրանք չդիտարկել մի
հարթությունում: Բացի այդ, միջնադարյան այն
պատկերացումը, թե մարդու և Աստծո միջև միջնորդ
եկեղեցին, այլևս արդիական չէր. հավատը կապում էր

* Ինչպես նկատում է Ա. Սարգսյանը, լայնորեն տարածված է
հավատն իբրև կրոն ընկալելու շփոթությունը, այնինչ
«հավատը միայն կրոնական գիտակցությանը բնորոշ երևույթ
չէ, այլ հանդես է գալիս աշխարհայացքի ամենահիմնական
հիմնադրույթներից մեկը» (տե՛ս **Սարգսյան Ա.**, ժամանակակից
հայ եկեղեցին (կրոնագիտական-ազգագիտական
վերլուծություն), «Վանեվան» հրատ., Եր., 1999, էջ 37): Ընդ որում,
հավատի օբյեկտ կարելի է համարել նաև իդեալը. մեր
պատկերացումները որևէ երևույթի մասին: Պարտադիր չէ, որ
հավատի օբյեկտը մարմնավորվի Աստծո կամ երկրային այլ
ուժի մեջ (տե՛ս **F. H. Bradley**, Faith, The Philosophical Review, Vol. 20, No. 2 (Mar., 1911), Duke University Press on
behalf of Philosophical Review, էջ 116):

մարդուն ու Աստծուն անմիջականորեն, առանց հոգևոր հայրերի միջնորդության: Վերոնշյալը, սակայն, բնավ չէր նսեմացնում Աստծո դերը անհատի կյանքում, այլ որոշակիացնում, սահմանափակում էր եկեղեցու, հոգևորականների դերակատարումը: Աբովյանը անժխտելի էր համարում այն, որ որպես հավատի օբյեկտ դարեր շարունակ հանդես է եկել քրիստոնեությունը, ինչի շնորհիվ հայ ազգը պահպանել է իր գոյությունը: Չնայած պետականության կորստին, կարծում է Աբովյանը, հայ ազգը շարունակել է իր հարաբերականորեն ինքնուրույն գոյությունը, ինչը պայմանավորված է հետևյալով. «...մեր ազգը քրիստոնյա էր, մյուսները կամ կռապաշտ, կամ մահմեդական, որ քրիստոսի հավատը ուզում էին ջնջեն»¹⁵⁵: Այս տարբերությունը դառնում էր հակադրություն **«Ուրիշ»-ի**, օտարի ինքնությունը, որի շնորհիվ էլ պահպանվում էր հայ ազգային ինքնության ամբողջականությունը. հակասող արժեհամակարգը չէր կարող ընդունել ի ինքն: Ազգային ինքնության մեջ կարևորելով քրիստոնեական կրոնի դերը՝ Աբովյանը հանդես էր գալիս ինչպես լուսավորական, այնպես էլ պահպանողական տեսանկյունից, ինչը հաշտեցնող, միջին դիրքորոշում էր կրոնի և հոգևոր դասի վերաբերյալ լուսավորական մոտեցումներում: Այն մի կողմից ընդունում էր **քրիստոնեական կրոնի ազգապահպան դերը, մյուս կողմից քննադատում հայ հոգևորականներին**: Աբովյանից

հետո հայ լուսավորական մտքում ոչ միայն հոգևորականությունը, այլև բուն քրիստոնեական կրոնը ենթարկվում է վերաիմաստավորման: **Մ. Նալբանդյանը**, օրինակ, արդիական է դարձնում այն հիմնահարցը, թե **ո՞րն է կրոնի տեղն ու դերը անհատի կյանքում**: Տարանջատելով մարմինն ու հոգին,

¹⁵⁵ **Աբովյան Խ.**, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1984, էջ 421:

Նալբանդյանն ընդունում է, որ մարդը միայն մարմին չէ և կազմված է աննյութ տարրից՝ հոգուց: Եվ քանի որ հոգին վերացական հասկացություն չէ, ապա պետք է ընդունել նաև, որ իրականության մեջ այն ունի գոյություն իր ձևը: Այդ գոյությունն արտահայտվում է կրոնի միջոցով, որը նալբանդյանական մեկնաբանությամբ կարելի է համարել «ներքին» և «արտաքին» մարդու փոխհարաբերության կարգավորիչ: Այսպես, երբ որևէ գործողություն կատարելիս մարդը երկմտում է՝ **ի՞նչն է ճշմարիտ և ի՞նչը՝ սխալ**, նա հղում է կատարում կրոնում տեղ գտած դրույթներին՝ ըստ այդմ կարգավորելով իր վարքը¹⁵⁶: Այս համատեքստում կրոնը ձեռք է բերում բարոյական արժեհամակարգի ձևավորման գործառնություն: Կարևոր է շեշտել, որ նալբանդյանի այս ընկալումը հիմնվում է կրոնի **ինքնուրույն գոյություն** վրա: Եթե կրոնն ինքնին ճշմարիտ արժեհամակարգ ձևավորելու հնարավորություն ունի, ապա սաչի ենթադրում, որ հոգևոր դասը ևս նույն հավանությունը կարող է ունենալ: Կարևորելով կրոնի դերը յուրաքանչյուր անհատի կյանքում՝ նալբանդյանը, սակայն, փորձում է ապացուցել, որ կրոնն **ազգային կատեգորիա չէ** և այն չի կարող դառնալ գոյության առանցք: Ինքը՝ քրիստոնեական կրոնը, միատարր չէ. «...քանիսը հաշվեմ. լուսավորչական, հռոմեական, բողոքական, հունական»¹⁵⁷: Իսկ եթե ինչ-որ բան միատարր չէ իր ներսում, ապա չի կարող լինել միասնության հիմք, քանի որ ազգի ներսում յուրաքանչյուր անհատ կարող է ունենալ դավանաբանական տարբեր նախընտրություններ: Այդ պարագայում իրավացի

¹⁵⁶ Տե՛ս **Նալբանդյան Մ.**, Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք, «Երկերի լիակատար ժողովածու», 3 ատոր 2, Եր., 1980, էջ 246-247:

¹⁵⁷ **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, 3 ատոր 3, ԽՍՀՄ հրատ., Եր., 1940, էջ 387:

հարց է առաջանում՝ առաքելականությունը ինչպե՞ս կարող է լինել միավորող գաղափար: Բացի այդ, եկեղեցին ինչ-որ չափով անշարժություն, կրավորական կեցվածքի մարմնավորումն է, քանզի «...բնակարան եղած են մոլի, հեշտասեր, ծուլլանձանց, որք ընդունելով կրոնավոր անունն, ազգն հովվելու պաշտոն ստանձնելով, թողած են յուրյանց հոտն անտերունչ ...»¹⁵⁸: Այնինչ, ազգային առաջընթացը ենթադրում է շարժում, փոփոխություն, նոր գաղափարների կենսագործում: Կրոնից զտելով ազգային տարրը և այն դիտելով անհատական մակարդակում՝ Մ. Նալբանդյանը հստակ սահման է անցկացնում կրոնի, հավատի, եկեղեցու, հոգևոր հայրերի միջև: Մինչև լուսավորական ինքնություն մեջ վերոնշյալները գրեթե չէին տարբերակվում, այնինչ լուսավորական ինքնություն պահանջը նախդրանց տարբերակումն է, ապա ազգային կյանքը կրոնական շրջանից ազատելու առանձին դիտելը: Մ. Նալբանդյանի մոտեցումը հստակ է՝ **կրոնը անջատել ազգային կյանքից այնպես, ինչպես հոգևոր իշխանությունը աշխարհիկ իշխանությունից**: Մ. Նալբանդյանը չի ընդունում նաև Աբովյանի այն մոտեցումը, որ քրիստոնեական կրոնն է պահպանել մեր գոյությունը: Ըստ նրա, հայ ազգի գոյության պահպանումը պատմական ներքոշարադրյալ պայմանների արդյունք է և ոչ ավելի: Նալբանդյանը նկատում է՝ «Եթե հայոց ազգը յուր կրոնը պահելով մնաց աշխարհի երեսին, այդ մասին շնորհակալություն մահմեդականությանը. սաբացասաբար պահպանեց հայերի կրոնը: ...Թող հայոց ազգը, իր թագավորության կործանման օրից, ստրկանար որևէ քրիստոնյա կառավարության, այն ժամանակ կտեսանեինք»¹⁵⁹: Նալբանդյանը սրբագրում

¹⁵⁸Նույն տեղում, էջ 153:

¹⁵⁹Նալբանդյան Մ., Երկեր, «Լույս» հրատ., Եր., 1987, էջ 37:

Ե մի ն չ լ ու ս ա վ ո Ր ա կ ա ն ա յ ն դ Ր ու յ թ ը , թ Ե
ք Ր ի ս տ ո ն Ե ա կ ա ն կ Ր ո ն ը , մ ա ս ն ա վ ո Ր ա պ Ե ս հ ա յ
Ե կ Ե ղ Ե ց ի ն Ե պ ա հ պ ա ն Ե լ ա զ գ ի գ ո յ ու թ յ ու ն ը : Ա զ գ ի
գ ո յ ու թ յ ու ն ը պ ա հ պ ա ն վ Ե լ Ե ար տ ա ք ի ն գ ո Ր ծ ո ն ն Ե Ր ի
շ ն ո Ր հ ի վ , ո Ր ո ն ք ար տ ա հ ա յ տ վ Ե լ Ե ն ար ժ Ե ք ա յ ի ն
տ ա Ր Բ Ե Ր ու թ յ ա մ Բ :

Յ ա յ ժ ո ղ ո վ ու Ր ո ղ ը , ը ս տ ն Ր ա , ք Ր ի ս տ ո ն յ ա
տ ի Ր ա կ ա լ ն Ե Ր ի տ ի Ր ա պ Ե տ ու թ յ ա ն ն Ե Ր ք ո գ տ ն վ Ե լ ու
պ ա Ր ա գ ա յ ու մ կ ձ ու լ վ Ե Ր և մ ի ա յ ն ա յ ս
տ ա Ր Բ Ե Ր ու թ յ ու ն ն Ե կ ա ն գ ու ն պ ա հ Ե լ ն Ր ա ն : Յ ա Ր կ Ե
ն կ ա տ Ե լ , ս ա կ ա յ ն , ո Ր Ն ա լ Բ ա ն դ յ ա ն ի ա յ ս մ ո տ Ե ց ու մ ը
խ ի ս տ չ ա փ ա գ ա ն ց վ ա ծ Ե : Ե թ Ե ա զ գ ա յ ի ն մ ի ա ս ն ու թ յ ա ն
հ ի մ ք ը կ Ր ո ն ա կ ա ն -դ ա վ ա ն ա ք ա ն ա կ ա ն
տ ա Ր Բ Ե Ր ու թ յ ու ն ը չ Ե Ր , ա պ ա ի ն չ պ Ե ° ս Բ ա ց ա տ Ր Ե լ
օ տ ա Ր Ե Ր կ Ր ն Ե Ր ու մ ա զ գ ա յ ի ն ի ն ք ն ու թ յ ա ն
պ ա հ պ ա ն ու մ ը : Չ Ե ° ո Ր ա յ դ գ ո Ր ծ ու մ կ ա Ր ն ո Ր /Ե ա կ ա ն Ե
Ե կ Ե ղ Ե ց ու դ Ե Ր ը : Ը ն դ ո Ր ու մ , ա յ դ Ե Ր կ Ր ն Ե Ր ի մ Ե ծ
մ ա ս ու մ պ Ե տ ա կ ա ն կ Ր ո ն ը ք Ր ի ս տ ո ն Ե ու թ յ ու ն ն Ե և
ար ժ Ե ք ա յ ի ն տ ա Ր Բ Ե Ր ու թ յ ու ն չ կ ա , ի ն չ պ Ե ս
ա կ ն ա Ր կ ու մ Ե Ր Մ . Ն ա լ Բ ա ն դ յ ա ն ը , ու Ր Ե մ ն կ ա Ր Ե լ ի Ե
Ե ն թ ա դ Ր Ե լ , ո Ր ար ժ Ե ք ա յ ի ն տ ա Ր Բ Ե Ր ու թ յ ու ն ը թ ու յ լ
փ ա ս տ ա Ր կ Ե Ր և հ ա յ ո ց մ Ե ջ կ Ր ո ն ի տ Ե ղ ն ու դ Ե Ր ն
ա ճ ա վ Ե լ խ ո Ր ք ա յ ի ն պ ա տ ճ ա ճ ն Ե Ր ու ն Ե Ր :

Ա ն խ ո ս , ա ն վ ի ճ Ե լ ի Ե ն ա ն ա յ ն , ո Ր
կ Ր ո ն ն ա ճ ա ն ձ ի ն ա ն հ ա տ ի կ յ ա ն ք ու մ լ Ր ի վ ա յ լ դ Ե Ր
ու ն ի , ա զ գ ի կ յ ա ն ք ու մ ` ա յ լ : Ա յ ս հ ա կ ա ս ու թ յ ու ն ը
ն կ ա տ Ե լ Ե Ր ն ա ն Մ . Ն ա լ Բ ա ն դ յ ա ն ը : Ա յ ս պ Ե ս , կ Ր ո ն ի տ Ե ղ ն
ու դ Ե Ր ը հ ա յ ա զ գ ա յ ի ն կ յ ա ն ք ու մ
մ ա ս ն ա վ ո Ր Ե ց ն Ե լ ի ս ` Ն ա լ Բ ա ն դ յ ա ն ը գ գ ա լ ի ո Ր Ե ն
ն ա հ ա ն ջ Ե ց ի Ր ի ս կ դ Ր ու յ թ ն Ե Ր ի ց : Մ խ ի թ ա Ր յ ա ն ն Ե Ր ի
դ Ե Ր ը , օ Ր ի ն ա կ , գ ն ա հ ա տ Ե լ ո վ կ Ր ո ն ա կ ա ն
Բ ա Ր ո յ ա կ ա ն ու թ յ ա ն և ա զ գ ա ս ի Ր ու թ յ ա ն դ ի Ր ք Ե Ր ի ց `
Ն ա լ Բ ա ն դ յ ա ն ը ո չ մ ի ա ն շ ա ն ա կ Ե ար ժ և ո Ր ու մ ա յ ն :
Կ Ր ո ն ն ա ն մ ի ջ ա կ ա ն փ ո խ հ ա Ր ա ք Ե Ր ու թ յ ա ն մ Ե ջ դ ն Ե լ ո վ
Բ ա Ր ո յ ա կ ա ն ար ժ Ե հ ա մ ա կ ա Ր գ ի ձ և ա վ ո Ր մ ա ն հ Ե տ `

Նալբանդյանը նախ արձանագրում է, որ քրիստոնեությունն անմիջականորեն առնչվում է ազգային հոգեկերտվածքին, աշխարհայացքին, ապատեսնում է վտանգ այլադավանության մեջ: Ըստ նրա, Մխիթարյանները պապական բարոյականության հետևորդ են, որը ոչ միայն լուսավորության ակունք չէ, այլև բարոյական արժեհամակարգի հակոտնյան է¹⁶⁰: Պապական բարոյականությունն իր իշխանությունն օգտագործում է իջարս ժողովրդի, իսկ Մխիթարյանների կատարած թարգմանությունները, որոնք, ըստ Նալբանդյանի, սքոլաստիկական են և չեն կարող նպաստել ազգի առաջընթացին, անմիջականորեն նպաստում են հայ ժողովրդի ներսում պապականության տարածմանը: Նալբանդյանն ընդունում է, որ «Մի մարդու, մի ընկերության կամ մի ամբողջ ազգի բարոյականություն երկու աղբյուր ունի. առաջինը և գլխավորը՝ կրոնը, երկրորդը՝ լուսավորությունը... Մխիթարյանց բարոյականության տարերքը որոնելու համար դարձյալ պիտո է մեզ դիմել դեպի նոցա կրոնը, որ է պապականություն»¹⁶¹: Այս պիսով, ազգը կրոնից անջատ դիտող Նալբանդյանը էական դեր է վերապահում կրոնին. այն է՝ **բարոյական արժեհամակարգի ստեղծման գործառնություն**: Եվ Անշուշտ, այս իմաստով անհիմն չէին Նալբանդյանի կասկածները: Թարգմանական գործունեությունը, հայագիտության նման առաջխաղացումն ուներ նաև իր շարժառիթները. «Միաբանությունը հարկադրված է այժմ ծառայել երկու պարոններին՝ հայոց ազգին և պապականությանը: Ծառայում է հայոց ազգին աշխատելով նորա լեզվի վերա, ծառայում է պապականությանը հալածյողի տեղ տալով հայերին

¹⁶⁰ Տե՛ս **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1980, էջ 255:
¹⁶¹ **Նույն տեղում**, էջ 261-262:

սխոլաստիկական գրքեր, որ գրված էին պապական պղտոր հայեցվածքով»¹⁶²: Նալբանդյանը, կարծես, վտանգ է զգուժում ազգությունը դավանաբանությունում և չորոշելու Մխիթարյանների կեցվածքի մեջ, թեև անմիջականորեն չի խոստովանում, որ, եթե կրոնը բարոյական արժեհամակարգ է ապահովում, իսկ Մխիթարյանները նպաստում են պապական բարոյականության տարածմանը, որը, ըստ նրա, **աղտեղված է, ապաստանմիջականորեն ազդելու է հայ ժողովրդի բարոյական արժեհամակարգի փոփոխմանը, հետևապես նաև հոգեկերտվածքի այլակերպմանը:**

Կրոնիս ազգային

տարր չվերագրող Նալբանդյանը դավանաբանական տարբերություն և դրանից բխող հետևանքներից, թվում է, պետք է չմտահոգվեր, հատկապես երբ կրոնական գաղափարաբանության տեսանկյունից կաթոլիկությունն և առաքելականությունն իրար հակոտնյա չեն և ինքը՝ Նալբանդյանը, շեշտում է, որ դավանաբանությունն ինքնին երբևէ չի եղել կրոնական «ճեղվածքի» պատճառ, այլ դրա պատճառը միմիայն եղել են ազգային ներքին կյանքն ու կրոնական «կառավարությունը», իշխանությունը¹⁶³: Նալբանդյանի տագնապը, սակայն, ակնհայտ է, ինչը ենթադրում է, որ կրոնի ազգային ընկալման յուրահատկությունն ինքնության պահպանման և չձուլվելու տեսանկյունից իրապես կարևոր է: Այլ է կրոնի տեսություն մշակումը փիլիսոփայության տեսանկյունից և լրիվ այլ՝ այդ տեսության գործնական կիրառումը: Տարվելով եվրոպական գաղափարախոսությունում և հաշվի չառնելով հայ ազգի հավանությունների և հնարավորությունների անհամապատասխանությունը՝ XIX դարի երկրորդ կեսի մտածողները գուցե ամբողջապես չէին զգուժ

¹⁶² Նոյն տեղում, էջ 275:

¹⁶³ Տե՛ս Նալբանդյան Մ., Հրապարակախոսական երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, էջ 423:

դավանաբանությունն ից շեղվելու վտանգը: Դարի երկրորդ կեսին տարածում էր գտնում կաթոլիկությունը, ինչը հիմք էր հանդիսանում ազգային երկպառակության համար. կաթոլիկ միսիոներները տիրապետում էին ֆինանսական զգալի միջոցների, կիրթ էին, տեղեկացված և ազգի ներսում երկպառակությունն զգեցնեցին այդքան էլ քարոզչեր: **Մ. Մամուրյանը**, ինչպես և Նալբանդյանը, կաթոլիկության մեջ մեծ վտանգ էր տեսնում և հատկապես քննադատում էր Մխիթարյանների նրանց էլ դասելով ի թիվս ազգը վնասող «թունավոր իժերի»¹⁶⁴: Մամուրյանը չէր ընդունում **Գ. Այվազովսկու** այն դրույթը, թե կաթոլիկությունը Մխիթարյանների համար դիմակ էր և ոչ ոք մք: Վերապահումով գնահատելով Մխիթարյանների գործունեությունը՝ Մամուրյանը համարում էր, որ դավանաբանական տարբերության մեջ ազգակործան վտանգ կա. «Կրոնափոխության մոլությունը հայկական միության հիմքը կքակե»¹⁶⁵: Մամուրյանի հիշյալ դրույթը թույլ է տալիս եզրակացնել, որ դավանաբանությունն * ու եկեղեցին շարունակում

¹⁶⁴ Տե՛ս **Մամուրյան Մ.**, Երկերի ժողովածու, 3-րդ տրամաբանություն, «Հայաստան» հրատ., Եր., 1964, էջ 463:

¹⁶⁵ **Նույն տեղում**, էջ 462:

* «Դավանանքը հայաստանյանց առաքելական եկեղեցու, Հայ եկեղեցու կողմից որպես ուղղափառ ճանաչվող դավանաբանական դրույթների ամբողջությունն է: Հայ եկեղեցին նաև մյուս Արևելյան եկեղեցիները որպես տիեզերական է ճանաչում միայն երեք եկեղեց. ժողովներ: Երեք տիեզերաժողովների դավան. Որոշումների վրա է կառուցված Հայ եկեղեցու դավան. Համակարգը»: Չորրորդ տիեզերական ժողովը հայտնի է որպես Քաղկեդոնի ժողով: Այն ընդունում է Քրիստոսի երկբնությունը, երկբնականությունը և հարազատ է նեստորականությանը: «Քաղկեդոնի ժողովը չեն ընդունել ուղղափառ եկեղեցիները, մասնավորապես՝ Հայ եկեղեցին, որի պատմությունը դարեր շարունակ ուղեկցվել է հակաքաղկեդոն. լարված պայքարով: Քաղկեդոնի ժողովը Շնդհանրական եկեղեցու պառակտման պատճառ է դարձել: Այդ մերժումը կապված էր աստվածաբան. Համակարգերի այլությունամբ, քրիստոսաբան. Խոստովանությունների անհամընկնելիությամբ, առաքելական ավանդության իրարամերժ ընկալմամբ, Ալեքսանդրայի և Անտիոքի աստվածաբան. Դպրոցի առանձնահատկություններով» («Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 260, 1048-1049):

Է ի ն առ ան ց ք այ ի ն դ եր ա կ ա տ ա ր ու մ ու ն ե ն ալ ազ գ ա յ ի ն
 մ ի ա ս ն ու թ յ ա ն գ ո Ր ծ ու մ և դ ր ա ն ք հ ի մ ք ի ց խ ա ր խ լ Ե լ ը
 վ տ ա ն գ ու մ Էր հ ա յ ո ց ի ն ք ն ու թ յ ա ն գ ո յ ու թ յ ու ն ը ,
 ս պ առ ն ու մ օ տ ա ր ի ն ք ն ու թ յ ու ն ն եր ի ն ձ ու լ Վ Ե լ ու
 հ ե ռ ա ն կ ա ր ո Վ : Ի ն չ խ ո ս ք , ա կ ն հ ա յ տ
 Էր , ո Ր դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ու ն ը ո չ թ ե ի Ր
 ք ո Վ ա ն դ ա կ ու թ յ ա մ ք , ա յ լ և ձ ն ո Վ մ ի ա վ ո Ր ու մ Էր
 մ ա ր դ կ ա ն ց մ ի ն ն ու յ ն գ ա ղ ա փ ա Ր ի շ ու Ր Զ : Ի ս կ ա հ ա
 կ ա թ ո լ ի կ ու թ յ ու ն ը և՛ ձ ն ո Վ , և՛ ք ո Վ ա ն դ ա կ ու թ յ ա մ ք
 փ ո խ ու մ Էր հ ա մ ա խ մ ք ո ղ գ ա ղ ա փ ա Ր ի ք ն ու յ թ ը :
 Ը ն դ ու ն ե լ ա յ լ դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ու ն ն ու յ ն ն Էր , թ ե
 ը ն դ ու ն ե լ ն ո Ր ա Ր ժ ե հ ա մ ա կ ա Ր գ , ա յ լ կ ե Ր ա ՝
 հ ո գ ե կ ե Ր տ Վ ա ծ ք : Չ ը ն դ ու ն ե լ դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ու ն ը ՝
 ն շ ա ն ա կ ու մ Էր դ ու Ր ս մ ն ալ մ ի ա վ ո Ր մ ա ն առ ա ն ց ք ի ց :
 Դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ու ն ը , ս ա կ ա յ ն , ի Ր հ ե Ր թ ի ն
 վ ե Ր ա ծ Վ Ե լ Էր ազ գ ա յ ի ն ա յ ն պ ի ս ի « ս ի մ Վ ո լ ի » , ո Ր ը
 կ ա Ր ո ղ Էր մ ի ա վ ո Ր Ե լ , չ կ Ր կ ն Վ ո ղ Էր , և հ ա յ ո ց
 ի ն ք ն ու թ յ ու ն ը տ ա Ր ք ե Ր ա կ ու մ Էր ա յ լ
 ի ն ք ն ու թ յ ու ն ն եր ի ց : Ե Վ մ ի ն չ կ Ր ո ն ա կ ա ն
 հ ա Ր ա ց ու յ ց ի ց գ ա տ ի ն ք ն ու թ ե ն ա պ ա հ պ ա ն առ ա Վ Ե լ
 ա մ ու Ր հ ա Ր ա ց ու յ ց չ Էր ս տ ե ղ ծ Վ Ե լ ՝
 դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ու ն ը շ ա Ր ու ն ա կ Ե լ ու Էր Է ա կ ա ն դ ե Ր
 ու ն ե ն ալ հ ա յ ի ի ն ք ն ու թ յ ա ն ո Ր ո շ մ ա ն հ ա Ր ց ու մ :
 Բ ա ց ի ա յ դ , ե թ ե ք ն ն ե ն ք ի ն ք ն ու Ր ու յ ն
 դ ա վ ա ն ա ք ա ն ու թ յ ա ն հ ա Ր ց ը ք ա ղ ա ք ա կ ա ն
 դ Ր դ ա պ ա տ ճ առ ն եր ի տ ե ս ա ն կ յ ու ն ի ց , ա պ ա պ ե տ ք Է
 ն կ ա տ ե ն ք , ո Ր կ ա ն տ ա Ր ք ե Ր մ ո տ ե ց ու մ ն եր : Ա .
 Ս ա Ր գ ս յ ա ն ը , օ Ր ի ն ա կ , կ ա Ր ծ ե ս ը ն դ ու ն ե լ ի Է
 հ ա մ ա Ր ու մ ա յ ն տ ե ս ա կ ե տ ը , ո Ր ի հ ա մ ա ձ ա յ ն
 « մ ի ա ք ն ա կ ու թ յ ա ն ը ն դ ու ն ու մ ը ի ն ք ն ու Ր ու յ ն ,
 ա ն կ ա խ ազ գ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն վ ա Ր Ե լ ու
 ա Ր դ յ ու ն ք Էր : Ա հ ա թ ե ի ն չ ու , ե թ ե Բ յ ու լ գ ա ն դ ի ա ն
 ը ն դ ու ն եր մ ի ա ք ն ա կ ու թ յ ու ն , ա պ ա հ ա յ ե Ր ը
 ը ն դ ու ն ե լ ու Է ի ն եր կ ք ն ա կ ու թ յ ու ն »¹⁶⁶: Ա յ ս դ Ր ու յ թ ը ,

¹⁶⁶ Ս ա Ր գ ս յ ա ն Ա . , Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց հ ա յ Ե կ ե ղ ե ց ի ն (կ Ր ո ն ա գ ի տ ա կ ա ն -

ի հարկե, որոշ կասկած է առաջացնում մասնավորապես այն առումով, թե արդյոք քաղաքական անկախության խնդիրը հակադրվելու սկզբունքով լուծելը կարող էր լինել միակ դրդապատճառը: Չէ՞ որ սա քաղաքական առումով անհեռանկարային և թույլ քայլ էր: Եթե այդպես էր, ապա հայը կրկին դրսևորում էր քաղաքական տկարություն, իսկ եթե այդպես չէր, ապա պետք է ընդունել, որ բացի քաղաքական հարցեր լուծելուց՝ առաքելականության ընտրությունը նաև կրոնական ընտրություն էր, հավատարմություն քրիստոնեության նախնական իմաստին: Ուրեմն, բնավ էլ զարմանալի չէ Նալբանդյանի ու Մամուրյանի տագնապը, ովքեր որպես փիլիսոփա կրոնական ազատականություն էին դավանում, որպես հայ՝ դավանաբանական որոշակիացումը չէին անտեսում:

Անշուշտ, XIX

դարում Նալբանդյանի ու Մամուրյանի այս մտահոգությունը ստահոդ համարող տեսաբաններ ևս կային: Դավանաբանությունը չի կարող որոշել ազգային պատկանելությունը: Այսպես էր կարծում բուն լուսավորականության ուղղության ներկայացուցիչ **Գր. Արծրունին**: Ազգային ինքնության տեսանկյունից պատասխանելով այն հարցին, թե **ն՞վ է հայը օտարի աչքում**, Արծրունին նկատում է, որ ռուսը, ֆրանսիացին իրենց ներկայացնում են ազգային, մշակութային տարբերությամբ՝ հայրենիքի, լեզվի յուրակերպ դրսևորումների միջոցով, իսկ հայը վերոնշյալ հարցին պատասխանում է՝ **«Ես հայ քրիստոնյա եմ»**: Արծրունին սա համարում է աղանդավորական բնութագիր, ազգակործան երևույթ. «Չայն իր ազգութիւնը ազգութեան մեջ չէր տեսնում, նրան անյայտ էր ազգային գաղափարը, այլ տեսնում էր իր

ազգագիտական վերլուծություն, «Վանեվան» հրատ., Եր., 1999, էջ 20:

հայ լիներ ը միայն աղանդի, եկեղեցու մեջ: Պարզ է, որ փոխելով կրօնը, նա կարծում էր, որ փոխում էր իր ազգութիւնը: ...Յայիս անծանօթ էր հայրենիքի, մայրենի լեզուի, ազգութեան գաղափարները, պարզ է ուրեմն, որ կրօնը, իր միակյատկանիշը փոխելով, նա կարծում էր, որ փոխում է իր ազգութիւնը, փոխում է նա իր արիւնը, իր ցեղը»¹⁶⁷: Արծրունին, սակայն, հաշվի չի առնում մի շարք հանգամանքներ: Ռուսը, \$րանսիացին և այլ ազգի ներկայացուցիչներ ունենան պետութայուն, և ինքնութայան մեջ էական, որպէս տարբերող հատկութայուն կարող էին համարել հայրենիքի, մշակույթի, լեզվի վերաբերյալ պատկերացումները: Յայը բացի այն, որ քաղաքականապէս անկախ չէր, նաև ինչպէս նշեցինք վերը, դարեր առաջ արդեն իսկ առանձնացել էր քրիստոնյա հանրույթից՝ դրանով իսկ սահմանելով իր ինքնութայան տարբերութայունն այլ ինքնութայուններին: Չարմանալի և անբնական կլիներ որպէս ինքնութայան տարբերակիչ գիծ չնշել այդ պարագան, որի համար հայ ազգն անցնել էր քարկոծման պատմական բոլոր փուլերով, այլ առաջ քաշել այն, ինչը բոլոր ազգերին է բնութագրական, ուրեմն սավերապահ մոտեցում էր, քանզի հաշվի չէր առնում հայի անցյալը, ներկան, այլ միայն հիմնվում էր ապագայի վրա

Տվյալ ժամանակաշրջանում տեղ ունենր նաև **կրօնական** ուղղութայունը, որը հանդես էր գալիս հին արժեհամակարգը պահպանելու, նորը մերժելու սկզբունքով: Կրօնական թևի ներկայացուցիչները (**Յ. Տերոյեւց, Գ. Այվազովսկի**), ովքեր էական դեր էին տալիս դավանաբանութայանը, հասկանում էին, որ լուսավորական նման գաղափարախոսութայունը կարող է իրապէս թուլացնել հոգևորականներին

¹⁶⁷ Արծրունի Գր., Իմ խոստովանութիւնը, «Մշակ», 1880, Թիֆլիս, թիւ 164:

ազդեցությունը հայ ազգի կյանքում և ձեռնամուխ
 եղան հակազրոհի: Տերոյենցը նախ Նալբանդյանին և
 ամբողջ լուսավորականությանը մեղադրեց
 բողոքականության և անհավատության մեջ, ապա
 փորձեց հիմնավորել՝ ինչու՞ է անհրաժեշտ
 պահպանել հայ ազգի նախկին կյանքը,
 մասնավորապես դավանաբանության միջոցով
 ազգությունն որոշելու սկզբունքը^{*168}: Երբ հայ
 հոգևորականը հրաժարվեց ամուսնացնել
 բողոքական և ուղղափառ եկեղեցուն պատկանող
 գույզի, հայ լուսավորականներից շատերը
 քննադատեցին, և սմեկ անգամ ուշադրություն
 հրավիրեցին հոգևոր դասի այս կամ այս կանոնությանը,
 որը հակասում էր կրոնի ընտրության ազատության,
 անհատի իրավունքների պահպանման լուսավորական
 դրույթներին: Տերոյենցը, սակայն, այս օրինակը
 համարեց փաստարկ հօգուտ դավաբանության: Ըստ
 Տերոյենցի, եթե ուղղափառն ամուսնանում է
 բողոքականի հետ, ապա նա էլ, իր հերթին, չի կարող
 շրջանցել այդ գաղափարախոսությունը, իսկ
 բողոքականությանը հալածում է բուն
 քրիստոնեությանը, որը հայի ազգային ինքնության
 մեջ հիմնարար դեր ունի, քանզի, ինչպես նշում է
 Տերոյենցը. «Ազգը իր լոյսը և խոհեմությունը
 գլխաւորապէս իր սուրբ հավատքէն կը ճանաչէ»¹⁶⁹:
 Այսինքն՝ կրոնը, ըստ այս տեսակետի,
 դետերմինացնում է ազգը, նրա ինքնությունը: Եթե
 կրոնական կամ դավանաբանական հիմքը փոխվում է,
 ապա փոխվում են նաև աշխարհը ճանաչելու
 «գործիքները» և ըստ այդմ՝ նաև հոգեկերտվածքը:
 Ուրեմն, ազգության որոշման հարցում

* Նալբանդյան-Տերոյեց բանավեճն առավել ցայտուն է
 արտահայտված Նալբանդյանի «Երկու տող» երկում, ինչպես նաև
 Տերոյենցի խմբագրությամբ լույս տեսնող «Երևակ»
 պարբերաթերթում:

¹⁶⁸ Տե՛ս «Երևակ», Կ.Պոլիս, 1860:

¹⁶⁹ «Երևակ», Կ.Պոլիս, 1857(1):

դավանաբանական չափանիշով չառաջնորդվելը նշանակում է հարվածել ազգային ինքնուրույնությանը, որովհետև «...եկեղեցին անսխալ ճանչցողները կը պարտաւորին անոր վարդապետածներուն հաւատալու. եւ եկեղեցոյ անսխալութիւնն ալ մեզի սովորեցնողը եւ ապահովեցընողը Տերն մեր ինքն է»¹⁷⁰: Բացի այդ, հայ հասարակությունը լինելով ընտանիքակենտրոն, պետք է կայուն պահի այն արժեհամակարգը, որին հիմնվում է ընտանիքը, այլապես նոր արժեհամակարգի գոյությունը կարող է հեշտորեն խարխլել ազգային նախկին կյանքը, պետականության բացակայության պայմաններում իրական դարձնել ձուլվելու վտանգը: Չնայած Տերոյեցցի որոշ փաստարկների ճշմարտացիությանը՝ նա, իհարկե, փորձում էր նաև պահպանել հոգևորականների տեղն ու դերը հայի կյանքում: Հոգևորականների և քրիստոնեական վարդապետության անմիջական կապը շեշտելով և մեկի ճշմարտությունն ընդհանրացնելով՝ Տերոյեցցը ամրապնդում էր մինչև ևսավորական ինքնության մեջ առանցքային համարվող այն պատկերացումը, որ առանց եկեղեցու հայ ազգը չի կարող գոյատևել՝ ստեղծելով, կարծես, իռացիոնալ այնպիսի շրջան, որտեղ հրաժարումը համարվում էր ապագայի գոյության սպառնալիք: Անշուշտ, եկեղեցու դերն առանցքային էր, սակայն արդյոք այդ դերը չափազանցված չէր և եթե նույնիսկ ոչ, արդյոք ժամանակը չէր հայոց ինքնության մեջ կատարել այնպիսի վերափոխումներ, որոնք ոչ միայն կրավորական ձևով կպահպանեին ինքնությունը, այլև այն կդարձնեին և՛ նույնականացման արժանի

¹⁷⁰ **Տերոյեցց Ջ.**, Բանադատ. Տ.Տ. Մատթեոսի սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց բարի մարդ եւ բարի քրիստոնեայանուն գրքին դէմ բողոքականներուն հանած նոյնանուն գրքին վրայ քննութիւն, տպ. Յովհ. Տերոյեցց, Ի Կոստանդնուպօլիս, 1860, էջ 39:

մոդել, և՛ ազգային առաջընթացի «գործիք», և՛ անկախություն հասնելու միջոց: Մինչև լուսավորական՝ հատկապես կրոնական ինքնությունը չէր կարող հիշյալ նպատակների իրագործման համար հիմք ծառայել, սակայն կրոնական «աշխարհից» լուսավորական «աշխարհ» անցնելն էլ, իր հերթին, բարդ էր, քանզի կային խորքային այնպիսի պատճառներ, որոնք հաշվի չառնելը, մեղմասած, սխալ էր:

Դավանաբանական հարցից բացի՝ կրոնական թևի ներկայացուցիչները կարծում են, որ եվրոպական փիլիսոփայությունն ինքնին չի կարող լինել լուսավորություն չափանիշ, որովհետև այլափոխում է քրիստոնեական կրոնի հիմնական դրույթները. չի ընդունում մեկ նախասկզբի գաղափարը (Ադամ և Եվա): Այնինչ, «ճշմարիտ գիտությունը հաւատքի հետ միաբան կերթայ»¹⁷¹: Ֆրանսիացի լուսավորականները կարծում էին, որ մեկ նախասկզբ ունենալու պարագայում մարդկությունը պետք է մեկ լեզվական համակարգ ունենա, սակայն, ըստ Տերոյենցի, լեզուները մինչև հիմա պահպանում են իրենց միասնական համակարգը, ինչպես օրինակ՝ «Եւրոպացիք մեկ ցեղ ֆամիլիական ունեն»¹⁷² և այլն: Լեզվական նմանություններ, ցեղակցություններ բոլոր լեզուներում կարելի է նկատել, հետևաբար, ըստ կրոնական թևի ներկայացուցիչների, հիշյալը չի կարող հիմք տալ կասկածելու Սուրբ գրքի դրույթների ճշմարիտ լինելուն: Վերոշարադրյալից զատ՝ կրոնական ինքնություն պահպանման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև կրոնական և բարոյական գիտակցության կապով: Մասնավորապես, տարածում է գտնում այն կարծիքը, որ կրոնական

¹⁷¹ «Երևակ», Կ.Պոլիս, 1857(2), էջ 34:
¹⁷² «Երևակ», Կ.Պոլիս, 1857(2), էջ 35:

գիտակցութեանը նույնական է բարոյական գիտակցութեանը, իսկ վերջինս առավել է քաղաքական գիտակցութեան հիմնարկը, քան զի մարդը նախ հոգևոր գոյ է, ապա՝ նյութական: Մարկոս Աղաբեգյանը նշում է. «Յայնց ընկերականութիւնը ազգային լինելէ յառաջ է միայն բարոյական, որովհետև իր գլխաւոր տարերքն է հոգևոր բան. եկեղեցի, որ մեզ տալիս է Ավետարանի լոյսը, աստուածային օրէնքը. իր առաքելականութեամբը պահած է իր մէջ և մեր նախնական ազգայնութեան տարերքը, այն է մեր ազգային պատմութիւնը, մեր հոգևոր անհոգութիւնքը ...մի խօսքով Յայաստանեաց սուրբ և առաքելական եկեղեցւոյ ինքնագոյնութիւնը»¹⁷³: Կրօնական գիտակցութեան կողքին՝ կրկին երևան է գալիս բարոյական գիտակցութեանը՝ որպէս հայ ազգային ինքնութեանը մյուս ազգային ինքնութեանը նմաներից տարբերակող հատկութեան, եկեղեցու ինքնագոյնութեանը նույնացվում է հայ ազգի ինքնագոյնութեանը, և եկեղեցու դերի ժխտումը, ըստ այս տեսակետի, կարող է վտանգել հայ ազգի գոյնութեանը: Կրօնական թևի ներկայացուցիչներն իրենց փաստարկներով վերջնարդյունքում հանգում են հետևյալին՝ կրօնական գիտակցութեանը պետք է գերակշռի, քան ի որ այն արտահայտում է հայի ինքնութեանն իր ամբողջական էութեան մէջ, և այն փոփոխել նշանակում է փոխել հայի ինքնութեանը և վտանգել նրա ապագան: Մինչև լուսավորական ինքնութեան հիմնարկում և սխալ: Ավելին՝ մինչև լուսավորական ինքնութեան կառուցման տարրերը, ի տարբերութեան լուսավորական ինքնութեան տարրերի, առավել «ամրապնդում» ու «անվտանգ» են դարձնում մեր

¹⁷³ «Ծիլն Ավարայրի», Յանդէս ազգային, բարոյական եւ մտավոր լուսավորութեան, Ա Յատոր, Տարի Ա, Կ. Պոլիս, 1866(1), էջ 2 (Ստորագրված է Կ. Պոլիս, հոկտ. 3, 1865):

գոյու թյու նը: Յարկ է նկատել, սակայն, որ և՛
լուսավորական, և՛ կրոնական թևի
ներկայացուցիչները սկզբունքորեն իրար
հակասող դրույթներ չէին պաշտպանում: Բարոյական
գիտակցության և կրոնի՝ մասնավորապես
դավանաբանության կապը շեշտում էին երկուսն էլ,
ուստի բախման ու իրար հետ սուսերով երկխոսելու
արմատը հատկապես թաքնված էր հոգևորականների
տեղի և դերի վերաբերյալ իրար հակասող
տեսակետներում: Պետք է նկատել, որ ընդհանուր
առմամբ կրոնական թևի ներկայացուցիչների
դրույթները որոշ առումով ունեին ճշմարտության
հատիկներ, սակայն նույնիսկ «ճշմարտության այդ
հատիկները» արգելակում էին ազգի առաջընթացը:
Անհրաժեշտ էր դրսևորել առաջընթացի կամք և
կրոնական, փակ հասարակության մոդելը
հաղթահարելու խիզախություն: Եթե կրոնական
հանրույթ լինելը քաղաքակրթության
բարձրագույն աստիճանն էր, ապա ինչո՞ւ
մարդկության պատմությունը չմնաց միջնադարում,
այլ շարունակեց վեր խոյանալ: Ավելին՝
միջնադարը քննադատվեց որպես մարդկային
ներուժի ու ստեղծելու հնարավորության
սահմանափակման ժամանակաշրջան: Ուրեմն,
առաջադեմ աշխարհում ապրել ինքնուրույն
միջնադարում նույն էր, թե սպանել առաջընթացի
կամքը կամ էլ ընտրել ճգնավորի կենցաղը և
հրաժարումը համարել գոյության միակ իմաստը:
Գուցե առանձին անհատների, հատկապես
հոգևորականների պարագայում գոյության այս
կերպարդարացի էր, սակայն ազգի պարագայում այն
մերժելի էր: Չէ՞ որ առանձին անհատի կամ
անհատների որոշակի խմբի կյանքի ընթացքը չի
կարող որոշել հասարակության կարգավիճակը:
Ցավոք, լուսավորական և կրոնական թևի

ն երկայացուցիչները հիմնականում չգտան
երկխոսման այնպիսի տարբերակ, որը
մինչև լուսավորական և լուսավորական
ինքնուրույնները որոշ առումով կկապեր ու որոշ
առումով էլ կբաժաներ իրարից, սակայն պետք է
նկատել, որ ընդհանուր առմամբ կան այնպիսի
դրույթներ, որոնք երկու մոտեցումներում էլ
նույն են: Թեև առերևույթ Տերոյենց-Նալբանդյան
հակադրություն կար, սակայն և՛
դավանաբանություն, և՛ կրոնական ու բարոյական
գիտակցության կապի տեսակետների միջև նկատվում
էր նույնություն:

Այս մոտեցումներում, ինչպես նկատում
է Ա. Սարգսյանը, կատրորոդ՝ միջին տեսակետ, որի
նեերկայացուցիչն է Գ. Այվազովսկին: Ըստ նրա՝ հայը
կառավարվում է օտար պետությունների
օրենքներով, լեզուն էլ ոչ բոլոր հայաբնակ
վայրերում է պահպանված և «եթե դավանանքով էլ
ազգի անդամները հույն (ուղղափառ), լատին
(կաթոլիկ), բողոքական ու մահմեդական դառնան,
ինչով է իմացվելու այդ մարդու հայ լինելը»¹⁷⁴:
Դավանաբանական տարբերությունը ևս մեկ անգամ
արդարացնում է ազգապահպան իր դերը, քանի որ
անկախ պետականություն ունեցող ազգի համար
ընտրության ազատության սահմաններն առավել
լայն են և հիմնավոր, քան՝ կախյալ ազգիները: Այս
տեսակետը, սակայն, միայն դավանաբանական
հարցերին է առնչվում, այնինչ կրոնական և
լուսավորական հարացույցների
հակամարտությունն ուներ բազում կողմեր՝
դավանաբանությունից սկսած մինչև կրթությունն
ու դիվանագիտական հարթակներում հայ ազգի
շահերը նեերկայացնելը: Դավանաբանության

¹⁷⁴ **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայ եկեղեցին (կրոնագիտական -
ազգագիտական վերլուծություն), «Վանեվան» հրատ., Եր., 1999, էջ 107:

ամուսնով այն գուցե հիմնավոր է, սակայն մնացյալ հարցերում «միջին» ու կառուցողական տեսակետները սակավ էին:

Կրոնի և դավանաբանության հարցում լուսավորական-պահպանողական հոսանքի դիրքերից է հանդես գալիս **Ստ. Նազարյանցը**: Նրամոտեցման մեջ զգալիորեն նկատելի է եվրոպական փիլիսոփայության ազդեցությունը, որն արտահայտվում է, օրինակ, շոպենհաուերյան «**կամք առ կյանք**» դրույթով: Վերջինս խարսխվում էր ճանաչողական գործընթացի ամբողջությունը, դրամիջոցով պատկերում անհատի և ազգի ինքնիրացումն ու ինքնապահպանումը¹⁷⁵: Այս համատեքստում՝ եթե կրոնական ինքնությունը պահպանել է հայի գոյությունը դարեր շարունակ, ապա հայը պարտավոր է այն ճանաչել պատճառական բոլոր կապերով ու փոխհարաբերություններով հանդերձ, հաստատել կամքն առ կյանքը և չեզոք, կրավորական սուբյեկտից դառնալ գործող սուբյեկտ: Այդ նպատակով պետք է լուծել կրոնական գաղափարախոսության հասանելիության ու մատչելիության հարցը: Գրաբարով կարդացվող աղոթքները, պատարագները ոչ միայն հասուն չեն յուրաքանչյուր հայի, այլև անմեկնելի են դարձնում կրոնի խորհուրդը, աստվածաշնչյան ճշմարտությունները: Կրոնի տեղի և դերի վերաբերյալ իր այս մոտեցումով Ս. Նազարյանցը ձևակերպում է այն պիսիկարևորագույն հիմնահարց, ինչպիսին է **կրոնական ճանաչողության հարցը**. արդյոք հայը ճանաչում է իր դավանած կրոնը: Բացասաբար պատասխանելով այս հարցին՝ Ստ. Նազարյանցը կրոնի և լեզվի հիմնահարցերը դարձնում է մեկը մյուսից կախյալ՝ փորձելով այս կերպ հաշտեցնել նաև լուսավորական և կրոնական

¹⁷⁵ Տե՛ս **Шопенгауэр А.**, Афоризмы. Мир как воля и представление, Харвест, Минск, 2011, էջ 277-278:

թևի ներկայացուցիչներին: Ստ. Նազարյանցը կարծում է, որ «Յայերը՝ ինչպես նոցա ներկայ դրու թիւնն է՝ ունին ներկու հօգեղէն անօթ՝ **լեզու և կրօնը** (ընդունումը մերն է -Ն.Մ.). քաղաքական անօթը՝ արդարև մի անչափելի մեծակշիռ անօթ՝ իւր և օտարի մեղքովը ոչընչացել է և չը կայ այժմուս»¹⁷⁶: Նազարյանցը կրկին շեշտում է կրօնի կարևորութիւնը, ավելին՝ առանցքային համարում քրիստոնէական դաստիարակութիւնը, քանզի «քրիստոնէութիւնը լոյս է, ճշմարտութիւն է, ամենևին կատարյալ է»¹⁷⁷: Ուրեմն, միայն մատչելի լեզուն կարող է հային դարձնել ճշմարիտ քրիստոնյա: Նազարյանցը, կարծես, փորձում է չեզոք դիրքորոշումով հանդես գալ, չնսեմացնել կրօնի, եկեղեցու, դերը, այլ, ընդհակառակը, շեշտել դրանց կարևորութիւնը, սակայն միաժամանակ առաջ է մղում նաև գիտակից անհատի, ճանաչող սուբյեկտի առաջնայնութիւնը և գաղափարը՝ ենթատեքստում նրան թողնելով կրօնի ընտրութիւնը իրավունքը: Ինչպես Գ. Այվազովսկին, այնպես էլ Ստ. Նազարյանցը թեև փորձում են հաշտեցման եզրեր գտնել, սակայն դրանք որոշիչ կամ համընդհանուրի կողմից ընդունելի չեն դառնում: Ավելին՝ XIX դարի կեսին Նազարյանցի վերոնշյալ մոտեցումը որոշ առումով քննադատելի էր, քանզի ազգային ինքնութիւնը համատեքստում կրօնական ինքնութիւնը մերժումը առավել ակնհայտ և հիմնավոր էր, **իսկ «կամք առ կյանքը» աստիճանաբար վերածվում էր «կամք առ իշխանութիւն»**:

Կրօն և ազգային հոգեկերտվածք: Կրօնի հարցը քննարկելով տարբեր փոխհարաբերութիւններում՝ դավանաբանական,

¹⁷⁶ **Նազարեան Ստ.**, Վարդապետարան կրօնի. Յասարակաց հայ ախօսութեամբ, Մասն Առաջին, Լազարյանց տպ., Մոսկվայի մէջ, 1853, էջ 7:
¹⁷⁷ Նույն տեղում:

բարոյական արժեհամակարգի, լեզվի և այլն, արդիական էր և կարևոր նաև քրիստոնեական, ապա հեթանոսական կրոնի ու հայի հոգեկերտվածքի փոխհարաբերության որոշ կողմերի վերհանումը: Ենթադրենք՝ հայն իր գոյությունը պահպանել է հոգևոր ինքնություն միջոցով, ենթադրենք՝ բարոյական արժեհամակարգը եղել է առավել քաղաքական շահերից, սակայն արդյոք այսպիսի դիքորոշումը արդարացված էր: Ահա այս հարցին փորձեց պատասխանել XIX դարի երկրորդ կեսի լուսավորական միտքը՝ ձևակերպելով կրոնական գիտակցության և հայի հոգեկերտվածքի կապի հարցը: Եթե կրոնական թևի ներկայացուցիչների պատկերացմամբ բարոյական կամ այլ կերպ՝ հոգևոր կյանքն է սահմանում հային, նրա ինքնությունը, ապա Րաֆֆին սահամարում է հայի ողբերգությունը և ինքնախաբերության վառ դրսևորումը: Յայը հանդուրժող և ներողամիտ է, որովհետև քրիստոնյա՞ է և այդ արժեհամակարգի կրո՞ղը, բնավ՝ ո՛չ. «Յայի այս ներողամտությունը առաջ է գալիս ոչ թե նրա քրիստոնեական եղբայրասիրությունից, այլ նրա հոգեկան անզգայությունից»¹⁷⁸: Յայը չի կարողանում ամբողջապես ընկալել սոցիալական իրականությունը և բացի այդ, եթե Րաֆֆին իր հայեցակարգը կառուցեր XX դարի սկզբին, ապա կհամաձայներ էյն Ռենդի բանական էգոիզմի այն դրույթներին, որ սեփական շահի գերակայությունը հենց ինքդ քո նկատմամբ բարոյականության նորմերի պահպանումն է, քանզի կամաթեակամադու ինքդ էլ բարոյական նորմերի և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտն էս: Ուստի, այս դրույթն առավել հստակ ձևով է բացատրում Րաֆֆու տարակուսանքը, ով չի ընդունում հոգեկերտվածքային թերությունը

¹⁷⁸ Րաֆֆի, Երկերի ժողովածու, Յատր 11, «Սովետական գրող» հրատ., Եր., 1991, էջ 9:

որպես քարոյական նորմերի պահպանում
 ներկայացնելը, դրանք համարում է ստահոդ և
 ինքնախաբեություն և՛ վերջինս բացատրելով որպես
 ազգի, ընտանիքի, լեզվի, կրոնի նկատմամբ ունեցած
 նախապաշարմունք: XX դարի սկզբին արդեն այս
 երևույթը գտավ իր բացատրությունը: Վ.Թեքեյանն
 այն անվանեց **«հայի սնոպիզմ»**, որն արտահայտվում է
 «առաքինություններն իբրեւ մոլություն և
 մոլություններն իբրեւ առաքինություն կրելու
 արուեստ»¹⁷⁹: Մինչ սնոպիզմ բնորոշելը, սակայն,
 Րաֆֆին համարում էր, որ. «Յայնուհի այն երազական
 ցնորքը, որ մենք հույս կոչեցինք, որով ապրում ենք,
 որով մխիթարվում են ծուլ և դանդաղ կոտ
 ժողովուրդները, թե մի օր գերբնական կերպով
 ազատված կլինենք»¹⁸⁰: Գերբնական ուժի նկատմամբ
 հավատը, հույսը հային դարձնում են չգործող,
 պասիվ-կրավորական, ինչի արդյունքում հայի
 հոգեկերտվածքի մեջ ամրապնդվում են
 ծուլությունը, պատասխանատվության
 բացակայությունը և հոգեկերտվածքային շատ այլ
 թերություններ: Ուրեմն, մենք՝ հայերս, ոչ թե
 ապրում ենք քրիստոնեական արժեհամակարգով, այլ
 այդ արժեհամակարգը վերագրում ենք մեզ՝ դրանով
 իսկ կապելով հայի հոգեկերտվածքը
 քրիստոնեությանը: Բացի այդ, նկատելի է, որ Րաֆֆին
 եթե նույնիսկ տեսնում է ազգակցություն հայի
 հոգեկերտվածքի և քրիստոնեական
 դավանաբանության միջև, ապա ազգային կյանքում
 այդ ազգակցությունը բացասաբար է գնահատում:
 Րաֆֆին, առհասարակ, խստորեն և երբեմն
 անհանդուրժողաբար է քննադատում
 հոգևորականությունը, հանդես գալիս
 հակակղերականությունը դիրքերից՝

¹⁷⁹ Թեքեյան Վ., Ամբողջական երկեր, 3-րդ տր 8, տպ. Նուպար, Գահիրե, 1950, էջ 140:
¹⁸⁰ Նույն տեղում:

տպավորությունը ստեղծելով, որ հայի ամբողջ
ողբերգության հիմքը, պետականության կորուստի
պատճառն էլ ձախողումների պատասխանատուն
եկեղեցին է ու հոգևորականությունը: Յարկ է
նկատել, սակայն, որ եթե հայ ազգի ձգտումները
գերազանցեին այն միջավայրի
հնարավորությունները, որոնցում նրանք ապրում
էին, ապա վստահաբար ո՛չ եկեղեցին, և ո՛չ էլ
հոգևորականությունը չէին ունենա այնպիսի դեր,
որը կարող էր դիտվել որպես առաջընթացի արգելակ:
Բացի այդ, Էդ. Ա. Յարությունյանը հայոց
ինքնության, կրոնական բացառիկությունե-
րը նկատելով նաև կոլեկտիվ անվտանգության
կենսափոխի սոփայության համատեքստում,
իրավացիորեն նկատում է, որ կրոնական
բացառիկությունը լուծել է մի շարք խնդիրներ¹⁸¹:
Այսինքն՝ այն ինքնանպատակ չի եղել և ամրապնդել
է, օրինակ, ազգային ինքնագիտակցությունը,
լուծել քաղաքական ու ազգային խնդիրներ: Ի
լրումն այս դիտարկման՝ պետք է նկատել, որ
կրոնական բացառիկությունը սերտորեն
առնչվում է նաև իրականության
վերաիմաստավորման, աշխարհի պատկերի ըմբռնման ե-
ւ սրբագրման երկրպիս, որն ունի հոգևոր երանգներ:
Ի վերջո, ինչպես բոլոր ազգերը, այնպես էլ հայ ազգը
իր կեցությունը կազմակերպել է որոշակի հենքով,
որն էլ դարձել է նրա ինքնության այլ
ինքնություններից տարբերելու միջոց:
Վերադառնալով Րաֆֆի հայացքներին՝ պետք է
նկատել, որ հայի կենցաղը պատկերելիս
գեղարվեստական իր ստեղծագործություններում
Րաֆֆին երբեմն ինքն էլ դեմ չէ, որ եկեղեցին
կարևոր դերակատարում ունի: Սակայն Րաֆֆին

¹⁸¹ Տե՛ս **Յարությունյան Էդ. Ա.**, Ազգային ինքնություն և
կյանքի մշակույթ, «Մակմիլան-Արմենիա» հրատ., Եր., 2004, էջ 44:

կարծում է, որ. «Մեր եկեղեցին այլանդակվել է, փոխել է իր նախնական պարզ կերպարանքը, դարձել է ծիսապաշտության, շնորհավաճառության և անհավատության գործարան» և երբ այս պատկերը քննադատության է ենթարկվում, եկեղեցականները այդ քննադատությունը համարում են հակակրոնական¹⁸²: Րաֆֆին մերժում է այն դրոյթը, որ հոգևորականը միջնորդ է մարդու և Աստծո միջև, հետևապես հոգևորականին չընդունելը նույն է՝ ինչ չընդունել Աստծուն: **Յետագայում Նիցշեն, Գոլրջիևը** և այլք ձևակերպում են բուն քրիստոնեական կրոնի և նրա մեկնաբանման ու ներկայացման անհամապատասխանության հարցը, ինչը ոչ այնքան հիմք է աստվածամերժության համար, որքան ազդանշան է առ այն, որ հոգևորականներին տրվող արտոնությունները երբեմն ծառայում են ի չարս և վնասում բուն քրիստոնեությանը: Վերադառնալով Րաֆֆու հայացքներին՝ պետք է նկատել, որ դրանցում ուրվագծվում են ազգային և եկեղեցական կյանքի անջատ դիտելու պատճառներից կարևորները: Այսպես՝ «...երբ ժողովրդի ու շահրությանը լարված է եղել դեպի իր դրոյթությունը, հանկարծ ծագել են կրոնական կամ եկեղեցական վեճեր: Ժողովուրդը թողել է իր կենսական հարցերը և գբաղվել է այդ վեճերով»¹⁸³: Այս իմաստով ևս հոգևորի և աշխարհիկի միջև սահմանների բացակայությունն անկայուն է դարձրել հայ ժողովրդի կյանքը և ինչ-որ չափով վերածվել նաև հոգեկերտվածքային գծի՝ չտեսնել հոգևոր և աշխարհիկ ունորտների միջև տարբերություն, չկրել պատասխանատվություն աշխարհիկ կյանքում տեղի ունեցող

¹⁸² Տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, 3 ատոր 9, 3 այ պետիրատ, Եր., 1964, էջ 275:

¹⁸³ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, 3 ատոր 10, 3 այ պետիրատ., Եր., 1964, էջ 221:

Իր ադարձ ու թյուր ներհամար, դրանք թողնել
 ինքնահոսի և այլն: Անշուշտ, հայի իդեալական
 կերպարը Րաֆֆու համար կրոնավորը չէ, այլ
 քաղաքացին է, ով ունի նաև ազգային-քաղաքական
 գիտակցություն: Արդեն XIX դարի վերջին
 քրիստոնեական կրոնի և ազգային հոգեկերտվածքի
 փոխհարաբերության հարցը դուրս է գալիս
 քրիստոնեություն-ազգային խառնվածք
 սահմաններից և դիտարկվում նաև հեթանոսություն-
 ազգային խառնվածք համատեքստում: Կային
 տեսաբաններ, ովքեր գուգահեռներ էին տեսնում
 հայի հոգեկերտվածքի և հեթանոսության միջև,
 փորձում հիմնավորել, որ հեթանոսական որևէ
 Աստված չի ստեղծվել հենց այնպես, այլ նրանք
 արտահայտել են հայի ինքնությունը և կան
 հեթանոսական ծեսեր, որոնցից հայ ժողովուրդը
 դեռևս չի հրաժարվել: Ինչպես, օրինակ, հայ կնոջ
 կերպարը ներկայացնելով Նանե աստվածուհու
 միջոցով, որպես հնարագիտության աստվածուհի,
 Կոստանյանցը նշում է, որ դարեդար հայ կնոջ այդ
 պատկերացումները չեն փոխվել և արտահայտում են
 նրա ինքնությունը. նա հնարագետ է, ընտանիքի
 սյունը¹⁸⁴: Կոստանեանցից գատ` հեթանոսությունը
 դիտարկում են նաև Պալասանյանը, Ալիշանը և այլք,
 սակայն պատմական լույսի ներքո, իսկ արդեն XX դարի
 սկզբին օրինակափորեն առաջանում է
 մեհենականությունը` որպես գաղափարական
 առանձին ուղղություն: Զայնց
 ինքնության լուսավորական նախագիծը
 կառուցելիս ուրվագծվեց կրոնի քննարկման
 տարբեր եզրեր: Կրոնը դիտարկվեց ինչպես բուն
լուսավորական, այնպես **լուսավորական-**
պահպանողական և **կրոնական** թևի կողմից:

¹⁸⁴ Կոստանեանց Կ., Զայնց հեթանոսական կրոն, Սրբոյ կաթուղիկ է
 էջ միածին, Ի Վաղարշապատ, 1879, էջ 24:

Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն թևի ներկայացուցիչները չեն ընդունում ազգության որոշման կրոնական չափանիշը: Յայլիսելու չափանիշը **դավանաբանական պատկանելությունը** է, այլ՝ **ազգասիրությունը**: Իսկ ահա կրոնական թևի ներկայացուցիչները ազգությունը որոշում են դավանանքով: Առերևույթ այս հակասությունը, սակայն, վերանում է իրականության և տեսության փոխհարաբերության հարթությունում: Չընդունելով ազգությունը որոշելու կրոնական հիմքը (**Գր. Արծրունի**)՝ Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն ներից շատերը սերտկապես տեսնում կրոնական և բարոյական արժեհամակարգի միջև, որտեղ դավանաբանությունը ևս որոշ դերակատարում ունի (**Մ. Նալբանդյան, Մ. Մամոնրյան**): Յետևապես դավանաբանությամբ ազգությունն չորոշելու մոտեցումը խոցելի է դառնում, քանզի հանդիպում է և՛ սոցիալ-պատմական, և՛ ինքնութենական պատկերներին: Այս առումով կրոնական և Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն թևի ներկայացուցիչներին հայացքները խաչվում են՝ բախվելով հատկապես հոգևորականների տեղի և դերի վերաբերյալ դրույթներում. աշխարհիկ իշխանությունը պետք է սահմանազատում է հոգևոր իշխանություննից (**Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Բաֆֆի**) եկեղեցու դերը հիմնական/առանցքային է (**Մ. Նալբանդյան, Բաֆֆի**): Այս մոտեցումներինց բացի տեղ ունի նաև այնպիսի մոտեցում, որը **միջին** տեսանկյուն է և արտահայտում է **Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն - պահպանողական** հոսանքի ներկայացուցիչներին տեսակետը՝ անհրաժեշտ է նախ ճանաչել կրոնական-դավանաբանական առանձնահատկությունները, հետո միայն հասկանալ արդյոք փոփոխություններին հրաժեշտություն կա, թե՛ ոչ (**Ստ. Նազարյան**): Յայնոց ինքնության Լ ու ս ա վ ո թ ա կ ա ն վերաիմաստավորման մեջ կրոնը դիտվում է նաև հայի

հոգեկերտվածքի համատեքստում: Այդ
փոխհարաբերությունները գնահատվում է ինչպես
քրիստոնեություն **(Րաֆֆի)**, այնպես էլ
հեթանոսությունը լույսի ներքո **(Կ.Կոստանեանց)**:

3.2 Լ Ե Չ Վ Ի Ա Ր Դ Ի Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը

Չայոց ինքնությունը վերաիմաստավորման և
արդիականացման համատեքստում Լ Ե Չ Վ Ի

հիմնահարցը էական դեր ուներ*՝ պայմանավորված
 Լեզվական համակարգի փոփոխությունների
 գործունակ՝ **պատմական, հայրենասիրական-
 քաղաքական և բարոյագիտական:** Պատմական գործունի
 էությունն այն էր, որ հաշվի առնելով Լեզվի
 զարգացման ներքին շարժը՝ դրա փոփոխությունը
 պետք է լիներ տրամաբանական և օրինակափ, քանզի
 «...Լեզուն մեր այժմեան կեանքի հոգեղեն
 կերպարանքն է»¹⁸⁵, իսկ այդ հոգեղեն կերպարանքն
 արտահայտվում էր աշխարհաբարով և ոչ թե
 գրաբարով՝ **աններդաշնակ կապ ստեղծելով**

* Լեզուն լայն իմաստով աշխարհի և մարդու միջև կապն է՝ և՛
 ճանաչողությունը վերբալացնելու միջոցը, և՛ ճանաչական
 գործիքը: Ներկայիս աշխարհում, հատկապես ազգային
 ինքնություն տեսանկյունից, Լեզվի դերը հատկապես կարևոր է,
 քանզի դրա միջոցով է նաև հաստատվում է այս կամ այն երկրի
 գերիշխանությունը: Ինչպես նկատում է **Վ. Միրզոյանը**՝
 Լեզվաքաղաքականությունը յուրաքանչյուր ինքնիշխան
 պետության գոյության կարևորագույն գրավականն է (տե՛ս
Միրզոյան Վ., Լեզու և Լեզուաքաղաքականություն, «Սիփան»
 հրատ., Պեյրոթ, 1996), իսկ Լեզուն ազգային ինքնության
 գոյության վավերագրողը: Լեզուն իր մեջ ամփոփում է տվյալ
 ազգի աշխարհաճանաչողությունը, իրերի և երևույթների
 սահմանումը, մշակույթը, պատմական հիշողությունը և այլն:
 Լեզուն ոչ թե ինքնաբավ մեծություն է, այլ մտածելակերպ է,
 գործելակերպ և գոյելակերպ (տե՛ս **Աթայան Է.**, նշվ. աշխ., էջ 106):
 Վերջին երեք հասկացությունների միջև կապն ապահովվում է
 Լեզվի միջոցով, քանզի այն նույնական է ինչ-որ բան
 կատարելու կերպին և արտահայտվում է դրա շնորհիվ: Այն ոչ
 միայն նշանային համակարգ է, այլև որոշակի զգայակերպ:
 Հայդեգերի բնորոշմամբ Լեզուն ամկա կեցության հիմքն է
 (տե՛ս **Хайдегер М.**, Исток художественного творения: Избранные работы разных лет, Академический проект, М., 2008,
 էջ 11): Լեզուն այն է, ինչը կապում է անցյալին և հնարավոր է
 դարձնում ներկան, քանզի Լեզվի միջոցով է անցյալի
 մշակույթը դառնում ներկայի սեփականությունը և ներկան
 էլ, իր հերթին, որոշակի ձևում գոյություն ունի միևնույն
 նշանային համակարգի շնորհիվ: Ազգային ինքնության
 համատեքստում Լեզվի մյուս ամանձնահատկությունն այն է,
 որ իրերի, երևույթների Լեզվական նշանակումը և
 սահմանումն արտահայտում է տվյալ ինքնության
 ամանձնահատկությունները: Եթևոլեզվագիտությունը
 հաստատում է, որ տարբեր ժողովուրդներ տարբեր կերպ են
 ընկալում աշխարհը, և այդ տարբերությունն արտահայտվում է
 նաև Լեզվի միջոցով: Եթևոլեզվագիտությունից բացի՝
 ազգային ինքնության տեսանկյունից արժեքավոր են
 մշակույթալեզվագիտական և հոգեբանական-Լեզվագիտական
 տեսությունները: Բացի այդ, Եթևոլեզվաբանությունը
 վաղուց է, ինչ փաստարկել է Լեզվի և ինքնություն ներքին կապը:
 Լեզվաբանական հարաբերականության տեսության (Սեպիր,
 Ուորթ) համաձայն Լեզուն այն միջավայրն է, որը միևնույն
 աշխարհը ճյուղավորում է տարբեր աշխարհների:

¹⁸⁵ «Հայկական Լեզուի խորհուրդը», Հիւսիսափայլ, Մոսկվա, թիվ 1,
 1858, էջ 6:

մտածել ակերպի, գործել ակերպի և գոյել ակերպի միջև: Հետևապես անհրաժեշտ էր վերագտնել կենդանի լեզվի և ձևական լեզվական համակարգի միջև կապը: Լեզվի արդիականացման կարևորագույն գործոններն էր **մյուսը հայրենասիրական-քաղաքական** էր, քանզի XIX դարի հայ հասարակութայնություններ փոխակերպվող (տրանսֆորմացվող) բնույթ և բովանդակում էր փոփոխությունների այն անձնայնությունը, որն ընթացքի մեջ միայն պետք է ձևստանար, դառնար կենսունակ: Հայոց ինքնութայն լուսավորական նախագծում լեզվի դերն այս առումով առանցքային էր, քանզի մինչլուսավորական ինքնությունը կառուցվել էր գրաբարով և դրանում արտացոլված **ազգի, հայրենիքի, պետության** վերաբերյալ պատկերացումները հասուն էին XIX դարում ապրող հային: Աշխարհաբարին անցումը ոչ միայն թույլ կտար ճանաչել այն, ինչ կար հնում, այլև կօգներ առավել լայն տարածում տալ նոր գաղափարներին, դրանք համարել հնի հետ: Իսկ վերջինս նույնպես պետք է թարգմանվեր, փոխադրվեր նոր իրականություն աշխարհաբարի միջոցով, որպեսզի հասուն լիներ հասարակության լայն շերտերին: Լեզվական փոխակերպումները հիմնավորող երրորդ գործոնը **բարոյագիտական** է: Թվում է՝ ի՞նչ կապ ունի բարոյագիտությունը լեզվի հետ, բայց այդ կապն անմիջական է: Լեզվի մեջ և լեզվի միջոցով են ձևավորվում բարոյական այն հրամայականները, որոնք և՛ արժևորում են առանձին անհատին, և՛ կարգավորում են հասարակության մեջ միջանձնային փոխհարաբերությունները: Անհատի և քաղաքացու, մարդու ու բնության, աշխարհի փոխհարաբերության արդյունքները վավերագրողն այն լեզուն է, որով մարդն այդ տիրույթներում երկխոսում է: Իսկ այդ երկխոսությունը հղկվում է

գեղարվեստական գրականություն, հրապարակախոսություն, թարգմանական գրականություն շնորհիվ, որոնք էլ ապահովում են հասարակությունը բարոյական արժեհամակարգը: Յին լեզուն խոսակցական լեզու չէր, իսկ այն լեզուն, որը երկխոսության լեզու էր՝ չէր հղկվում, չէր դառնում վարքը կարգավորող գործոն. չէր արտահայտվում գեղարվեստական գրականության մեջ: «Ազատություն», «ընտրություն», «իդեալ», «անհատ», «քաղաքացի», «հայրենիք»՝ **ահա այս հասկացություններն էր ավերելու նոր լեզվով պետք է ձևավորվեին նոր պատկերացումներ:** Յին լեզուն իր անմատչելիության պատճառով հասարակություն մեջ ստեղծել էր ճգնաժամ, քանզի այն, ինչը կրթում էր անհատին դարձել էր էլիտայի և ոչ զանգվածի մարդուն հասանելի գործիք՝ ձևավորելով մարդ, ով «չնայելով իւր նուրբ զգայարաններին...թշուառ կյանք է վարում: Իսկ քաղաքակիրթ մարդը...իւր օգտին է ծառայեցնում բնութեան ոյժերը և իշխում է նիւթի վրայ»¹⁸⁶: Քաղաքակիրթ մարդը ոչ միայն առաջընթացի ցուցիչներ, այլև իր արժեքներով և աշխարհայացքով՝ **ազատությունը, ընտրությունը, պատասխատավությունը** գիտակցող ազատանհատը, ով չէր կարող հանդուրժել քաղաքական ստրկությունը, իրավունքներին ոտնահարումը: Քաղաքակիրթ անհատի այս իդեալի կենսագործման բանալին ևս լեզուն էր, քանզի գրաբարյան գրականությունն ակամա արգելք էր համընդհանուր կրթության համար. այն հասուն էր միայն հոգևորականներին և մտավորականներին, իսկ, օրինակ, հայ պատանին, հարկադրված էր բավարարվել թուրքական կամ առավելագույնը ռուս գրականությանը: Վերոնշյալից գատ՝

¹⁸⁶ **Պալասանեան Ստ.**, Ազգային կրթություն, Փորձ. ազգային և գրական եռամսեայ հանդես, Առաջին տարի, Տփլիս, 1877, էջ 48:

գրականությունը ստեղծման հոգևորականներին
մենաշնորհը բնորոշվում էր **սխռլաստիկական-
աստվածաբանական** առանձնահատկությունները:
Թարգմանական գրականությունը ևս ենթակա էր
գտման. մեծ թիվ էին կազմում աստվածաբանական
բովանդակությունները՝ թարգմանությունները՝ ի
հակակշիռ **գոյաբանական-մարդաբանական**
գրականությունը: Յայլուսավորականներին **խնդիրն էր
լեզվի միջոցով հաղթահարել, ձևափոխել ու
վերաիմաստավորել** մինչև լուսավորական
ինքնությունը նույնականությունը այն տարրերը,
**որոնք կենսունակ չէին և ստեղծել նոր
ինքնությունը համարժեք նույնականություն**
**այնպիսի կաղապարներ, որոնք և՛ անհատական, և՛
ազգային մակարդակում կլինեին հիմնավոր ու
առաջընթաց ապահովող:** Լուսավորականներին գերակա
խնդիրն էր նախ լեզվական մեկ համակարգը
փոխակերպել մյուսով և, ապա, ստեղծել
համապատասխան գրականություն ու այն տարածել
հասարակություն մեջ, քանզի առանձին կիրթ
անհատները չէին կարող առաջընթաց ապահովել, եթե
ազգի մեծամասնությունը անհաղորդ մնար
տարածվող գաղափարներին: Բացի այդ, աշխարհաբարին
անցումը կենսական և վճռորոշ նշանակություն ունե
ր և անհրաժեշտություն էր առաջացնում
ճշգրտել լեզվական համակարգը, քանզի **բանավոր և
գրավոր լեզուները չէին համապատասխանում իրար:**
Յայ ժողովուրդն արդեն իսկ կիրառում էր
աշխարհաբարը որպես հաղորդակցման լեզու:
Այսպիսի իրադրությունում գրաբարը
հոգևորականություն և մտավորականներին կողմից
կիրառվող լեզվի կարգավիճակի էր արժանացել, իսկ
աշխարհաբարն առավելապես զանգվածային, չհղկված,
մեծամասնության մշակույթին բնորոշ
ժողովրդական լեզու էր, որը լայն տարածում ունեիր:

Թատերական ներկայացումները, ժողովրդական երգերն աշխարհաբարով էին և, թվում էր, միայն գրականություններն էր անմասն անդառնալի այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում բնականորեն, առանց պարտադրանքի: Այս գործոնները կարևոր հիմք էին լեզվի արդիականացման համար, որն արտահայտվեց երկու մոտեցումով՝ **արմատական** և **չափավոր**: **Արմատական** մոտեցումը պնդում էր գրաբարից աշխարհաբարին անցնելու անհրաժեշտությունը: Այս մոտեցմամբ էին առաջնորդվում **Խ. Աբովյանը**, **Մ. Նալբանդյանը**, **Ստ. Նազարյանցը**, **Գ. Օտյանը** և այլք: **Չափավոր** մոտեցումը ենթադրում էր աշխարհաբարի և գրաբարի հաշտեցում, լեզվական համակարգի կանոնակարգում: Այս մոտեցումը նկատելի էր ինչպես Մխիթարյան միաբանության ներկայացուցիչների հայացքներում, այնպես էլ կրոնական թևի կողմնակիցների և, որոշ վերապահումով, **Ս. Տյունևաբի** հայացքներում:

Չափավոր մոտեցում: Մխիթարյան միաբանության անդամները, ովքեր հատկապես աչքի էին ընկնում կրթական-մշակութային գործունեությամբ, լեզվի տեղն ու դերը վերագնահատելու և վերարժևորելու հարցում ունեին ուրույն մոտեցում, որն արտահայտվեց **չափավոր** դիրքորոշմամբ: Այն է՝ կիրարկելիություն տալ արևմտահայերենին, որը կազմված էր **և՛ գրաբարի**, **և՛ աշխարհաբարի** **լեզվական համակարգից**: Մինչ Աբովյանը՝ Մխիթարյաններից ոմանք գրում էին արևմտահայերենով, որի երկրորդ գրաբարի հենքի վրա աշխարհաբար լեզվի կիրառումն էր: Նախաձեռնելով «Բառգիրք Յայկազուեան Լեզվի» բառարանի ստեղծման աշխատանքները՝ Մխիթար Սեբաստացին հաշվի էր առել գրաբարի բոլոր

առանձնահատկությունները, իսկ աշխարհաբարի
 թերությունները համարում
 օտարաբանություններին կիրառումը: Բացի այդ՝
 տարբեր գավառներում ապրող մարդիկ նույն բան
 օգտագործում էին տարբեր իմաստով, ինչը
 դժվարություններ ստեղծում միասնական և եզրական
 համակարգ ունենալու տեսակետից¹⁸⁷: Ինչևէ, չնայած
 այս դժվարություններին, «Բառգիրք Յայկագուեան
 Լեզվի» բառարանի նպատակն էր կամրջել
 աշխարհաբարը գրաբարին՝ գրաբար թե աշխարհաբար
 երկընտրանքում սահմանավորելով հետևյալը՝
**գրաբարը հնարավոր է և պետք է պահպանել
 արդիականացման (աշխարհաբարի) միջոցով:**

Մխիթարյանները չհրաժարվեցին ո՛չ գրաբարից, ո՛չ
 աշխարհաբարից և փորձեցին հանդես գալ **չափավոր**
 մոտեցմամբ՝ միաժամանակ չանտեսելով ժամանակի
 պահանջները ու փորձելով գիտական և
 գեղարվեստական գրականությունը հասանելի
 դարձնել առավել թվով մարդկանց. համադրական այս
 մոտեցումն առավել ապես արտահայտվում էր
 արևմտահայերենով՝ աշխարհաբարի և գրաբարի
 խառնուրդով: Անշուշտ, գրաբարի և աշխարհաբարի
 հաշտեցման, համադրման այս մոտեցումը կարող էր
 առավել պտղաբեր լինել, քան կտրուկ անցումները,
 որոնք պատմական անցյալը ժառանգելու առումով
 հղի էին տարաբնույթ վտանգներով:

Չափավոր մոտեցումը բնորոշ էր նաև
 կրոնական թևի ներկայացուցիչներին, որոնցից
 կարելի է նշել **Յ. Տերոյեղիս**: Վերջինս
 քննադատում է լուսավորականություն երևույթն
 ինքնին՝ դրա առանձին դրսևորումները
 ենթարկելով խիստ և անզիջում
 քարկոծման: Մասնավորապես անդրադառնալով

¹⁸⁷ Տե՛ս **Ասոյան Թ.**, Վեներեթիկի Մխիթարյանները և աշխարհաբարի
 հարցերը, «Յայաստան» հրատ., Եր., 2001, էջ 71:

գրաբարից աշխարհաբարին անցնելու
անհրաժեշտությունը՝ Տերոյենցը խստորեն
քննադատում է լուսավորականների՝ նրանց այդ
նախաձեռնությունը համարելով անընդունելի:
Յավատը նորոգողները, ըստ նրա, փորձում են
նորոգել նաև լեզուն¹⁸⁸: Այս տեսակետի
ներկայացուցիչները համարում են, որ լեզուն և
միտքը, լինելով փոխկապակցված, անմիջականորեն
անդրադառնում են ազգային ինքնություն
կառուցվածքի վրա և լեզվի փոփոխությունն
անխուսափելիորեն հանգեցնում է
աշխարհայացքային փոփոխությունների, ինչը
բացասական է ազդում ազգային ինքնությունը
պահպանելու առումով: Ինչպես նշում է
լեզվաբաններից մեկը. «Մի ազգ, մոռանալով իր
մայրենի լեզուն, կորցնում է իր բնական
միջոցներից մեկը, ուրեմն կպակասի, կնուազի նորա
բնական զարգացման, նորա անհատական
յատկությունների, նորա ինքնուրոյնութան,
ուրեմն նորա հասարակաց օգտի համար
արդիւնաբերութեան ոյժը»¹⁸⁹: Գրաբարի և
աշխարհաբարի հակամարտությունը ինչ-որ չափով
ինչպես կրոնի, այնպես էլ լեզվի պարագայում
լուսավորականների և եկեղեցականների տեղի և
դերի խնդրին էր առնչվում: Պարբերական մամուլը,
աշխարհաբարով գրվող գրականությունը
հսկայական ազդեցություն ունեին լայն
զանգվածների շրջանում: Եկեղեցական թևի
ներկայացուցիչները հասարակությանը
ահազանգում էին գերծ մնալ լուսավորական
գրականությունից և կարդալ միայն այնպիսի

¹⁸⁸ Տե՛ս **Տերոյենց 3.**, Բանադատ: Մատթեոսի Սրբազան
Կաթողիկոսի Ամենայն Յայնոց Բարի մարդ Եւ Բարի քրիստոնեայ
անուն գրքին դէմ բողոքականներուն հանած նույնանուն
գրքին վրայ քննութիւն, Կօստանդնուպօլիս: 1860, էջ 60:
¹⁸⁹ «Մշակ», Թիֆլիս, 1872, թիւ 11:

գրականություն, որն ունի բարոյախրատական բնույթ ու հղկում է հոգին¹⁹⁰: Յատկանշական է կրոնական թևի ներկայացուցիչների այն դիտարկումը, որ կարելի է ստեղծել գրականություն գրաբարով և դրանք հասուն դարձնել ժողովրդին: Լուսավորականներն այս փաստարկը չէին ընդունում՝ նշելով, որ այդ գրքերը կմնան գրադարակին և ոչ ավելի: **Գրաբարը**

պահպանելու հաջորդ փաստարկն այն էր, որ կրոնական թևի ներկայացուցիչներն աշխարհաբարը համարում էին ռամիկների լեզու և բնականաբար կարծում էին, որ ընդունելով աշխարհաբարը որպես գրականության լեզու՝ մշակույթը և սիվիլիզացիան դառնալու են ռամկական: Մսեր մագիստրոսի այս դիտարկումը, սակայն, չի ընդունում Պատկանյանը, նշելով՝ Լուսավորության և եվրոպական քաղաքակրթության մուտքը հայ ազգի մեջ կարող է և պետք է լինի միայն աշխարհաբարի միջոցով¹⁹¹: Իսկ այդ դեպքում մշակույթը չի կարող ունենալ ցածր մակարդակ, քանզի համաշխարհային գրականության մուտքը հայ հասարակության մեջ միայն կարող է առաջընթացի հիմք դառնալ: Վերոնշյալից զատ՝ լեզվի հիմնահարցի վերաբերյալ Լուսավորականների և կրոնական գաղափարախոսության ներկայացուցիչների հակադիր փաստարկները, առավել խորը հիմք ունենին՝ շղարշված քաղաքական աստառով: Խնդիրը հասարակության մեջ տիրապետող դեր ունենալն էր: Արդար լինելու համար, սակայն, պետք է նկատել, որ այդ իշխանությանը հատկապես ձգտում էին կրոնական թևի ներկայացուցիչները, իսկ Լուսավորականների հիմնական շարժառիթը ազգային առաջընթացն էր: Բացի այդ, եվրոպական արդեն

¹⁹⁰ Կոնդակ Պատրիարքական, «Երեւակ», թիվ 37, 1864, էջ 291:
¹⁹¹ Տե՛ս **Պատկանյան Ռ.**, Երկերի ժողովածու, Յատր Յինգերորդ, Յայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1968, էջ 189:

ի ս կ ս տեղ ծ ել էր հասարակ ու թյ ու ն , որը անկախ էր հոգևորականների իշխան ու թյ ու ն ից , ի ս կ հայ հասարակ ու թյ ու նը շարունակ ու մ էր մնալ կրոնական և հոգևորական ու թյ ան վերահսկող ու թյ անը ենթարկել դպրոցն ու դաստիարակ ու թյ ու նը : Յետևապես , հայ լ ու ս ա վ ո թ յ ա ն ն եր ն աշխարհաբարի դիրքերը ամրապնդելով՝ կոռու էին դարձնում նոր ինքն ու թյ ան հիմքերը և ստեղծում էին ընդարձակ վող շրջան , որն օրեցօր մեծանում էր ի հաշիվ ժողովրդի ն հասկանալի լեզվի :

Կրոնական հարաց ու յ ց ի կողմնակիցները , որոնք հանդես էին գալիս մինչև լ ու ս ա վ ո թ յ ա ն ինքն ու թյ ան պաշտպան ու թյ ամբ , ընդունելի չէին համարում լեզվական փոխակերպումները և չէին տեսնում դրա անհրաժեշտ ու թյ ու նը , քանզի լեզվական հարաց ու յ ց ի փոփոխ ու թյ ամբ արդեն ի ս կ մեծ հարված էր հասցվում մինչև լ ու ս ա վ ո թ յ ա ն ինքն ու թյ անը և այն պահպանողներին՝ հոգևոր դասին : Ասել , թե կրոնական թևի փաստարկները սին են , չի կարելի : Դրանք արժեքավոր են հատկապես անցյալի և ներկայի կապը պահպանել ու տեսանկյ ու ն ից , սակայն իրենց ամբողջական բովանդակ ու թյ ան մեջ արգելակ ու մ են նոր ինքն ու թյ ան ստեղծ ու մը և լ ու ս ա վ ո թ յ ա ն գաղափարների տարած ու մը : **Ս. Տյ ու ս աբը** , օրինակ , հետազոտման առարկա է դարձնում աշխարհաբար լեզվի թեր ու թյ ու ն ները՝ պահանջելով ստեղծել աշխարհաբար լեզվի կանոնադր ու թյ ու ն , այլապես գրաբարից անց ու մն աշխարհաբարի ն դատապարտված է վերածվել ու հետընթացի : Նա իրավացիորեն նշ ու մ է . « ... ամեն ոք իւր անձնական ճաշակին հետեւելով լեզուին մեծածաւալ դաշտին մեջ չքնադ մտաւորական ծաղիկներ սփռեց աստևանդ , առանց փունջ մը կազմել ու ներդաշնակ ու թեամբ

մի աւորեալ»¹⁹²: Տյուրաբն այսպիսով շեշտում է
 Լեզվի զարգացման շրջափոփոցի անաշխի՛
 գրաբարից աշխարհաբարին ոչ սահուն անցումը: Նավ,
 որը չունէր նավավար, ուրեմն և զարգանում էր
 անկանոն: Այլ էր աշխարհաբարի կարգավիճակը
 որպէս առօրյա խոսակցական Լեզու և Լրիվ այլ էր
 վերջինիս կարգավիճակը որպէս գրի Լեզու: Իսկ այդ
 առումով այն հղկելու և համակարգելու
 անհրաժեշտությունն ունէր, քանի որ իր
 կառուցվածքով պարզ էր և դյուրին, իսկ
 քերականորեն այն պետք է լինէր համակարգված:
 Ուրեմն, բավ չէր միայն փոխակերպել Լեզվական
 համակարգը, այլ և անհրաժեշտ էր այն կանոնավորել,
 դարձնել կուն և հստակ:

Վերոնշյալից զատ՝ գրաբարից
 աշխարհաբարին անցումն օրինաչափորեն որոշակի
 փոփոխությունների էր ենթարկում ազգային
 ինքնության կառուցվածքը, ինչն ակնհայտ էր
 արդեն XX դարի սկզբում: Այդ համատեքստում
 Լեզվական փոխակերպումները ենթակա էին կոշտ
 քննադատությունների: **Յ. Սըվաճյանը**, օրինակ,
 նշում է. «Անցյալը մեռավ, նախնիք ալ մեռան,
 դժբախտաբար անոնց խոսած Լեզուն ալ մեռավ,
 չհուսանք, որ մեռելը կենդանանա: Աշխարհիս վրա,
 մինչև այսօր, ոչ մի մարդ մը տեսվեցավ, որ մեռնելեն
 ետև բնական կերպով հարությունն առնէ, ոչ մեռյալ
 Լեզումը նմանապէս, որ կենդանանա: Լեզումը պետք է
 անշուշտ ազգի մը, անկարելի է և գրաբարը մեր ազգին
 Լեզու ընել, ուզենք չուզենք աշխարհաբարն է իր
 Լեզուն և պիտի ըլլա»¹⁹³: Եվ իրոք, գրաբարից
 աշխարհաբարին անցումը, թեև ժամանակաշրջանի
 պահանջն էր, սակայն այն նաև որոշակի խնդիրներ

¹⁹² **Տիւրաբն Ս.**, Աշխարհաբառ հայ Լեզուն, տպ. Յովսէփայ Գավաթեան, Կ.Պօլիս, 1880, էջ 11:
¹⁹³ **Սըվաճյան Յ.**, Յրապարակախոսությունն, Յայ պետիրատ, Եր., 1960, էջ 474:

հարուցեց, ինչը փաստում է նաև Յ. Ասատրյանը. «...վերածնունթեան շնորհիւ, ասպարէզից վտարւած գրաբարի հետ, հետրի ստեղծած արժեքներն էլ դարձան, գրեթէ, մեռեալ տառ»¹⁹⁴:

